



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սարգս

1527

Թ Ի Ֆ Լ Ի Ս


1892

1/46

2013

6 NOV 2009





Խ Ր Ի Մ Ե Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ

Սերգեյ
1528
աթ:


Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

458

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Պատկերով)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Կովկասեան Գլխաւոր Կառավարչապետի ապարան

1892



I

Վանի Այգեատան կոչված արուարձանում, գլխաւոր փո-
ղոցներէց մինի վրա, շատ հին ժամանակներից սկսած մինչև
այժմ էլ կայ մի տուն, որ կոչվում է Կրքմցոց տուն: Դա մի
յարկանի, աղիւսաչէն տուն է, փոքրիկ վանդակապատ պատու-
հաններով: Նրա առջևից հոսում է փոքրիկ առուակը և մտունդ
տալիս շաբրով տնկած ուռենիներին:

Ահա այդ տան մէջ է ծնվել, մեծացել Մկրտիչ Խրիմե-
եան, իր մանկութեան անհոգ օրերը անցկացնելով գեղեցիկ
ուռենիների տակ, կարկաչաճոս առուակի մօտ:

Կրքմցոց ընտանիքը յարգված ընտանիք էր Այգեատանում,
մանաւանդ Խրիմեանի հայրը և հօրեղբայրը: Հօրեղբայրը, որի
անունը խաչատուր էր, մի հնոգքով վարսիտ էր, գործում էր կը-
տա և հագուստի ուրիշ կտորներ. իսկ հայրը պարապում էր
առևտուրով, վաճառահանելով Վանի զանազան գործուածներ:
Նա իր ապրանքը տանում էր գլխաւորապէս Կրքիմ կամ Խրիմ,
ուր յաճախ գնում գալիս էր. և հէնց այդ պատճառով նրանց ըն-
տանիքը կոչվեց Կրքմցոց կամ Խրքմցոց տուն,—որտեղից և
դուրս է եկել Խրիմեան ազգամուծը:

Մկրտիչ Խրիմեան ծնվել է 1820 թւին, ապրիլի 4-ին, և
մկրտվել է իրանց թաղի ս. Աստուածածին եկեղեցում: Մկրտիչ
հէնց նրա մկրտութեան անունն է: Նրա ծննդեան տարեթիւը,
ինչ ասել կուզի, քահանան չէ արձանագրել եկեղեցու մատեա-
նում: Ո՞վ էր տուել այն ժամանակ այդ տեսակ մատեան
և որ քահանան էր այն ժամանակ մտածում այդ տեսակ բա-
ների մասին: Խրիմեանի ծննդեան տարեթիւը արձանագրել է



1527-2013
41/71 | 7.8. 1520
41

նրա հօրեղբայրը, որը՝ հին սովորութեան համեմատ՝ սասնը ե-
զած հին Աստուածաշունչի կամ ձեռագիր Աւետարանի լուսանշարի
վրա կը գրէր երկխաչի ծննդեան տարին և օրը:

Երեսնական թւականներին Վանում ուսումնարաններ չը
կային: Գրել-կարդալը սովորեցնում էին տէրտէրը կամ տիրա-
ցուն: Փոքրիկ Մկրտիչը տէրտէրի մօտ էլ չը գնաց: Նա իր սկզբը-
նական ուսումը ստացաւ հէնց տանը, հօրեղբայր Խաչատուրի մօտ,
որը ոչ թէ միայն վարպետ էր, այլ և վարժապետ, և իր
մասն թե իրն արհեստի հետ միասին սովորեցնում էր կարդալ,
բարեանգիր գրել, փոխ ասել, շարական երգել:

Խաչատուրը հազարգլխտ մարդկերանցից մինն էր: Նա, ճշմա-
րէտ է, ուսում չէր առել, բայց ի բնէ շատ խելօք և ընթերցասէր
էր. կարդացել էր բոլոր եկեղեցական գրքերը և անգիր գիտէր
ամբողջ ժամասացութիւնը: Նա մի և նոյն ժամանակ վերին աս-
տիճանի առաքինի, բարեսիրտ և ճշմարտախօս անձն էր:

Անա այդ առաքինի և բարեսիրտ մարդն եղաւ փոքրիկ
Մկրտչի վարժապետը և դաստիարակը: Անդրակ լինելով, ուրեմն
և դաւակ շունենալով, նա իր ամբողջ ուշ ու միտքը դարձրեց
Մկրտչի վրա, որը մի զգայուն, կրակոտ և ընդունակ երեխայ էր,
որին հօրեղբայրը սիրում էր իր աչքի լոյսի պէս: Բարի հօրեղ-
բայրը մանկութեան օրերից սովորեցրեց Մկրտչին՝ սիրել ընկե-
րօջը, կարեկցել թշուառներին, ինամեղ հիւանդներին, և հետ-
մնալ ամեն տեսակ վատ բաներից:

Տան դուռը գալիս էր աղքատ:

— Մկրտիչ, աղքատին հաց, կերակուր է պէտք, ասում էր
հօրեղբայրը:

Եւ Մկրտիչը մեծ ուրախութեամբ ուտեցնում, խմեցնում էր:
Գալիս էր կոյր աշուղը:

— Մկրտիչ, աշուղին փայ պէտք է տալ:

Եւ Մկրտիչը մէկի տեղ երկու էր տալիս, վատի փոխարէն
լաւն էր տալիս:

Հօրեղբայրը բռնում էր երեխայի ձեռքից, առաւօտ երկկոյ

էկեղեցի էր տանում, սովորեցնում էր փոխ ասել, երգել, պատ-
մում էր առաքեալների և սուրբերի կեանքը, ողևորում էր նրան
Սրբազան պատմութեան հերոսների քաջագործութիւններով:

Օրինակելի երեխայ դարձաւ Մկրտիչը: Եւ հարեանները միշտ
նրան օրինակ էին բերում, ասելով իրանց երեխաներին.

— Տեսնում էք, Արթուր Մկրտչին, նրա նման տղայ եղէք:

Տեսլին դաստիարակութեան պակասը լրացրեց Այգեստա-
նի զեղեցիկ ընտրիւնը: Ընկեր տղաների հետ Մկրտիչը ամբողջ
օրերով պտտում էր Այգեստանի զեղեցիկ տեղերը, և այդտեղ՝
կարկաչահոտ աղբիւրների կողքին՝ ծառերի հովանու տակ, ազատ
ընտրեան մէջ նա սովորում էր ազատ զգալ, ազատ մտածել...

Հօրեղբայրն առնում էր փոքրիկ Մկրտչի համար դառներ և
զեղեցիկ խոյր. աշխոյժ երեխան ամբողջ ժամերով՝ իր անխօս
ընկերների հետ՝ պտտում էր կանաչ դաշտերը: Անն այդ օ-
րերից Մկրտիչը սովորեց սիրել կենդանիներին: Պատմում են, որ
Խրիմեան իր ամբողջ կեանքի ընթացքում չէր կարողանում ներ-
կայ լինել, երբ մորթում էին գառ կամ ոչխար: Նա չէ կարողա-
նում առձուստիրտ կերպով տեսնել անխօս կենդանիների արիւնը...

Հօրեղբայրը սովորեցնում էր նրան՝ աշխատել, անընդհատ
աշխատել: Տանը՝ հօրեղբոր մօտ՝ սովորում էր կտաւագոր-
ծութիւն, իսկ դուրսը, Վանի զեղեցիկ այգիներում, իր մեծ
եղբոր՝ Մարխանի զեկալարութեան ներքոյ, Մկրտիչը սովորում
էր ծառեր տնկել, պատուատուել, որթ կտալել, զինի շինել: Եւ
այգեպանի պարագմունքը Խրիմեանի ամենասիրած պարագմունք-
ներից մինն է եղել միշտ:

Անա թէ ինչ էր գրում ինքը Խրիմեան, արդէն ծերացած
հասակում, իր հօրեղբայր Խաչատուրի յիշատակին:

«Յիսուն տարի կը լինի, որ մեր աշխարհէն յաւի-
տենական աշխարհ գնացեր ես. այլ քո անուն և յիշատակ
մանուկ Մկրտչի հոգւոյն և սրտին մէջ անեղձ պահել եմ:
Չեմ մոռնար, այլ կը յիշեմ մանկութեանս դարնան քաղցր
օրերը, երբ միմիայն մանուկ Մկրտիչ քո սիրոյ ծաղիկն

էր: Սորա համար ես մոռցած էի ծնողք և բոլոր Խրիմեանք գերդաստանի մերձաւորներ, զի դու էիր ինձ հայր, մայր, դաստիարակ, վարժապետ, ինամածու և այլն: Գու մուռար, դեռ ողջ էին ծնողքս և երիցագոյն եղբայրս. բայց ես յայնժամ զգացի, թէ՛ սիրոյ և դաստիարակութեան գրկէն որբացած եմ: Ոչինչ մեծ ժառանգութիւն աշխարհիս հարստութենէն չը թողիր քո հոգեհատոր մանուկ Մկրտչին. ոչ ոսկի, ոչ արծաթ. այլ մի Աստուածաշունչ և մեր սուրբ նախնեաց մի քանի մատեաններ, դորս յաճախ կարդալ տալով՝ ընտանի լեզուով կը բացատրէիր ինձ: Այլ քան զամեն աւելի գործնական օրինակովք Աւետարանի գլխաւորութեան հոգին թողիր ինձ ժառանգութիւն: Արթուն աչքով կը հսկէիր, և ոչ փոքրիկ պակասութիւնս կը ներէիր դու» *:

Վրա հասաւ պատանեկութիւնը: Կրակոտ, հետաքրքիր բնաւորութեան համար նեղ էր թւում Այդեստանը: Եւ պատանի Մկրտչիչը յաճախ երթնելու էր հարեան գիւղերը, վանքերը, ուխտատեղիները: Վասպուրականի ամեն մի անկիւնը լի են վանքերով կամ վանքերի աւերակներով: Պատանին մի առանձին բաւականութիւն էր զգում, երբ օրերով ճանապարհորդում էր շըրջակայքում, ուսումնասիրելով այն ամենը, ինչ որ սպասուում էր ճանապարհին: Գեռ պատանի հասակում Մկրտչիչը լաւ ծանօթ էր ոչ թէ միայն Այդեստանին շատ մօտիկ տեղերին, այլ և աւելի հեռու վանքերին և ուխտատեղիներին: Նա յաճախ գնում էր Վարազ, Հողուց վանքը, Աղթամար, Լիւմ, Կտուց:

Աղթամար, Լիւմ և Կտուց անապատները, որոնք գտնվում են Վանի ծովակի մէջ, այն ժամանակ յայտնի էին իբրև վանական նշանաւոր կենտրոններ՝ իրանց միարանութիւններով, որոնց մէջ կային եկեղեցական գրականութեան քաջ ծանօթ վարդապետներ: Խրիմեան սիրով գնում էր դրանց մօտ: Մի առժամանակ

* «Խաչի ճառ», 1887 թ. Կ. Պօլիս:

նա մնաց Լիւմ և Կտուց անապատներում, աշակերտեց այդտեղ, և ստացաւ, թէ և միակողմանի, բայց հարուստ մտաւոր պաշար, մօտիկ ծանօթանալով եկեղեցական գրականութեան և գրաբար լեզուին:

Միայնակեաց վանականների կեանքը, ինչպէս երևում է, խոր տպաւորութիւն թողեց Խրիմեանի վրա: Նա մի տեսակ յարգանքով էր վերաբերվում դէպի այն կուսակրօն վարդապետները, որոնք թողած աշխարհ, տուն-տեղ, ազգականներ և բարեկամներ, առանձնացել էին վանքերի մութ խուցերը, և գիշեր ցերեկ՝ ամենայն անձնուրացութեամբ, աղօթքներ էին կարդում և շարականներ երգում, որ բաց անեն «արքայութեան դռները մեզաւորների առաջ»:

Ահա այդպիսիներէր մինի կեանքն էր երգում՝ շատ տարիներ յետոյ Խրիմեան, այսպիսի խօսքերով.

«Ոչ միայն էր ընչատեսաց, այլ և չը ինդրէր ըղիարևորան, Չըրկէր զանձն 'ի պիտոյից, տայր ընկերին կարօտելոյ»:

Ո՞վ գիտէ. դուցէ այդ ժամանակից արդէն յըացաւ երիտասարդ Մկրտչի մէջ վարդապետ լինելու ձգտումը, բայց այնպիսի վարդապետ, որ «Չըրկէր զանձն 'ի պիտոյից, տայր ընկերին կարօտելոյ»:

Քսան, քսան հինգ տարեկան հասակում արդէն, Խրիմեան՝ իր տոկուն աշխատասիրութեամբ, ինքնակրթութեան և ուսումնասիր ընաւորութեան հորձիւ՝ աւելի բան գիտէր, քան թէ կարելի էր իմանալ՝ առանց դպրոց մտած լինելու, առանց կանօնաւոր ուսման: Նա լաւ ծանօթ էր եկեղեցական մատենագրութեան և հայոց հին գրականութեան, տիրապետում էր գրաբար լեզուին, քաջ ծանօթ էր Հայաստանի աշխարհագրութեան, իսկ Վասպուրակայնը—այնպէս էր ուսումնասիրել, ինչպէս իր հինգ մասները:

Սակայն այդ բոլորը բաւականութիւն չէր տալիս կրակոտ երիտասարդին: Նա ուզում էր աւելի իմանալ, աւելի սովորել:

Նրա մէջ արթնացել էին այնպիսի զգացմունքներ, որոնք նրան հանգիստ չէին տալիս, երբ նա տեսնում էր իր շուրջը

խաւար և թշուառութիւն: Մանկութիւնից արդէն նա դաստիարակված էր իբրև լաւ քրիստոնեայ, քրիստոնէական ըզգացմունքները՝ նրան դրդում էին օգնութիւն հասնել հազարաւոր թշուառներին: Դակ վասպուրականի հակայական աւերակները, ուր երիտասարդը օրերով թախառում էր մտամուրը և զգացված, և դրա հետ միասին ժողովրդի աղքատ, ընկած, հարստահարված վիճակը՝ վառել էին երիտասարդի մէջ հայրենասիրական այնպիսի զգացմունքներ, որոնք նրան հանգիստ չէին տալիս:

Վանը՝ նրան նեղ էր թվում. նա ուզում էր դուրս գալ, գնալ ուրիշ տեղեր և տեսնել թէ ինչ կայ, ինչ են մտածում...

Սակայն ընտանիքը հեշտութեամբ չէր ուզում բաց թողնել նրան: Մկրտչի մայրը, որ իր աչքի լոյսի պէս սիրում էր որդուն, մի փափագ ունէր.

— Մէկ իմ Մկրտչի կանաչ-կարմիրը կապեմ, հարս բերեմ ատենս. թոռս էլ տեսնեմ, նրանից յետոյ մեռնեմ էլ՝ սրտումս դարդ չի մնայ, — ասում էր կրքմոցոյ պառուրը:

Մեծ եղբայր Մարիանը միացաւ մօր հետ, և երկուսը միասին սկսեցին համոզել Մկրտչին, որ պսակվի: Մկրտիչը երկար չը զիմադրեց: Նրան նշանեցին և պսակեցին վանեցի Յովհաննէս Անիկեանի աղջկայ հետ, որից խրիմեան ունեցաւ մի աղջիկ, Թագուհի անունով:

Ամուսնանալուց յետոյ՝ խրիմեան երկար չը մնաց վանում:

II

Խրիմեանի աշակերտներից մինը պատմում է, որ երիտասարդ Մկրտչի առաջին անգամ վանից հեռանալու պատճառը զինուորադրութիւնն էր *:

* «Արևելք» 1885 թ. Կ. Պօլիս:

և բոլոր իր երկրացիները, չէր ուզում, ուստի ստիպվեց դիմել միակ միջոցին— փախչել:

Այդ փախուստը բաց արաւ երիտասարդի առաջ մի նոր աշխարհ: Թողնելով հայրական տունը, նա ձեռք առաւ ճանապարհորդական գաւազանը. դուրս եկաւ վասպուրականից, անցաւ թիւրք-պարսկական սահմանը և մտաւ Պարսկաստան: Նոր տեղեր, նոր տպագրութիւններ: Խրիմեան տեսաւ Սալմաստ, Խոյ, Ուրմիա. անցաւ Նրասխ գետը, թախառեց Մայր-Արաքսի ափերով, «Հին հին դարուց յիշատակ պեկաց մէջը պտրելով», տեսաւ Խորենացու երգած Գողթան գաւառը, մտաւ Հին-Նախիջևան, կտրեց Արարատեան դաշտը, և երևանից գնաց Էջմիածին.

«Ի տաճարն Աստուածակերտ, ի մայրըն մեր Ամենածին,

Ի վե՛ և գերապանծ աթոռ հայոց Լուսաւորչին» *:

Համբուրեց Մայր-Աթոռի սրբութիւնները, որոնց յիշելով, նա, անկասկած, տապակիւմ էր վասպուրականում, ապա անցաւ Շիրակ, տեսաւ Անին.

«Ուր նստեմ ես ի վերայ-աւերակացն հորաբլուր».

և աւերակների վրա նստած երգեց այսպէս.

«Այլ ես՝ արդ ձայն արկանեմ առ ձեզ որդիք իմ տարազիր, Ո՛ւր էք արդ, ի Լեհաստան, թէ ի Մաճառս ցիր-ցան եղեալ, Եւ Գանուրի գետով նըստեալ, յիշէք զԱնին և զԱխուրեան, Որ մին զկաթ և միւսն ըղջուր ձեզ արուցին առատ-առատ. Յուշ լիցի ձեզ, յուշ լիցի երկիր ծննդեան և հայրենեաց. փութացէ՛ք, փութացէ՛ք, յայց նըշխարաց այդ մնացելոց...»

Տեսնելով և ուսումնասիրելով Ռուսահայաստանի պատմական բոլոր նշանաւոր տեղերը, զգացված սրտով խրիմեան անցաւ գնաց Կ. Պօլիս:

Սուլթանների մայրաքաղաքում խրիմեանի համար բացվեց մի նոր կեանք, մի բոլորովին անսովոր աշխարհ:

Կ. Պօլսում այդ ժամանակ նորեկ վանեցին բոլորովին ծա-

* «Հրաւիրակ Արարատեան», 1850 թ. Կ. Պօլիս:

նօթներ չունէր, բայց գուցէ մի քանի վանեցի վաճառականներէց և Վասպուրականցի համալսերից: Սակայն նա իր տոկունութեամբ և անընկճելի բնաւորութեամբ կարճ միջոցում իր առջև ճանապարհ բաց արաւ: Ամենից առաջ նա աշխատեց որ և է պարագմունք գտնել, որովհետեւ ասորուստի ուրիշ միջոց չունէր: Նա աղքատ մարդ էր:

Առանց ժամանակ կորցնելու, նա սկսեց մի կողմից սովորել և մտաւոր նոր պաշար ձեռք բերել, իսկ միւս կողմից աշխատում էր ծանօթութիւններ կապել Կ. Պօլսի հայերի զանազան շրջանների հետ: Խրիմեանի մէջ այդ միջոցում ցանկութիւն առաջ եկաւ մի առ ժամանակ Եւրօպա գնալ, բարձրագոյն կրթութիւն ստանալու համար, բայց չքաւորութեան պատճառով այդ միտքը մնաց անիրագործելի: «Յանկացայ ես, այլ բախտն ինձ չաջոցեց»*,— ահա թէ ինչ էր գրում ինքն Խրիմեան 25 տարուց յետոյ իր այդ մտադրութեան մասին: Միայն շատ ուշ, ձեռութեան հասակում Խրիմեանին աջօղկեց գնալ Եւրօպա, տեսնել քաղաքակրթութեան կենտրոնը, այն էլ իբրև հայ ժողովրդի թշուառութիւնների սգաւոր ներկայացուցիչ:

Կարճ միջոց անցած, Խրիմեան կարողացաւ մուտք գործել Կ. Պօլսի հարուստ և բարձր դիրք ունեցող մի քանի ընտանիքներ: Նա իր մտաւոր զարգացմամբ այնքան առաջ էր գնացել, որ նրան ընդունում էին մասնաւոր տներում իբրև տնային վարժապետ, և մինչև անգամ Կ. Պօլսի այն ժամանակվայ հայկական նշանաւոր թաղի՝ Խաս-ղիւղի նորաբաց օրիորդական դպրոցի ուսուցիչ կարգվեց:

Այդ օրից արդէն ասպարէզը բացվեց:

Եւանդոտ, բարձրահասակ, արծուաքիթ, խոշոր աչքերով, զեղեցիկաղէմ երիտասարդը, իր գրաւիչ և համեստ բնաւորութեան շնորհով կարողացաւ գտնել բարեկամների լայն շրջան, ուր նրան ընդունում էին սիրով և յարգանքով:

Իսկ երբ 1850 թւին Կ. Պօլսում լոյս տեսաւ նրա նշանա-

* «Սիրաբ և Սամուէլ»:

ւոր «Հրաւիրակ Արարատեան» բանաստեղծական գրուածքը,— երիտասարդ հեղինակի տաղանդը յայտնի եղաւ ոչ թէ միայն բարեկամների շրջանում, այլ ստացաւ հասարակական հռչակ:

Այնելով ճանապարհորդութիւնների սիրահար, և մի և նոյն ժամանակ փախազ ունենալով տեսնել քրիստոնէութեան օրօրօցը՝ Երուսաղէմը, Խրիմեան մի առ ժամանակ հեռացաւ Կ. Պօլսից և գնաց սուրբ տեղերը, ուր Քրիստոս առաջին անգամ քարոզել էր իր փրկարար վարդապետութիւնը: Այդ ճանապարհորդութեան արդիւնքն եղաւ նրա «Հրաւիրակ Աւետեաց երկրին», որը նա տպագրեց Կ. Պօլսում 1851 թւին:

Հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել այդ «Հրաւիրակների» մասին, որովհետեւ դրանք արտայայտում են Խրիմեանի ոգու երկու բնաւորոշ գծերը:

«Հրաւիրակ Աւետեաց երկրին», ինչպէս յիշեցինք, արդիւնք է այն ճանապարհորդութեան, որ հեղինակը արեց դէպի Երուսաղէմ: Այնելով զգայուն քրիստոնեայ, և տեսնելով այն վայրերը, որոնց հետ կապված են քրիստոնէութեան շատ տխուր և փայլուն էջերը, ուր ոգի են առել և ամբողջ աշխարհ տարածվել Քրիստոսի անմահ վարդապետութիւնները, և ուր վերջապէս Մեծ Յեղատիտիչը՝ իր զաղափարների համար խաչ բարձրացաւ, տեսնելով այդ բոլոր տեղերը, ասում ենք, Խրիմեան, ի հարկէ, չէր կարող չը ոգևորվել և չը յուզվել: Եւ նա մեծ ողբերութեամբ երգում է քրիստոնէութեան ս. վայրերը և Քրիստոսի մեծ գործերը իր այդ գրքում:

«Հրաւիրակ Արարատեան» արդիւնք է այն ճանապարհորդութեան, որ նա արաւ Արարատեան երկրում և Վասպուրականում: Գիմելով իր սիրելի հայ մանուկներին, հեղինակն իր հետ դէպի պատմութեան խորքերն է տանում ընթերցողին, բայց է առնում նրա առաջ Գրախտի կեանքը, պատմում է մարդկութեան առաջին օրերը, հայոց ազգի սկզբնաւորութիւնը, և ապա հանդէսով Մասիսի ստորոտում, գովարանում է Նոյի և Թորգոմի ժամանակները այսպիսի խօսքերով:

«Վճշ, քանի քաղցր էր նոցին կենցաղ երկրիս Այրարատու,
Յորժամ ոչ էր բռնաւոր, և հարկահան անազորոյն».

Ոչ կըռփուան անաւազին և աղաղակ զըրկեցելոյն,

Ոչ իշխան, ոչ իշխեցեալ կամ թագաւոր և ժողովուրդ.

Ոչ զօր, ոչ պատերազմ և խաղճարար աշխարհաւեր,

Ոչ ի սուր ձուէր երկաթ, այլ ի մանգաղ և գերանդի

Լոկ ի պէտս երկրագործին և ոչ մարդոյն մարդախոշոշ:

Ոչ ըզբրտանց վաստակ ուրումն յսփշտակէր ոմն անիրաւ...

Ոչ ի դահայս բազմէր ոմն ի յապարանս փաղիլինուփայլ

Ոմն ի դաշտ արեակէզ մինչ ցերեկուն խարչէր քըրտամբք»:

Ապա պատեցնում է ընթերցողին Էջմիածնի նշանաւոր վայրերը, ամենում է դէպի Աւարայրի դաշտը, խօսեցնում է Մեարտի և Վարդանի ուրուականներին, ապա անցնում է Վասպուրական, և այնտեղից Տարօն *, ուր ընթերցողի առաջն է բերում Լուսաւորչի, Տրդատի, Սահակի գործերը, և վերջացնում է իր խօսքը՝ ողբալով, որ ստիպված է հեռու Բիւզանդիոնում պանդխտութեան մէջ երգել իր կարօտ հայրենիքը.

«Արարատեան Հրաւիրակը» միմիայն հին դարերի քաջագործութիւնները չէ երգում, և այժմեան աւերակները ողբալով չէ բաւականանում: Փառահեղ աւերակները նկարագրելուց յետոյ՝ անմիջապէս նա ոգևորվում է շինականի խաղաղ, պարզ՝ կեանքի նկարագրութեամբ. թագաւորի դայիսօնից յետոյ՝ երգում է հովի

* «Հրաւիրակ Արարատեանի» առաջին՝ այն է 1850 թւի տպագրութիւնը բազմապատ է չորս նուագից կամ զլիսից: Քսան և հինգ տարուց յետոյ, այն է 1876 թւին, երկրորդ տպագրութիւնն անելիս՝ խորհման աւելացրել է հինգերորդ զուլիս, այն է «Տարօնը»: Գրքին կցած մի առաջարանի մէջ հեղինակը դիմելով ընթերցողներին՝ ասում է. «Չը գիտեմ արդեօք կարողացայ այս հինգերորդ զուլիսը նոյն խանգով, նոյն սգով և նոյն սրտով գրել, ինչպէս գրել եմ 25 տարի առաջ, երիտասարդ հասակում»: Համարձակ կարելի է ասել, որ խորհմանի բանաստեղծական ոգին այդ գրուածքում 25 տարուայ մէջ փոխանակ թուլանալու, աւելի էլ վաւճիւր և զգայուն է դարձել:

սրինգը, պատերազմի հերոսներին զովաբանելուց յետոյ՝ աւելի էլ մեծ աշխոյժով երգում է գեղջուկի հալալ աշխատանքը. անցեալի հետ երգում է ներկան, դերեզմանների ուրուականներին խօսեցնելուց յետոյ՝ խօսեցնում է կենդանի մարդկանց... Եւ այդպիսով դառն լիշողութիւնների հետ միասին՝ ներշնչում է ընթերցողին կեանք, ոգևորութիւն, յոյս:

Երկու «Հրաւիրակները»՝ խրիմեանի երկու զլխաւոր զգացմունքների՝ քրիստոսն էս և կան և հայրենաստիբական զգացմունքների արտայայտութիւններն են:

«Հրաւիրակ Արարատեանի» մէջ նա հանդէս է գալիս իրրև ոգևորված հայրենաստէր, «Հրաւիրակ Աւետեաց երկրի» մէջ՝ իրրև ոգևորված քրիստոսն էս ալ:

«Հրաւիրակ Արարատեանը»՝ հայրենաստէրի քնարն է. «Հրաւիրակ Աւետեաց երկրինը» — քրիստոսն էս ալ քնարը: Երկու գիրքը՝ մինը միւսին լրացնում են:

Գառնանք մեր պատմութեանը:
Շատ ժամանակ չանցած՝ խրիմեան առիթ ունեցաւ տեսնել փառագած, բայց չը տեսած մի երկիր — Ալիլիկիան:

Յիսուսական թւականներին Ալիլիկիայի լեռնականները ուշադրութիւն էին դարձրել իրանց վրա: Ա. Պօլսի պատրիարքաւանը և մի խումբ զիրք ունեցող անձինք ցանկանում էին աւելի մօտիկ ծանօթանալ Ալիլիկիայի հետ, որ, ի հարկէ, անցայտ մի երկիր էր ներկայացնում պատրիարքարանի համար, և նպաստել նրա լուսաւորութեան գործին:

խրիմեան շատ յարմար էր մի այդ տեսակ միսստիայի համար: Սա ուրախութեամբ յանձն է առնում տեղափոխել Ալիլիկիա: Մի քանի ժամանակից յետոյ խրիմեան ճանապարհ ընկաւ Սիս, նպատակ ունենալով մի կողմից ծանօթանալ ժողովրդի վիճակին, իսկ միւս կողմից ձեռնարկել մի կամ մի քանի դպրոցներ բանալուն: Սկզբում նրա գործերը աջող գնացին. բայց երկար չանցած՝ խրիմեանի յարաբերութիւնները լարվեցին Սիսի այն ժամանակվայ Արիակոս կաթողիկոսի հետ, և նա ստիպելից թող-

նել Արիւկիանն և վերադառնալ Կ. Պօլիս, ուր կրկին սկսեց ուսուցչութեամբ պարապել:

III

Խորմեան արդէն մօտ 35 տարեկան մարդ էր: Երիտասարդական հասակը անցել էր. Կ. Պօլիսն այլ ևս նրան չէր գրաւում: Նա ուղում էր գործել: Երկար մտածելուց յետոյ նա այն համոզմունքի եկաւ, ուր գործելու ամենալաւ ասպարէզն իր սիրած Վասպուրականն է, ուր խաւար, անշարժ ժողովուրդը կարօտ էր լաւ ուսուցչի, անկեղծ առաջնորդի: Խորմեանի հողին միշտ թըռչում էր դէպի Վան, իր մանկութեան աշխարհը՝ դէպի Այդեատանի գեղեցիկ ուռենիները և աղբիւրները, որոնց մասին այսպէս էր երգում «Հրաւիրակ Արարատեանը».

«Վայրիկ մի դով առցուք մեք ընդ հովանեօքս այս ուռենեաց.
Այսր, ս՛հ, նստեալ երբեմն աշակերտիս աշխատութեան,
Քաղցրախօս քնարին հայկեան ըղձարկանեղն ուսանէի...»

Գէթ ըմպեալ զայն անուշ ջուր և շունչ առեալ ի ջինջ օդոյն
Երգողիս իմ ձայն պարզէր և քաղցրանայր հայոց մանկուոյն:»

Իր սրտի ցանկութիւնը Խորմեան շուտով կատարեց ու վերադարձաւ Վան, 1853 թւականի վերջերին:

Վան վերադառնալով նա իր կնոջը և աղջկան միւսած գտաւ:

Ընտանեկան այդ դժբաղդութիւնը բաւական ծանր կերպով ներգործեց Խորմեանի վրա. բայց մի և նոյն ժամանակ ընտանեկան կապերից ազատվելն աւելի բորբոքեց նրա վաղուցվայ մըտադրութիւնը.—այն է վարդապետ դառնալ:

Խորմեան մի առանձին անձնական սէր չէր զգում դէպի կրօնաւորական կեանքը, նա ընդհակառակը, հակառակ էր այն առանձնացած, ժողովրդից կտրված և կենդանի մարդկանց հետ ոչինչ կապ չունեցող դիրքին, որ բռնել էր այն ժամանակվայ մեծակեաց հոգևորականութիւնը: Նա միայն յարգում էր անձ-

նուէր, իր անձը մոռացած կրօնաւորի տիպը: Բայց մի բան լաւ տեսնում էր Խորմեան.—այն է, որ նոյն հոգևորականութիւնը անաղին ազդեցութիւն ունի ժողովրդի վրա և անաղին հեռատութիւն մտնելու ժողովրդի բոլոր շրջանները,—և հէնց այդ էր գլխաւոր պատճառը, որ ստիպեց Խորմեանին վեղար ծածկել:

1854 թւին, փետրվարի 14-ին, Մկրտիչ Խորմեան՝ Վանի առաջնորդ Գարբիէլ արքեպիսկոպոսի ձեռքով, Աղթամարի վանքում վարդապետ ձեռնադրվեց, և նշանակվեց Վարազի վանքի միաբան:

Վարդապետ ձեռնադրվելուց շատ կարճ միջոց էր անցել, երբ Աղթամարի միաբանները նկատեցին, որ այդ նոր վարդապետը՝ Կ. Պօլսից եկել է նոր նոր ծրագրերով և տարօրինակ ցանկութիւններով: Երիտասարդ վարդապետի փափազն էր՝ հաստատվել Աղթամարի վանքում, որն իբրև Աղթամարի կաթողիկոսի աթոռանիստ կենտրոն՝ կապված էր շրջակայ հայաբնակ տեղերի հետ, և անաղին ազդեցութիւն ունէր ժողովրդի վրա: Նա մտադրվել էր այդ գեղեցիկ վանքում հիմնել դպրոց, հաւաքել այդ դպրոցը շրջակայ տաճկախօս և քրդախօս հայերի զաւակներին և դրանց միջոցով վերականգնեցնել ժողովրդի մէջ մոռացված լեզուն, ու լուսաւորութիւն տարածել: Խորմեան չը թաղցրեց, որ ցանկութիւն ունի մինչև իսկ վանքում հիմնել մի տպարան, որի առիթով խօսակցութիւն էր ունեցել Կ. Պօլսի իր բարեկամների հետ, և վերջապէս կազմակերպել այդտեղ հոգևորականների մի խումբ, որն իրան նուիրէր ժողովրդի կրթութեան գործին,—մի խօսքով այնպիսի ցանկութիւններ, որոնք պէտք է խանգարէին վանականների միատեսակի, քնած կեանքը, և դուցէ խէլին նրանց ձեռքից առատ հայր...»

Այդ այն «երջանկայիշատակ» ժամանակն էր, երբ Վասպուրականի հոգևորականութիւնը, Աղթամարի կաթողիկոսից սկսած, մինչև վերջին տէրտէրը, դէմ էին ուսման, դիտութեան: Վարդապետները կարծում էին թէ գրեւ-կարդալը միայն իրանց սեփականութիւնն է, և այդ պատճառով վնասակար էին համար-

րում ժողովրդին ուսում տալը, ուրեմն և դպրոցներ բանալը: ժողովրդի պարտքն էր՝ առաւօտից մինչև երեկոյ քրտինք թափել, հող մշակել, հաց ձեռք բերել.—իսկ վարդապետները նրստած իրանց խուցերում պէտք է վայելէին այդ հացը, և առաւօտից մինչև երեկոյ շարականներ երգէին և աղօթքներ կարդային:

—Կուք աշխատեցէք, իսկ մենք կուտենք ու կաղօթենք ձեր հոգու փրկութեան համար.—ասում էր այն ժամանակվայ հոգևորականութիւնը: Նոյն իսկ այնպիսի նշանաւոր վանքերում, ինչպէս է Աղթամար, Ղիմ, Կտուց, միաբանութիւններն իրանք անբաժնում էին ժողովրդի մէջ ամեն տեսակ անմիտ նախապաշարմունքներ, փող առնելու նպատակով: Օրինակ, միաբանները իրանց մօտ պահում էին՝ ընկացաւ ունեցող մարդիկ: Ամիսը մի կամ երկու անգամ այդ հիւանդներին վերցրած դնում, մտնում էին ժողովրդի մէջ. հիւանդները սխտում էին ամեն տեսակ անկապ ու անմիտ բաներ ասել, իսկ վարդապետները հաւատացնում էին ժողովրդին, թէ սուրբերը այդ հիւանդների բերանով դուշակութիւններ են անում, և այդ դուշակութեան փոխարէն առնում էին փող, ոչխար, մանուածք և այլն:

Հասկանալի է, որ այդ տեսակ հոգևորականութեան առաջ անպատիժ չէր կարելի խօսել՝ ժողովրդին լուսաւորելու, դրսրոցներ բանալու, վանքերում ուսումնարան հիմնելու մասին: Եւ խրիմեանը՝ իր համարձակ մտադրութիւնների համար՝ անպատիժ չը մնաց: Նրան այնպիսի կատաղի թշնամութիւն ցոյց տուցին Աղթամարում, որ նա հեռացաւ այրտեղից:

Վանքերի մէջ ապաստարան չը գտնելով, խրիմեան մի առ ժամանակ իր գործունէութիւնը կենտրոնացրեց Վանում, նոյն իսկ ժողովրդի մէջ: Նա մանում էր և արհեստաւորի տունը, և վաճառականի մօտ, և հարուստների մօտ, ու ամեն տեղ, ամեն օր քարոզում էր՝ դպրոցներ բանալ, ուսում տալ երեխաներին: Խրիմեանը առաջինն էր, որ Վանում արծարծեց աղջիկներին ուսում տալու միտքը, և նրան կարելի է համարել Հայաստանում օրիորդական դպրոցների հիմնարկութեան կարապետ:

Եկեղեցու բեմը դարձաւ խրիմեանի համար՝ քարոզելու մի ասպարէզ: Ուրիշ տեղ չը կար խօսելու համար, և չէր էլ կարելի խօսել: Քիչքիչ նրա քարոզները սկսեցին ուշադրութիւն գրաւել, և նա յայտնվեց որպէս աղլու, կրակոտ քարոզիչ: Վերցնում էր շատ անգամ խրիմեան իրբն նիւթ քարոզի համար՝ Վասպուրականի, կամ նոյն իսկ Վանի մօտ գտնվող մի հին աւերակ, որի վրա մինչև այն ժամանակ ժողովուրդը իսկի ուշք չէր դարձնում. պատմում էր այդ աննշան աւերակի նշանաւոր անցեալը, դուրս էր կանչում հին դարերի փառաւոր յիշատակները, և այնպիսի ցնցումներ էր պատճառում Վանի քարացած ժողովրդին, որ երևակայել անգամ չէր կարելի: Նրա քարոզների նիւթը ժողովրդի առօրեայ կեանքն էր, իր լաւ և վատ կողմերով: Քարոզում էր օգնել խեղձերին, չը հարստահարել զիւղացիներին, հարուածում էր վաշխառու աղայի կամ կաշառակեր հոգևորականի արարքները. պաշտպանում էր աշխատասէր շինականին, մինչև անգամ անձամբ օգնութեան ձեռք էր մեկնում նրանց, որոնք ճնշվում և կեղեքվում էին ուժեղների ձեռքով...

Այդ արդէն բաւական էր, որ անագին փոթորիկ բարձրանար ազատախօս վարդապետի դէմ: Փոթորիկը բարձրացաւ: Սկսեց հարձանք, կատաղի նախանձ, թշնամութիւն: Նա սախովեց տեղի տալ:

Տխուր արտով խրիմեան թողեց Վանը և կրկին վերադարձաւ Կ. Պօլիս: Նա դնաց Կ. Պօլիս ոչ թէ այնտեղ մնալու, այլ իր ճանապարհը հարթելու համար:

Այս անգամ Մկրտիչ խրիմեան Կ. Պօլսում մնաց մօտ երկու տարի:

IV

Թիւրքաց հայերի մտաւոր շարժման գործում՝ 1850—60-ական թւականները կազմում են մի փառաւոր շրջան: Այդ շրջանում՝ ծնունդ առաւ ազգային Սահմանադրութիւնը:

4171 / 458 1527-2013



որի հետ սերտ կապված է խրիմեանի անունը.— ուստի հարկաւոր ենք համարում մի փոքր կանգ առնել և պատմել թէ ինչ հանգամանքներում և ինչպէս առաջացաւ այդ մտաւոր շարժումը:

Գրա համար հարկաւոր է ծանօթացնել ընթերցողին Սահմանադրութեան սկզբնաւորութեան հետ, իսկ այդ անելու համար անհրաժեշտ է նախ ծանօթանալ այն կառավարչական կարգադրութիւնների և օրէնսդրութիւնների հետ, որոնց վրա հիմնվեց հայոց սահմանադրութիւնը:

Ուստի մի փոքր հեռուից կը սկսենք:

Քրիստոնեայ ազգերի վիճակը, շատ հին ժամանակներից սկսած, Թիւրքիայում անտանելի էր: Գրա զխաւոր պատճառներից մինն այն էր, որ օրէնքի առաջ քրիստոնեան և մահմեդականը հաւասար իրաւունքներ չէին վայելում: Պետական, քաղաքական օրէնքների փոխարէն տիրապետում էր մահմեդական ֆանատիկութիւնը, և այդ պատճառով՝ քրիստոնեայ և մահմեդական տարրի մէջ սկսվել էր մի ուժգին թշնամութիւն, մի անտագոնիզմ, որ քանի գնում սուր կերպարանք էր առնում:

Թիւրքիայի քրիստոնեաների վիճակն այնքան ողբալի դարձաւ, որ ստիպեց Եւրոպային միջամտել Թիւրքիայի ներքին գործերում՝ քրիստոնեաների իրաւունքները պաշտպանելու համար: Այդ միջամտութիւնը սկսվեց Սուլթան Մահմուդ Բ.-ի օրերում: Տեսնելով թէ ինչ վտանգաւոր դրութեան մէջ է ընկնում պետութեան գոյութիւնը, Մահմուդ Բ., որ վերանորոգիչ ոգի ունէր, մի շարք բեֆօրմներ սկսեց, և հրատարակեց վերին աստիճանի համակրելի հրովարտական: Սակայն այդ վերանորոգութիւնները մի առանձին արդիւնք չը տուեցին: Երկրի ներքին կազմակերպութիւնն այնքան քայքայված էր, որ շատ գեղեցիկ բեֆօրմների ծրագիրները մնում էին մեռած տառ:

Յուսարթ Մահմուդ Բ. մեռաւ և նրան յաջորդեց իր 15—16 տարեկան որդին՝ Աբդուլ-Մէջիդ, մի այնպիսի ժամանակ, երբ երկիրը տագնապի մէջ էր՝ ապստամբութիւնների պատճառով:

Գրա ժամանակ հանդէս եկաւ Բէշիդ փաշան—այդ տաղանդաւոր և հայրենասէր թիւրք դիպլոմատը: Տեսնելով, որ սուսնց արմատական բեֆօրմների Թիւրքիան պիտի կործանվի, Բէշիդ փաշան, որ անադին աղղեցութիւն ունէր պալատում և սուլթանի վրա, գրեց մի սահմանադրութիւն, որը 1839 թւին սուլթանը հաստատեց և հրատարակեց:

Այդ սահմանադրութիւնը կոչվեց խաւթը-Շէրիֆ, որի հիման վրա լոյս տեսաւ մի նոր օրէնսդրութիւն, որը յայտնի է թանդիմաթ անունով:

Խաթը-Շէրիֆը մի մեծ քայլ էր դէպի առաջ, նա խօստանում էր ապահովայնել պետութեան հպատակների կեանքը, պատիւը և կայքը՝ առանց խտրութեան կրօնի և դաւանութեան:

Առաջ ենք բերում նոյն իսկ Խաթը-Շէրիֆի նշանաւոր խօսքերը. «Փաթիլչահի այս ողորմած հրովարտակը վերաբերում է մեր բոլոր հպատակներին, ինչ կրօնի և դաւանութեան էլ պատկանեն նրանք, ուստի ամենքն էլ հաւասարապէս օգուտ պիտի քաղեն սրանից: Մենք, Աստուածային օրէնքների համաձայն, տալիս ենք պետութեան բոլոր հպատակներին, առանց խտրութեան, կեանքի, պատւի և կայքի վերաբերեալ կատարեալ ապահովութիւն»:

Առաջին անգամն էր, որ թիւրքաց պետութեան մէջ, պաշտօնապէս, արքայական հրովարտակով՝ կառավարութիւնը հաւասարութիւն էր տալիս քրիստոնեաներին՝ մահմեդականների հետ միասին,— և այդ պատճառով դա պէտք է համարել պատմական մի նշանաւոր քայլ Թիւրքիայի համար, ուր կառավարութիւնը՝ ամեն բանում՝ խտրութիւն էր դնում մահմեդականի և քրիստոնեայի մէջ:

Խաթը-Շէրիֆով քրիստոնեաները իրաւունք ստացան վարել պետական քաղաքացիական պաշտօններ: Գրանից յետոյ նոյն Աբդուլ-Մէջիդը 1845 թւին հրատարակեց մի ուրիշ հրովարտակ, որով հիմնվեցան զաւառական մէջլիսներ (ժողովներ), որոնց մէջ

անդամ կարող էին լինել և քրիստոնեաները: Այդ հրովարտակով արգելվեց նահանգապետ փաշաներին՝ հարկեր առնել կամ դատել առանց այդ մէջլիաների:

1854 թւին լոյս տեսաւ մի նոր հրովարտակ, որով քրիստոնեաներին իրաւունք էր տրւում քրէական գործերում վկայութիւն տալ, լինի այդ վկայութիւնը յօդուտ, թէ ի վեաս մահմեդականի, — մի իրաւունք՝ որից գեւաւոււրները դուրկ էին:

Վերջապէս 1855 թւին հրատարակված մի ուրիշ հրովարտակով՝ քրիստոնեաներից վերացրվեց խարաջ անուանով հարկը, մի հարկ, որ քրիստոնեաները՝ իբրև ստրուկներ տալիս էին կառավարութեան, որպէս իրանց աղատութեան զին:

Արևելեան պատերազմի ազդեցութեան տակ, և եւրոպական պետութիւնների դրվամբ 1856 թւին, Աբդուլ-Մէջլիկի ձեռքով լոյս տեսաւ մի նոր նշանաւոր հրովարտակ, որ կոչվեց խարաջի անկում:

Խարաջի անկումը իսկապէս պաշտօնական հաստատութիւն և լրումն էր այն բոլոր իրաւունքների և արտօնութիւնների, որոնք տրված էին քրիստոնեաներին: Այդ հրովարտակը տալիս էր. 1) կրօնի կատարեալ ազատութիւն, արգելելով բռնութեամբ կրօն փոխելը. 2) Արգելում էր քրիստոնեաների համար գեւաւոււր անուան գործածելը. 3) Իրաւունք է տալիս քրիստոնեաներին վարել քաղաքացիական պաշտօններ. 4) Թոյլ է տալիս բոլոր ազգերի ներկայացուցիչներին ուսանել արքունական դպրոցներում. 5) հրամայում է կազմել խառն դատարաններ՝ քրիստոնեաներից և մահմեդականներից, մահմեդականի և քրիստոնեայի մէջ ծագած վեճը տեսնելու համար. 6) Որոշում է, որ քրիստոնեաները կարող են յայտնի թւով մասնակցել դաւաճական և նահանգական մէջլիաներին. 7) Տալիս է հաւասարութիւն թիւրքահպատակ բոլոր քրիստոնեայ ազգերին՝ առանց միմյան, կամ միւսին առաւելութիւն տալու. 8) Ընդունում է, որ քրիստոնեայ ներկայացուցիչներ լինեն պետական խորհրդարանում և այլն:

Այդ նոյն հրովարտակով 1) պատրիարքը ճանաչվում է

իբրև բարձրագոյն հոգևոր ներկայացուցիչ իր հօտի և 2) քրիստոնեաների աշխարհական գործերը տեսնելու համար ժողովուրդը պիտի ընտրի մի ժողով՝ բաղկացած հոգևոր և աշխարհական անձինքներից:

Խնչպէս պարզ տեսնվում է, այդ հրովարտակներով բաւական իրաւունքներ էին տրվում քրիստոնեայ հպատակներին:

Սակայն, տարաբաղդաբար, քրիստոնեաների և մահմեդականների հաւասարութեան միտքը մնաց մեռած տառ, և սուլթանների հրովարտակները գործնական շատ քիչ արդիւնքներ ցոյց տուցին... Թուլացած, ուժասպառ կառավարութիւնը չէր կարողանում իրագործել պալատների մէջ մշակած հրովարտակները. իսկ միւս կողմից թիւրք ժողովուրդը, մահմեդական ֆանատիկոսութեամբ կուրացած, այնքան կատաղել էր քրիստոնեաների դէմ՝ այդ հրովարտակների պատճառով, որ մի քանի տեղ, Փոքր-Ասիայում՝ ջարդ տուցին քրիստոնեաներին:

Ահա այդ դրութեան մէջ էր՝ քրիստոնեաների վերաբերմամբ թիւրքաց օրէնսդրութիւնը 50-60-ական թւականներին, երբ յղացաւ հայոց Սահմանադրութեան միտքը:

Այժմ մի հայեացք զցնեք և տեսնեք թէ ինչ վիճակի մէջ էր ինքը հայ ժողովուրդը, որ պիտի լինէր սահմանադրութեան ողի տուողը և նրա բարիքները վայելողը:

Մինչև 30-ական թւականները, ոչ թէ Հայաստանում, այլ նոյն իսկ Կ. Պօլսում՝ ազգային-հասարակական գործերում ժողովուրդը ոչինչ դեր չէր կատարում: Ամեն բան կարգադրում և հրամայում էին դիրք ունեցող ամիրաները և հարուստ սէռաֆները: Ամիրայութիւնը մի ուժեղ բռնապետութիւն էր, որի առաջ ոչնչանում էր ժողովուրդը:

Միայն երեսնական թւականների վերջերին և քառասնական թւականների սկզբներին՝ հանդէս է գալիս ժողովուրդը, սկսելով ամիրաների իշխանութեան դէմ մի կատաղի կռիւ:

Կ. Պօլսի հայերէ գարոցներ չունէին մինչև այս դարու սկիզբները: Հայաստանի մասին ասելն էլ աւելորդ է: Հայ երեւթայք ուսում էին աւնում խաներում և կրգականերում: Միայն այս դարու սկիզբներից Կ. Պօլսում սկսեցան հիմնվել ուսումնարաններ. իսկ 1838 թւի վերջին բացվեց Ս. Նրուսաղէմի, կամ ինչպէս սովորաբար կոչվում էր՝ Խսկիւտարի ձեմարանը, որտեղ պէտք է բարձրագոյն ուսում ստանային միւս գարոցներից աւարտողները՝ ազգի հաշուով: Ճեմարանը, ինչպէս և միւս գարոցները, ամիրանների իշխանութեան տակ էին և նրանց ձեռքում: Երբ ուզում էին փող էին տալիս, երբ չէին ուզում՝ երեսի վրա էին թողնում ձեմարանը և նոյն իսկ փակել տալիս:

Ահա հէնց այդ ձեմարանի առիթով տեղի ունեցաւ առաջին մեծ ընդհարումը ժողովրդի և ամիրանների մէջ՝ Յակօբ պատրիարքի օրով: Ինքը պատրիարքը, որ գործունեայ մարդ էր, զրծգո՛ս լինելով ամիրանների անսահման կամայականութիւնից, փորձ փորձեց առաջ մղել ժողովրդին, և մասնակից անել ձեմարանի պահպանութեան գործում: Արհեստաւոր դասակարգը սիրով ընդունեց այդ մասնակցութիւնը, և նոյն իսկ արհեստաւորներից՝ 24 հոգուց բաղկացած մի հոգաբարձութեան կազմվեց՝ ձեմարանի տնտեսական մասը հոգալու համար: Այդ բանը դուր չեկաւ ամիրաններին: Նրանք աշխատեցին բոլորովին հեռացնել ժողովրդին: Թշնամութիւնը երկու կողմի մէջ սարսկացաւ: 1841 թւին բանը այնտեղ հասաւ, որ ամիրանների թեւադրութեամբ և խնդրանք՝ կառավարութիւնը բանտարկել տուեց արհեստաւորների միջից շատերին, զխաւորապէս հոգաբարձութեան անդամներին:

Սակայն այդ բանը չը յուսահատեցրեց ժողովրդին: Արհեստաւորները երդվեցին պաշտպանել իրանց իրաւունքները և զիմադրել ամիրաններին: 3,000 արհեստաւոր փակելով իրանց խանութները՝ դիմեցին Բ. Գրան և պահանջեցին, որ իրանց ընկերները բանտից ազատվեն, քանի որ յանցաւոր չեն: Կառավարութիւնը բանտարկեալներին ազատեց: Ժողովրդի այդ հաստատա-

մտութիւնը տեսնելով՝ ամիրանների ձեռքերը բոլորովին թուլացան. նրանք ստիպվեցին տեղի տալ: 1841 թւի դեկտեմբերին, կառավարութիւնը լսեց ժողովրդի խնդիրը, և հրատարակեց մի արքունի հրովարտակ, որով հաստատվեց 27 հոգուց բաղկացած մի ժողովրդական հոգաբարձութիւն, կամ ժողով, որը պէտք է վարէր բոլոր ազգային գործերը՝ ամիրաններից անկախ:

Ժողովրդի իրաւունքների սահմանները աւելի էլ լայնացան Մատթէոս պատրիարքի—վերջումը կաթողիկոս—օրով (1844—1848 թ.), որը առհասարակ ժողովրդի կողմը հակված մարդ էր և հակառակ ամիրաններին: Տեսնելով որ այդ պատրիարքը բոլորովին պէտք է արգելք դնի իրանց տիրապետութեան, ամիրանները սկըզբում մտածեցին նրան հրաժարեցնել: Բայց Մատթէոսը մեծ ժողովրդականութիւն ունէր, ուստի նրանց այդ մտադրութիւնը չը յաջողվեց: Այդ պատճառով մտածեցին պատրիարքից վրէժ առնել մի ուրիշ կերպ.—այն է նրա իրաւունքները սահմանափակել:

Այդ դիտաւորութեամբ՝ ամիրանները յաջողեցին դուրս բերել արքունի հրովարտակ, որով պատուիրվում էր պատրիարքաբանում հիմնել երկու ժողով, մինը հօգևօր, միւսը քաղաքական գործերի համար: Երկու ժողովներին էլ պէտք է, նախագահէր սրատրիարքը, որը առանց ժողովների դիտութեան ոչինչ յարարերութիւն չը պիտի ունենար Բ. Գրան հետ և ինքնակամ գործեր չը պիտի կարգադրէր:

1847 թւի մայիս ամսին, Կ. Պօլսի Մայր եկեղեցում գումարվեց ընդհանուր ժողով, որտեղ ընտրվեցին հօգևօր և քաղաքական ժողովների անդամները: Քաղաքական ժողովը վերջումը կոչվեց Գևրագոյն ժողով: Հոգևոր ժողովը բաղկացած էր 14 եկեղեցականներից, իսկ Գևրագոյն ժողովը 20 անդամից, որոնցից 11-ը վաճառականների և արհեստաւորների ներկայացուցիչներ էին, և միայն 9-ը ամիրաններ: Այդ ժողովները պէտք է առանձին առանձին շարքեր մի անգամ՝ դումարվէին պատրիարքաբանում և կարգադրէին ընթացիկ ազգային և եկեղեցական հարցերը:

Ամիրանները շատ շուտով զգացին, որ իրանք սխալվել են: Նրանք ուզեցին վրէժխնդիր լինել Մատթէոս պատրիարքից և նրա իրաւունքները սահմանափակել, բայց զրա փոխարէն դուրս եկաւ այն, որ ժողովրդի մասնակցութիւնը պաշտօնապէս ընդունվեց, և այդպիսով ժողովրդից ընտրվող վարչութեան հիմք դրվեց:

Յուսահատված ամիրանները վճռեցին՝ ինչպէս էլ լինի պատրիարքութիւնից վայր դցել իրանց հակառակորդին՝ Մատթէոսին: Այնքան մատնութիւններ արեցին Բ. Դրանը, որ Մատթէոսը ստիպվեց 1848 թւին հեռանալ պաշտօնից՝ կառավարութեան ստիպմամբ: Սակայն այդ էլ չօգնեց: Որովհետև Մատթէոսի փոխարէն՝ ամիրանների ցանկութեան հակառակ և ժողովրդի կամքով նախկին պատրիարք Յակոբը՝ պատրիարք ընտրվեց 1848 թւին, և մնաց այդ պաշտօնում մինչև 1858 թիւը:

Ահա այդպիսի հանգամանքներում՝ երբ մի կողմից ջախջախվում էր ամիրայական իշխանութիւնը և միւս կողմից հանդէս էր գալիս ժողովրդական տարրը, վրա հասան 50-ական թւականները:

Այդ թւականներից արդէն ժողովուրդը սկսում է շարժվել ոչ թէ միայն Պօլսում, այլ և Հայաստանում, ներքին գաւառներում: Մտաւոր շարժումը զգալի էր: Կ. Պօլսի հայոց կօլօնիստի մէջ արդէն կազմակերպվում էին ինտելիգենտ, մտածող, հասարակական գաղափարներով ներշնչված շրջաններ...

Եւ մի այդպիսի ժամանակ ահա սկսվեց արծարծվել հայոց սահմանադրութեան միտքը:

Յիսուսական թւականներից արդէն սահմանադրութեան հարցը զբաղեցնում էր շատերին Կ. Պօլսում: Մի քանի շնորհալի անձինք՝ ինչպէս են Նիկողայոս Պալեան, Գրիգոր Օտեան, Ռուսինեան, Աղաթոնեան, աշխատում էին մշակել մի ներքին կանօնադրութիւն, հայոց ազգային, եկեղեցական և

դպրոցական գործերը կառավարելու և հոգևոր կենտրոնական վարչութեան, այն է պատրիարքարանի յարաբերութիւնները կանօնադրելու համար: Նիկողայոս Պալեան, որ այդ գործի գլխաւոր ղեկավարն էր, իր ընկերների հետ միասին աշխատում էր կազմակերպել մի ազգային ընդհանուր ժողով, որը պիտի հիմնված լինէր ընտրողական սկզբունքի վրա, որպէս ղի այդ ժողովը պատրիարքարանի հետ միասին տեսնէր և կարգադրէր հայոց գործերը:

Երբ 1856 թւին հրատարակվեց Սաթտը-Հիւմայիւնը՝ սահմանադրութեան միտքը սկսեց աւելի զբաղեցնել Կ. Պօլսի մի քանի շրջաններին: Ինչպէս տեսանք, Սաթտը-Հիւմայիւնով ինքը թիւրքաց կառավարութիւնը իրաւունք էր տալիս հայերին ընտրել մի ընդհանուր ժողով, որը պատրիարքի հետ միասին պէտք է կառավարէր հայ ժողովրդի գործերը:

Եւ իսկապէս հենց այդ նոյն Սաթտը-Հիւմայիւնի վրա էլ հիմնվեց սահմանադրութիւնը:

Հարկաւոր էր միայն՝ օգտվելով կառավարութեան տուած իրաւունքից, աւելի մշակել խնդիրը.—որոչէլ ընդհանուր ժողովի ընտրութեան եղանակը և իրաւունքները, կազմակերպել գաւառական ժողովներ, որոչէլ պատրիարքների և թեմական առաջնորդների իրաւասութիւնը, մի խօսքով այն բոլորը, ինչ վերաբերում է գործի կազմակերպութեան:

Այդ գործը յանձնվեց մի առանձին յանձնաժողովի, որը կազմվեց հոգևորական և աշխարհական անձինքներից: Նիկողայոս Պալեանի և իր ընկերակիցների կազմած կանօնադրութիւնը յանձնվեց այդ յանձնաժողովին, որ սա վերջնականապէս խմբագրի:

Հասաւ վերջապէս 1860 թւի մայիս ամիսը.—մի նշանաւոր տարի թիւրքահայերի համար:

Այդ ժամանակ պատրիարքական գահի վրա նստած էր Սարգիս պատրիարքը: Սա, ժողովրդի առաջաւոր մարդոց զբոլմամբ, 1860 թւի մայիսի 24-ին՝ հոգևորականներից և աշխարհա-

կաններից մի ընդհանուր ժողով հրաւիրեց: Ժողովին ներկայ էին շատ նշանաւոր անձինք: Սահմանադրական յանձնաժողովը կարգաց իր խմբագրած կանոնադրութիւնը, որպէս զի ժողովը իր կարծիքը յայտնի: Ժողովը հաւանութիւն տուեց այդ կանոնադրութեան, որի տակ իսկոյն ամենքն էլ ստորագրեցին: Ապա ներկայացրուեց կառավարութեան, որի կողմից ևս հաւանութիւն գտաւ և մի քանի փոփոխութիւններով հաստատուեց: Եւ ճենց այդ նոյն կանոնադրութիւնն է անա՛ որ կոչուեց Ա. զ. գ. ա. յ. ի. ն. ս. ա. հ. մ. ան. ա. գ. բ. ո. թ. ի. լ. և հաճկաստանի հայոց:

Սահմանադրութեան զլիսաւոր սկզբունքներից մինը այն է, որ ազգը, իբրև հաւաքական մարմին, ունի յայտնի պարտաւորութիւններ և իրաւունքներ դէպի իր ամեն մի անհատը, ինչպէս և ամեն մի անհատ ունի իր յայտնի պարտաւորութիւնները և իրաւունքները դէպի այդ հաւաքական մարմինը, այն է ազգը:

Այդ փոխադարձ իրաւունքների և պարտաւորութիւնների կատարման վրա հսկող իշխանութիւնը Ա. զ. գ. ա. յ. ի. ն. ս. ա. ղ. թ. ի. լ. է, որը հիմնուած է ընտրողական սկզբունքի վրա, — այն ամենամեծ սկզբունքը, որը կազմուած է Սահմանադրութեան հոգին:

Ահա թէ ինչ է ասված այդ սահմանադրութեան մէջ վարչութեան մասին:

- ա) «Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար՝ պէտք է երեսփոխանական ըլլայ»:
- բ) «Երեսփոխանական վարչութեան հիմք՝ իրաւանց ու պարտեաց սկզբունքն է, որ արդարութեան սկզբունք է. իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինակութեան սկզբունք է»:

Ահա ճենց այդ ինտրոդական սկզբունքն է, որ արծարծվելով՝ մտքերի անաղին շարժում առաջ բերեց Թիւրքիայի հայերի մէջ, և առաջ մղեց մտապլած ժողովրդին: Սահմանադրութիւնը ինքը ճանաչեց և ճանաչել տուեց այդ ժողովուրդը. ոյժի և բռնութեան դէմ՝ նա դուրս բերեց իրաւունք և արդարութիւն:

Ուստի հասկանալի է, թէ ինչու սահմանադրութեան գաղափարի արծարծվելը և մշակվելը՝ կազմուած է Թիւրքաց հայերի մտաւոր կեանքի մէջ մի նշանաւոր շրջան:

Եւ ուրախալին այն է, որ այդ շրջանից դուրս չը մընայ՝ Մկրտիչ Խրիմեան:

1850—1860 թւականներին, Խրիմեան, թէ իբրև աշխարհական և թէ յետոյ իբրև հոգևորական անձն, մի քանի անգամ առիթ ունեցաւ Կ. Պօլսում լինելու և մօտ շիվելու այն մարդկանց հետ, որոնք այդ ժամանակի մտաւոր շարժման մասնակից էին:

Օտեանների տունը այդ ժամանակ կենարօն էր: Այդտեղ հաւաքվում էին թէ աշխարհական և թէ հոգևորական ինտելիգենտ, մասձող անձինք, ուսումնականներ, գրողներ, և նոյն իսկ շատ բարձր դիրք ունեցող հայեր: Օտեանի սալօնը եռանդուն յաճախողներից մինն էլ Խրիմեանն էր: Ամենքն էլ սիրով էին լսում և յարգանքով վերաբերվում դէպի Մկրտիչ Խրիմեան, որ միշտ խօսում էր «Խայաստանի» մասին, նկարագրում էր գաւառների խղճուկ վիճակը, հրաւիրում էր օգնել «խայաստանցի» անուէր և անուսում հային, և վերջապէս էր իր խօսքերն անդադար կրկնելով. «Այո՛ւստը պէտք է կենդանայնել, արմատը»:

Սկզբում շատերը թերահաւատութեամբ էին վերաբերվում դէպի երիտասարդ վարդապետի մտքերը, մինչև անգամ երեակայական էին համարում այն ծրագիրները, որ Խրիմեանն էր առաջարկում. — բայց ճարտարախօս գործիչը՝ քիչ-քիչ իր մտքերի համար ճանապարհ բաց արեց և թերահաւատներից շատերին էլ ստիպեց հաւատալ, որ կարելի է գաւառները ոտքի կանգնեցնել:

Խրիմեանի զլիսաւոր միտքն էր, որ Պօլսոյ՝ իբրև մտաւոր կենտրոն և ղեկավարող ոյժ, իր բոլոր ուշ ու միտքը դարձնէ արմատի, Հայաստանի վրա և այդ նպատակով նա մտնում էր Պօլսի հասարակութեան բոլոր շրջանները, որպէս զի շատացնէ իրան հետևողների, իր մտքերի համակրողների թիւը:

Նա մօտիկ յարարերութիւններ սկսեց նոյն իսկ բարձր շրջանին պատկանող հայերի հետ, որոնք անմատչելի էին, ինչպէս ժայռ, և որոնց նա քարոզում էր իր մտքերը: Նա լաւ բարեկամացաւ, ի միջի այլոց, պալատական ճարտարապետ Նիկողայոս Պալեանի, որը, ինչպէս յայտնի է, սահմանադրութեան հիմնադիրներից մինն էր, և Տատեան Սիմօն-Պէլի հետ: Ամբողջ գիշերներով ոգևորված կերպով խորմեան նկարագրում էր նրանց Հայաստանի վիճակը յորդորելով՝ այնտեղ գործել, այնտեղի համար հողալ:

Ահա թէ ինչ էր գրում 1858 թւին ինքն խորմեան՝ Նիկողայոս Պալեանի մահվան առիթով, արդէն Հայաստանում եղած ժամանակ, Պալեանի և Տատեանի մասին.

«... Մեծ փափագով և անձանձիր հետաքրքրութեամբ կը հարցանէին Հայաստանեայց ողջութենէն: Ուրիշ բան չէր իրենց խօսքը, հապա միայն հայրենեաց յառաջադիմութեան ու նոր բարգաւաճութեան համար: Տատեանի սրտէն հառաչանքներ կը բղինէին, երբ որ Հայաստանեայց արդիւնաբեր դաշտերուն՝ անմշակ և ամայի մնալն ցաւակցելով կը պատմէի. իսկ Պալեանի հոգին ներքուստ կը տոչորէր, երբ որ իր երեակայութեան աչքը կը դրօսոյնէի Անուոյ կիսակործան աւերակներուն վրա:—Ո՞հ, կըսէր, ինձ պիտի յաջողէ բախտն արդեօք, որ ան կիսականգուն աւերակաց վրա բարձրաչէն կամարները Յւրօպական ճարտարութեամբ դարձեալ նորոգէի» *:

Գեռ երկու տարի չը լրացած, այն է 1856 թւի վերջերին, խորմեան յայտնեց իր բարեկամներին, որ վերադառնում է վասպուրական: Նա ընցատորեց, թէ այնտեղ գնալով ինչ տեսակ գործունէութիւն է ուզում սկսել, պարզեց իր ծրագիրը և հաւանութիւն գտաւ: Նա կարծում էր, որ արդէն Կ. Պօլսում բաւական համակրողներ և բարեկամներ ունի և կարող է վերադառնալ ու սկսել:

* «Արծուի վասպուրական», 1858, մարտ.

Բանը նրանումն է, որ խորմեանի համար անհրաժեշտ էր Պօլսում ունենալ համակրողներ և բարեկամներ, և նոյն իսկ հովանաւորողներ: Ահա թէ ինչու:

Կ. Պօլսի հայ հասարակութեան մէջ այդ ժամանակ կար երկու կուսակցութիւն, որոնցից մինը վերջումը անուանվեց՝ Լուսաւորեալք, իսկ միւսը Խաւարեալք: Լուսաւորեալքը, որոնց մէջ էին և Օտեանները, համակրում էին հայոց մտաւոր շարժման, սահմանադրութեան հաստատութեան, ունէին նոր ծրագիրներ, պաշտպանում էին գաւառները կրթելու միտքը և այլն. իսկ միւս կուսակցութիւնը, որ իրաւամբ կոչվեց Խաւարեալք, առհասարակ թշնամի էր ամեն տեսակ շարժման և նոյն իսկ Սահմանադրութեան: Այդ կուսակցութիւններից իւրաքանչիւրը ունէր իր մարդիկը Հայաստանի գլխաւոր քաղաքներում: Գիցուք թէ Խաւարեալքի կուսակցութեան պարագլուխը Կ. Պօլսից կը գրէր Վան՝ իր արքանեակին. «Այս ինչ մարդուն ղիմադրեցէք և հալածեցէք»: Նրանք էլ սկսում էին ղիմադրել և հալածել...

Ահա այդ պատճառով խորմեան անհրաժեշտ էր համարում Կ. Պօլսում իր համար հարկաւոր մարդիկ ունենալ, որ իրան աջակցեն, որովհետեւ Խաւարեալքը բոլորովին դէմ էին իր ծրագիրներին և ղիտաւորութեան... Սրանք առանց ուշացնելու գրեցին Վան, որ խորմեան գալիս է, կարգադրելով՝ որ ղիմադրեն նրան:

Իսկ խորմեան՝ յոյսն իր ոյժերի և իր բարեկամների աջակցութեան վրա դնելով ճանապարհ ընկաւ: 1856 թւի վերջի ամիսներին նա հասաւ Վան:

Ժողովուրդը և մի խումբ երիտասարդներ, որոնք արդէն խորմեանին ճանաչում էին, սիրով ընդունեցին նրան:

Այս անգամ էլ խորմեան ուղեց հաստատվել Աղթամարում, և այնտեղ սկսել իր գործունէութիւնը, հիմնելով տպարանը և դպրոցը: Սակայն չը յաջողեց: Վանքի միաբանութիւնը լսել անգամ չէր ուզում:

Այն ժամանակ նա իր աչքը դարձրեց դէպի Վարազ: Բայց

այստեղ էլ արդեղներ երևացին: Ոչ վանքի միաբանութիւնը, որ հանգիստ կերպով վայելում էր վանքի եկամուտները, ոչ վանքի առաջնորդը, որը վարագն իր համար ամաբանոց էր շինել, և ոչ էլ վերջապէս Կ. Պօլսի խաւարեալքի վանի ներկայացուցիչները՝ չը կամեցան վարագը տալ Խրիմեանին:

Անտանուլի վիճակ էր: Հայոց վարդապետին մի տեղ չէին տալիս, որ նա այնտեղ ապաստան գտնի և գործ սկսի: Տեսնելով, որ հնար չը կայ, Խրիմեան յայտնեց գործի գրութիւնը Կ. Պօլիս: Հայոց պատրիարքարանը և Յակոբ պատրիարքը այդ ժամանակ առհասարակ Լուսաւորեալք-ների աղղեցութեան տակ էին. ուստի պատրիարքին կարողացան համոզել, որ նա սանձահարի Խրիմեանի թշնամիներին, և վարագը նրան տայ:

Յակոբ պատրիարքը, առանց վանի առաջնորդբանի, Խրիմեանին կարգեց վարագի վանահայր, դնելով վանքը նրա կարգադրութեան ներքոյ:

V

«Վարագոյ սար, Վարաբայ վանքը.—այս է իմ հանգիստ և խանձարանք. ես սիրեցի այդ իմ հայրենի վայրերը, աղքատ և թշուառ վայրեր», ահա ինչ էր գրում ինքը Խրիմեան վարագի մասին 1862 թւին, այսինքն վարագում հաստատուելուց հինգ տարի յետոյ:

Այդ վանքի անունը սերտ կապված է Խրիմեանի անունն և նրա գործունէութեան հետ: Վարագը—Վասպուրականի Արծւի բոյնն է:

Թող ներվի մեզ մի փոքր նկարագրել այդ բոյնը:
 Վարագը գտնվում է՝ վանից մօտ 3 ժամկայ ճանապարհի վրա, դէպի արևելա-հարաւ: Նա շինված է բարձրագագաթ լեռան ստորոտում, որտեղից նայում է դէպի վան քաղաքը և վանի ծովը: Վանքի առաջ բացվում է մի գեղեցիկ տեսարան, —գեղեցիկ ձորեր, դաշտեր, լեռներ, աւելի հեռու՝ վան, ծովը,

որտեղից ամաբնային տաք օրերին՝ փչում է մեղմ և դովարար քամի:

Արևմտեան կողմից վարագը շրջապատված է ձորերով և մի դաշտավայրով, ուր կան գեղեցիկ արտեր, հարաւից՝ Ղուբուսպաշ գիւղը և մի մեծ լեռնաբլուր, որը բաժանում է Հայոց Զորը վարագի սահմանից. արևելքից՝ Նոր գիւղը և Գալիլիայի կոչված լեռք. իսկ հիւսիսից՝ Կողբանց և Շուշանց գիւղերը, ուս. Գրիգոր և Կարմրաւոր վանքերը:

Յիշեալ սահմանների մէջ՝ վարագի շրջապատը մօտ 10 ժամկայ ճանապարհ է: Այդ տարածութեան մեծ մասը լեռնային է, որ գեղեցիկ արօտատեղի է ներկայացնում, իսկ փոքր մասը՝ դաշտավայր, ուր կան մշակելու լաւ հողեր: Ունի մի գետակ, որ բղիւնելով Գալիլիայի լեռան բարձրութիւնից՝ արագահոս կերպով անցնում է երկձիւղանի լեռների միջով և հասնում ներքև՝ դաշտավայրը, ջուր մատակարարելով լայնատարած դաշտերին:

Ինքը վանքը իր դանազան շինութիւններով՝ շրջապատված է մի ամուր հին պարսպով: Պարիսպն ունի երկու մեծ դարպաս՝ մինը մեծ, որ բացվում է հիւսիսային կողմից՝ միաբանների և ուխտաւորների համար, իսկ միւսը փոքր՝ հարաւային կողմից՝ ոչխարների և տաւարի համար:

Վանքը բաղկացած է հետեւեալ վեց տեսակի շինութիւններից կամ բաժանմունքներից.—դրսի բազ, ներսի սրահ, եկեղեցիներ, մեծ այգի, ոչխարների բազ և դրախտ (սա մի հրաշալի պարտէզ է և ծառաստան): Հիւսիսային մեծ դուռը տանում է դէպի դրսի բազը, իսկ այդտեղից մի դուռ տանում է դէպի ներսի սրահը, որ ներկայացնում է հետեալ տեսարանը,—մի կողմից քառաւոր հին տաճարներ, իսկ միւս կողմից քարաշէն երկյարկանի սենեակներ, որոնց վերին յարկում կառուցված են գեղեցիկ սինաղարդ պատշգամբներ, այն տեսակ պատշգամբներ, որոնք Հայաստանում կոչվում են երեսբաց (այսինքն մի կողմը բաց): Բազի հիւսիսային կողմից բղիւնում է աղբիւրը, որ կըտրելով սրահը՝ անցնում է դէպի ոչխարների բազը:

Այդ շինութիւններն ամենափառաւոր մասը եկեղեցիներն են, որոնք թուով եօթն են եղել, շինված են միմեանց կից, և համարեա կազմում են մի ամբողջութիւն: Մինչև այժմ էլ թուրքերը եկեղեցիներն այդ խումբը անուանում են «Յէտի քիլիսէ» (Եօթն եկեղեցի): Եկեղեցիները կրում են հետևեալ անունները. ս. Գէորգ, ս. Աստուածածին, ս. Նշան, ս. Խաչ, ս. Յովհաննէս կամ Քառասուն արեղայից եկեղեցի, ս. Սօֆիա և ս. Սիօն:

1097 թւականին՝ Վասպուրականում պատահած ահազին երկրաշարժը կիսով չափ աւերեց այդ եկեղեցիները, բայց և այնպէս ինչ որ մնացել է, կենդանի կերպով վկայում է, թէ ինչ սրտաստուր շինութիւններ են եղել դրանք: Վանքի ամեն մի անկիւնը նոյնպէս կենդանի վկայ է, որ մի ժամանակ՝ շատ դարեր առաջ՝ այդտեղ ապրում է եղել բազմաթիւ միաբանութիւն. վանքը յայտնի էր իր շքեղութեամբ և հարստութեամբ: Ի դուր չէ Վարազը կոչվում «Մայրաքաղաք մենաստանաց»:

Վարազը պատկառելի հուկիւն է: Վանքը կառուցված է 10-րդ դարու վերջերին, ուրեմն մօտ 900 տարւայ շինութիւն է: Դա Վասպուրականի Արծրունեաց թագաւորների ժամանակի գործ է, յատկապէս զրա շինել տուողը Սենեքերիմ Արծրունի թագաւորն է:

Ահա թէ ինչ է ասում այդ մասին Թովմա Արծրունի պատմագիրը. «Եւ ի ստորոտ լերինն շինեաց (Արծրունի Սենեքերիմ թագաւորը) զհօյակապ և զհօչակաւոր մայրաքաղաք մենաստանացն զՎարագ. և կարգեաց ի նմա արա հաւատարիմս և զարդարեաց բազում կրօնաւորօք և երկնադուռար դասու սուրբ քահանայիք, և կարգեաց նոցա ռոճիկս և կեին ի խաղաղութեան ի գաւառն Վասպուրականի, ամենայն աշխարհաց անկեւոյ և գերելոց տեղի ապաստանի ի նմա գտանիւր»:

Եկեղեցիներն մէջ մնացել են Արծրունեաց ժամանակներից շատ թանգազին յիշատակներ: Առանձին ուշադրութեան արժանի են այն գերեզմանները, որոնք գտնվում են Ս. Գէորգ զորավարի եկեղեցու աջակողմեան դասում:

Այդ գերեզմանները թուով երեք են, միմեանց կողքին: Աջակողմեան տապանաքարի վրա կայ հետևեալ երկաթագիր արձանագրութիւնը.

Այս է հանգիստ Սենեքերիմ թագաւորին *:

Դրա կողքին կայ մի ուրիշ տապանաքար հետևեալ արձանագրութեամբ.

Այս է հանգիստ Տէր Պետրոս կաթողիկոսի, որ ի Տրապիզոն զգետն ձորոխ արգելեաց առաջ յարքային **:

Սրա կողքին էլ կայ մի ուրիշ շիրիմ, որը Սենեքերիմ թագաւորի կնոջ՝ Խուշուշ թագուհու գերեզմանն է: Դրա յիշատակութիւնը արձանագրված է ս. Սօֆիա եկեղեցու ճակատին: Սենեքերիմ թագաւորի կինը՝ Բազրատունեաց Գագիկ արքայի աղջիկն էր:

Տամներկուերող դարու պատմիչ Մատթէոս Ուռնայեցին հաստատում է Սենեքերիմ թագաւորի այդտեղ թաղուելը՝ հետև-

* Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի թագաւորը ապրում էր 10-րդ դարի վերջերին և 11-րդ դարու սկզբներին: Նրբ սելջուկները, Տուղրիլ-բէգի առաջնորդութեամբ յարձակվեցան Վասպուրականի վրա, Սենեքերիմը փորձեց դիմադրել: Բայց վերջումը տեսնելով, որ անկարող պիտի լինի նրանց առաջն առնել, դիմեց հետևեալ անպատարեր միջոցին. առաջարկեց իր թագաւորութիւնը յունաց Վասիլ Բ. կայսրին, խնդրելով դրա փոխարէն Սերաստիա քաղաքը, իր աննշան շրջականերով, որպէս զի ինքն այնտեղ ապահով ապրի: Կայսրը սիրով ընդունեց և Սենեքերիմ իր սնով և իշխաններով ու զօրքով տեղափոխվեց Սերաստիա 1021 թւին: Պատմութիւնը աւանդում է, որ միտնելուց յետոյ՝ նրան բերեցին և թաղեցին Վարազում:

** Այդ այն Պետրոս կաթողիկոսն է, որ պատմութեան մէջ յայտնի է Պետրոս Գետադարձ անունով: Պատմական աւանդութիւն կայ, որ իբրև թէ Պետրոս կաթողիկոսը, 1022 թւին, յունաց Վասիլ կայսրի ներկայութեամբ, Ջորջհնեաց օրը, ձորոխ գետի ջուրը կանգնեցրեց, որի պատճառով և կոչվեց Գետագարձ: Պատմութիւնն աւանդում է, որ իբրև թէ այդ հրաշքը նա գործել է Կենաց փայտով:

ևեալ խօսքերով. «.... Յայսմ ամի մեռաւ Սենեքերիմ թագաւորն հայոց և տարան զնա ի գերեզմանն հարց իւրոց, ուր առաջին թագաւորն հայոց թաղեալ կան ի Վարազ վանքն սուրբ Նշահին և անդ թաղեցին զՍենեքերիմ ընդ հարան իւրում»:

Երևում է, որ Արծրունեաց թագաւորները յաճախում էին Վարազ, կամ դուրէ այնտեղ էին անց կացնում տարվայ մի յայտնի ժամանակամիջոցը: Օրինակ՝ եկեղեցիներից մինի, այն է ս. Աստուածածնի եկեղեցում աջ և ձախ կողմից, թագաւորի և թագուհու համար տեղեր կան շինած, գեղեցիկ կամարներով:

Ահա այդ գեղեցիկ և պատմական յիշատակներով հարուստ վանքում բոյն դրեց Խրիբեան:

Մկրտիչ Խրիբեան իր գործունէութիւնը սկսեց Վարազում 1857 թւին: Նա եկել էր այդտեղ նախամտածած ծրագրով և զխառնութիւններով:

Ամենից առաջ նա որոշեց հիմնել այստեղ՝ կենտրոնական ժառանգաւորաց դպրոց, տպարան, մի ամսագիր, և մի գրադարան-թանգարան:

Իր բոլոր որոշումներն էլ նա իրագործեց:

Ժառանգաւորաց դպրոցը հիմնեց Վարազում 1857 թւի մարտի 1-ին: Դա առաջին դպրոցն էր ամբողջ Հայաստանում, որտեղ սկսեցին դաս տալ բնական գիտութիւն, թուրքահայտութիւն, աշխարհագրութիւն, հայոց պատմութիւն:

Այդ դպրոցով Խրիբեան վճռեց միանգամայն ջախջախել հին դաստուութիւնը, մտցնել նոր առարկաներ, դաստուութեան նոր եղանակ: Ժառանգաւորաց դպրոցը մի նոր դպրոց էր, որ աշխատում էր իր հիւրը հաստատել հին դպրոցի աւերակների վրա:

Մկրտում դպրոցը զետեղվեց այն շինութեան մէջ, որը զբանդում էր Վարազի ներքին սրահի աղբիւրի մօտ: Այդ շինութիւնը երկյարկանի էր: Վերին յարկում դպրոցն էր, ներքին յարկում՝ տպարանը:

Վերջումը Խրիբեան դպրոցի համար շինեց աւելի յարմար

շինութիւն, մեծ պատուհաններով, և տպարանի համար էլ պատրաստեց առանձին շինութիւն:

Գպրոցի նախկին շինութեան մէջ վերջը սպրում էր ինքը Խրիբեան:

Գպրոցի ներսն էլ կատարեալ նորութիւն էր ամենքի համար: Աշակերտները այլ ևս չէին նստում գետնին, դօշակնեւրի վրա. դասարաններում դրած էին յարմար նստարաններ: Գպրոցը հիմնվեց սկզբում 30 աշակերտի համար: Այդ թւի համեմատ էլ պատրաստված էր ննջարան և սեղանատուն: Ննջարանում տիրում էր օրինակելի մաքրութիւն: Աշակերտների շրթերը հասարակ էր, բայց մաքուր: Սեղանատանը աշակերտները ստանում էին պարզ, բայց մաքուր և մնդաբար կերակուր, վանքի միաբանների հետ միասին:

Ամբողջ դպրոցի մէջ տիրում էր կարգ ու կանօն. յարաբերութիւնները միանգամայն բարեկամական էին և նոյն խակ ընկերական: Ամբողջ վանքը կարծէք մի ընտանիք լինէր, որի անդամների մէջ տիրում էր փոխադարձ յարգանք, սէր և պարտաճանաչութիւն:

Պարապմունքները վերջացնելուց յետոյ, աշակերտները, օրը մէկ ու կէս ժամ, գնում էին զբօսնելու՝ վանքի գեղեցիկ շրջականերում:

Աշակերտների թիւը սկզբում քսան էր, շուտով աւելացաւ: Դրանց մէջ կային 13 տարեկան պատանիներից սկսած մինչև 25 տարեկան երիտասարդներ: Խրիբեան դրանց ժողովել էր Հայաստանի զանազան կողմերից, մեծ մասամբ Վասպուրականից և Վանից:

Գպրոցի գլխաւոր ղեկավարը, ինչ ասել կուզէ, ինքը Խրիբեանն էր: Նա ամեն ջանք թափում էր, որպէս զի դպրոցը թէ՛ ներքին և թէ՛ արտաքին կողմից լինի անպայման օրինակելի, որովհետև Խրիբեանի նպատակն էր այդ դպրոցով օրինակ տալ ամբողջ Հայաստանին և նոր տեսակ դպրոցների հիւրը դնել:

Տպարանը, որ հիմնեց Վարազում, Խրիբեանի սիրած երկ-

րորդ դարձն էր: Հայաստանում առաջին տպարան հիմնողը և առաջին լրագիր հրատարակողը՝ նա է:

Առաջին մարդը, որ յիսունական թւականներին, սրանից մօտ կէս դար առաջ յայտնեց, թէ կարելի է Հայաստանի այս կամ այն կենտրոնում տպարան հիմնել և լրագիր հրատարակել, — Խրիմեանն էր: Եւ նրան դրա համար շատերը խեն թ էին կարծում:

— Ինչ կըսէ այս մարդը, խենթ է, թէ երեսայ,—ասում էին Պօլսի էֆէնդիները և ունները թափ տալով հեռանում:

Սակայն շատ շուտով իրականացաւ այն, ինչ որ խենթութիւն էր համարվում:

Խրիմեան բերել տուեց Վ. Պօլսից մամուլ, թուղթ, տառեր, մի խօսքով ինչ որ հարկաւոր է տպագրութեան համար, և 1857 թւից սկսեց հրատարակել ամսագիր:

Դա «Արժուի Վասպուրական» ամսագիրն է, որի սնունդը լաւ յայտնի է հայութեան:

Տպարան հիմնել և ամսագիր հրատարակել մի այնպիսի տեղում, որը կտրված է քաղաքակիրթ աշխարհից, որտեղ չը կար դպրոց, որտեղ մարդիկ զրել կարգալու թհամի էին, ուր մինչև անգամ չեն էլ լսել և չը գիտեն թէ ինչ բան է տպարանը, մամուլը, լրագիրը, ուր վերջապէս չը կայ պօստ, հաղորդակցութիւն, — կը նշանակէ ճշմարիտ մի այնպիսի յանդուգն ձեռնարկութիւն սկսել, որը հասարակ մարդկանց կարծիքով՝ կատարեալ խենթութիւն է, և որն իրագործել կարող են միայն Խրիմեանի պէս մարդիկ:

Երբ մամուլը և տառերը հասան Վարազ, Խրիմեան իրան այնքան երջանիկ զգաց, որ մոռացաւ իր կրած բոլոր նեղութիւնները:

Իսկոյն մամուլը զետեղեց յարմար շինութեան մէջ, և կարճ միջոցում քաց արաւ տպարանը: Ետրոյները մեծ մասամբ աշակերտներն էին: Պարապմունքներից ազատ ժամանակ՝ աշակերտները և միաբանները աշխատում էին տպարանում. — ոմանք շա-

րում էին, ոմանք մամուլն էին կառավարում, ոմանք մուր էին տալիս, ոմանք թուղթ...

Երկար ժամանակ չանցած՝ լոյս տեսաւ Հայաստանի առաջին ամսագրի՝ «Արժուի Վասպուրականի» առաջին համարը:

Դա մի տն էր Վարազի համար. մի անմոռանալի օր՝ Խրիմեանի համար:

Այդպիսի օրերը չեն մոռացվում... Աւելորդ չենք համարում ամսագրի մասին մի քանի մանրամասնութիւններ առաջ բերել:

«Արժուի Վասպուրականը» լոյս էր տեսնում ամիսը մի անգամ: Խրաքանչիւր համարը բաղկացած էր լինում մօտ 30 կերեսից, մեծ դիրքով: Կաղմի ճակատին նկարած է մի գեղեցիկ, թեատարած արծիւ, որի կտուցում բռնած ժապաւէնի վրա գրած է երկու բառ՝ «Արժուի Վասպուրական»: Նրանից ներքև այս տողերը. «Թ ու ու յ ե ա լ հ ա յ ը ն ա ս է ը թ ե ո ք յ Ա ր ժ ու ը ն ի մ ե ն ա ս տ ա ն է ն Վ ա ը ա գ ա յ »: Խմբագիր հայրենախօս՝ Մկրտիչ վարդապետ Խրիմեան:

Առաջին երեսի վրա տպած է մի ուրիշ, հետաքրքրական պատկեր. մի կողմից երևում է Վարազը՝ իր բարձրութեան վրահեռաւորութեան վրա տեսնվում է Վանայ ծովը և Վանը. Վարազի կողմից լոյս է ծագում. իսկ օդի մէջ սաւառնում է Արծիւը՝ կտցում մի թուղթ, հետեւալ երկու բառով. «Ո Ղ Չ յ Ն հ ա յ ը ն ե ա գ »:

Դա Խրիմեանի ողջոյնն է իր հայրենիքին....

Ամսագիրն ունէր երեք գլխաւոր բաժին:

1) Հանդէս Աստուածապաշտութեան, որի մէջ արծարվում էին քրիստոնէական բարձր գաղափարներ, գրվում էին նշանաւոր եկեղեցականների կենսագրութիւնները և գործերը:

2) Հանդիսարան հայրենաշէն առաքիւնաց, որի մէջ խօսվում էր նշանաւոր թագաւորների, իշխանների և առհասարակ պատմական մեծ անձնաւորութիւնների մասին, աշխա-

տելով պարզել, թէ ինչ մարդիկ էին նրանք և ինչ արեցին, նը-
կարագրելով Հայոց պատմութեան բոլոր նշանաւոր շրջանները
և պատմական բոլոր նշանաւոր հերոսներին:

3) Տեսարանք հայրենեաց, որտեղ տրվում էին նշա-
ւոր հնութիւնների, վանքերի, քաղաքների և գիւղերի նկարա-
գրութիւնները, ժողովրդի կենցաղավարութեան հետ միասին:
Գա երկրի ուսումնասիրութիւնն էր:

4) Թանգարան հայկական դպրութեանց. այդ
մասի մէջ տարգրվում էին մանրամասն տեղեկութիւններ այն-
բոլոր հին և նոր ձեռագիրների և գրքերի մասին, որ խրիմեան
ձեռք էր բերում Հայաստանի զանազան կողմերից:

Վերջապէս ամսագրի մէջ կար և մի ուրիշ բաժին, բուն
բարոյակրթական նիւթերի և այլ ընթացիկ տեղեկութիւնների
համար:

Սկզբում ամսագրի ոչ թէ միայն խմբագրողը, այլ և գըլ-
խաւոր գրողը ինքը՝ խրիմեանն էր: Նա իր աղբու յօդուածներով,
որոնց մէջ արտախայլում էր նրա հոգին և միտքը, զարդարում
էր ամսագրի էջերը: Խակ ամսագրի գոյութեան երրորդ տարվա-
նից արդէն, Ժառանգաւորաց դպրոցի աշակերտները, որոնք մեծ
առաջադիմութիւն էին արել և բաւական մտաւոր պաշար ձեռք
բերել, սկսում են աշխատակցել և իրանց գրած յօդուածները ու-
ստանաւորները տարագրել: Մեծ եռանդով գրում էին ամսագրում
Ժառանգաւորաց դպրոցի աշակերտներից՝ Գարեգին Սրուանձ-
տեան (այժմ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեան), Գալֆաղ-
ձեան (վերջումը վարդապետ), նոյնպէս Արսէն Թոխմախեան
(վերջումը Արսէն վարդապետ Թոխմախեան), և ուրիշները: Եր-
բեմն երբեմն գրում էին և միաբանները: 60-ական թւականնե-
րի սկզբներում սկսեցին երեւալ «Արծուի» մէջ նոյնպէս և Բաֆ-
ֆիի մի քանի կտոր գրուածքները, որ այն ժամանակ գրում էր
Յակոբ Մէլիք-Յակոբեան ստորագրութեամբ:

Խրիմեանի անընկճելի կամքը և եռանդն էր, որ կարողա-
նում էր պարբերաբար լոյս ընծայել ամսագիրը, որովհետեւ ամեն

քայլափոխում սարսափելի դժուարութիւնների էր հանդիպում:
Մի քանի տարի անցկացաւ, մինչև որ կարելի եղաւ վարագում
ունենալ փոքր ի շատէ փորձված գրաշար, տարագրիչ, մեխանա-
հար: Տեսնելով, որ ամեն անգամ՝ տառ պակասած ժամանակ,
պէտք է դիմել Կ. Պօլիս, որ մի քանի ամիս էր քաշում, խրիմ-
եան վարագում կազմակերպեց մի փոքրիկ ձուլարան և:

Պատահում էին և այնպիսի բոսպէսներ, երբ եռանդոտ վար-
դապետի սիրտը ճարձում էր:—Յանկարծ թուղթը սպառվում էր.
Թուղթ չը կայ: Կ. Պօլից պիտի գայ. չէ գալիս: Ստիպվում էին
ամսագրի համարը ուշացնել: Ի՞նչ պէտք է անեն. վանում չէ կա-
րելի ոչ թուղթ գտնել, ոչ մելան: Ո՞վ էր տուել վանում թուղթ
կամ մելան:

Վերջապէս մի կերպ տարագրում էին համարը, զիշեր ցե-
րեկ աշխատելով: Համարները պէտք է ուղարկել բաժանորդնե-
րին: Բայց կարաւան չը կայ: Պօստ չը կար. «Արծուի վասպու-
րականը» հեռաւոր բաժանորդներին ուղարկվում էր կարաւան-
ների միջոցով. և եթէ պատահում էր, որ մի քանի ամիս շարու-
նակ կարաւան չէր լինում, համարներն էլ մնում էին: Այդպիսով
յաճախ բաժանորդներն ամիսներով չէին ստանում «Արծիւը», ո-
րին, պէտք է ասել, սիրով սպասում էին, և աւելի մեծ սիրով կար-
դում, որովհետեւ ամսագիրը ներշնչված էր ոգևորող զգացմունք-
ներով, զեղեցիկ զաղափարներով:

«Արծուի վասպուրականը» — ինքը խրիմեանն է:
Իրան խրիմեանին՝ վերջումը անուանեցին վասպուրականի
Արծիւ:

Իր ամեն մի տողում խրիմեան ցոլացնում էր հայրենա-
սիրական խոր զգացմունք, անսահման սէր դէպի մարդիկ: Նա
նոյն ոգին էր ներշնչում իր աշակերտներին, որոնք իրանց կող-
մից՝ իրանց վարդապետի մտքերի և զգացմունքների մոլեռանդ
տարածողներն էին:

«Արծուի վասպուրականը» աշխատում էր արթնացնել
թմրած ժողովրդին, հանում էր պատմութեան խորքերից նախ-

Նիքոնեան փայլուն գործերը և զնուս հայութեան առաջ, պատկերացնուս էր փառաւոր անցեալը, և ապա տխուր սրտով նկարագրելով այն խաւարը և թշուառութիւնը, որով շրջապատված է ժողովուրդն իր բնիկ հայրենիքում—կանչում էր նրան զէպի առաջադիմութիւն, զէպի լոյս, զէպի վերածնութիւն...

Եւ նրա ձայնը արձագանք էր գտնուս:

Ժողովրդի ականջին հասաւ Վարազդից հնչող ձայնը, և նա սկսեց սիրել Խրիմեանին այն անխարդախ և անկեղծ սիրով, որով միայն ժողովուրդը կարող է սիրել:

Խրիմեանի անունը սկսեց հռչակվել...

Ահա թէ ինչ էր գրում նա 1862 թւին.

«... Ես Արծիւ, ցանկացող կենաց և բարեաց իմ Հայաստանին. նորա ընթաց վերաց խոյացայ, նորա դաշտն ու հովիտը ողջունեցի. նորա գեղն և քաղաք, չէնն ու աւերակ ես տեսայ, իջնանեցի և անցայ. շատ տեղեր լացի և երբեմն ուրախացայ. տեսածներս ամեն պատգամ յօրինեցի և ձեզ, ով իմ ընթերցողք, ձեզ նուէր բերի, ձօնեցի:

«Իմ շրջան այժմ և յաւէտ Հայրենեաց սահմանի մէջն է. ես Հայաստանի սիրահար հաւ մի եմ. իմ ձայն ու եղանակ Հայաստանի և հայրենասիրի երգ է. թէ լամ՝ այդ անունը կը յիշեմ. թէ գեղգեղեմ՝ այդ անունը կը հնչեմ. վերջապէս դա իմ սերն է, իմ տէրն է, ես նրա անձնանուէր գերին եմ:

«Կուք, որդիք Հայաստանի, ուր որ հանդիպեցաք ձեր Արծուոյն, սիրեցիք զինքը, ողջագուրեցիք, գրկեցիք զինքը...»

Վարազի անունը հռչակվում էր:

Պատմական վայնքը նոր ոգի, նոր կեանք էր ստացել: Նախկին ամայութեան փոխարէն տիրում էր կեանք: Աւերակները նորոգվում էին, կառուցանվում էին նոր շինութիւններ: Վանքի բոլոր կողմերում, սրտեղ բոյն էին գրել օձերը և մողեսները, տընկում էին ծառեր, այգիներ, պարտէզներ:

Վարազի դպրոցից՝ աշակերտների միջոցով և տպարանից՝ «Արծուի Վասպուրականի» միջոցով դուրս էին բղխում նոր մտքեր, նոր դադափարներ, վերածնութեան նոր ոգի: Այդտեղից իբրև մի հնոցից՝ չորս կողմը տարածվում էր լոյս, ողևորութիւն, կայծեր...

Թմրած հայ ժողովրդի վերածնութեան համար Խրիմեան ունէր մի ընդարձակ ծրագիր: Նրա կարծիքով հարկաւոր էր ժողովրդի մէջ մտցնել նոր հասկացողութիւններ և ձգտումներ, որ նա կարողանայ ըմբռնել իր նեղ վիճակը և շարժվի զէպի առաջ: Հին սերնդի վրա նա բոլորովին յոյս չունէր: «Եթէ կը փախագնեք,—գրում էր նա,—որ հայրենեաց երկրի անդաստանը բաղմապատիկ պտուղներ տայ, հոգ տանենք աւելի գարնանապսակ մատաղ տունկերուն, որոնց դալար ճիւղերուն՝ գաղափարները շուտով կը պատուաստուեն իրարու հետ ու կը միանան: Ընդունայն և դուր տեղ չաշխատենք հաստացած ու պնդացած մեծամեծ ճիւղերը պատուաստելու, որոնք մինչև գերեզմանին դուռը երբէք միանալ չունեն նոր աշխարհի ուսումնասնողիկ մատաղ տունկերուն հետը. թէև բիւր եղանակ աշխատես կամ գրչի սուր տապարներով սպառնաս»:

Շատ լաւ ուսումնասիրելով հայ ժողովուրդը, նա եկել էր այն եզրակացութեան, որ դարերով ստրկացրած, քարացած ժողովրդի հին սերնդին գաղափարներ պատուաստելը համարեա անհնարին է, և պէտք է ուշք ու միտքը նուիրել նոր, մատաղ սերնդին...

Խրիմեանի մտածողութեան առարկան միայն Վարազի դպրոցը և մամուլը չէին. նա գիշեր ցերեկ աշխատում էր, որ դրանց ազդեցութիւնը տարածվի Հայաստանի բոլոր կողմերում և դրանցից օրինակ առնեն:

Հիմնելով Ժառանգաւորաց դպրոցը և «Արծուի Վասպուրականը», նա միայն իր անագին ծրագրի հիմքն էր դնում:

Նա նպատակ ունէր պատրաստել լաւ վարժապետներ ժողովրդական դպրոցների համար և լաւ հոգևորականներ՝ ժողովրդի համար:

Հայաստանի բոլոր կողմերում կան հարիւրաւոր վանքեր, ահագին շինութիւններով և եկամուտներով: Հայ ժողովուրդը այդ վանքերին կտակել է ահագին հարստութիւններ: Մի ժամանակ այդ վանքերը ահագին դեր էին կատարում, իսկ այժմ միայն նրա համար են, որ այնտեղ կեցող միաբանութիւնը ուտի վանքի եկամուտները և աղօթք անի: Աղօթելով ժողովուրդը չի փրկվիլ: Ուստի նա առաջարկում էր այդ վանքերում, ընտրելով ամենայարմարները, բայց անել ժ ա ու ա ն գ ա ռ ո թ ա յ գ զպրօցներ, որոնք պիտի պահվեն գլխաւորապէս վանքի հաշուի և այնտեղ ձրիաբար ուսում առնեն ժողովրդի զաւակները, գլխաւորապէս այն նպատակով, որ վերջումը դրանք իրանց նուիրեն հոգեւորական կամ վարժապետական կոչման: Վանքերում հիմնվելի ժառանգաւորաց զպրօցները, խրիմեանի ծրագրով, չը պէտք է լինէին բուն վանական զպրօցներ, այլ նոր ձևի, նոր կազմակերպութեան ուսումնարաններ:

Գպրօցների հետ միասին՝ խրիմեան առաջարկում էր հիմնել այդ վանքերում՝ տարան, գրքեր և նոյն իսկ պարբերական հրատարակութիւններ տարագրելու համար: Նոյն այդ միտքն է որ մտցրված է Սահմանադրութեան մէջ, որի յօդուածներէց մինը հետևեալն է ասում. «Բոլոր վանքերը ազգին բարոյական զարգացմանը ծառայելու պարտաւոր են. ուստի ամեն մէկը իր կարողութեան չափով՝ ունենալու է (չնծայարան, Թանգարան, Տպարան, Հիւանդանոց և ասոնց պէս ուրիշ ազգօգուտ հիմնարկութիւններ):»

Վանքերի ժառանգաւորաց զպրօցներով պէտք է հիւրըրվէր: խրիմեանի երկրորդ և ամենազլխաւոր ցանկութիւնը ժ ո Ղ ո վ ղ ա կ ա ն գ ա ղ ո յ ն էր: Յիսուսական թեոլոգիայից արդէն նա մշակում էր այդ ծրագիրը, և եռանդով քարոզում էր բանալ ժողովրդի համար՝ ժ ո Ղ ո վ ղ ա կ ա ն զպրօցներ: «Ո՞վ է վճուր հայ ժողովրդեան համար, որ այս սոցիալութեան կամ դժոխական զնդանին մէջ յաւիտեան տանջվի» — Ըստականչում էր դեռ սրանից մօտ յիսուս տարի առաջ Վասպուրականի Արծիւը»

պատմելով որ ամբողջ Հայաստանի մէջ մի հատ դպրոց չը կայ, և ամբողջ Հայաստանի մէջ Գիողեհէսի լապտերով պէտք է փնտրել մի հատ ուսեալ մարդ...

Հասկանալի է, որեմն, թէ ինչքան պիտի ուրախանար խրիմեան, երբ լսում էր թէ մի ուրիշ տեղում էլ բացվում է՝ իր ժառանգաւորաց զպրօցի նման դպրոց, կամ թէ միտք կայ մի տարան հիմնելու: Օրինակ, երբ 1858 թւին խրիմեան լսեց թէ բարձր Հայքում, Արարի մօտ գտնվող ս. Լուսաւորիչ վանքում մտադրութիւն ունեն բանալու ժառանգաւորաց զպրօց՝ շրջակայքի համար, նա այնպէս ուրախացաւ, ինչպէս այն հայրը, որ գտնում է կորած որդուն: Ամեն մի նոր դպրոց հիմնելը՝ նա համարում էր փառաւոր յաղթանակ՝ իսաւարի և գերութեան դէմ:

Այդ բոլորը, ինչ որ պատմեցինք, գործի ուրախալի կողմն էր: Բայց նա ունէր և իր շատ տխուր կողմերը:

Ամեն կողմից թշնամութիւն, նենդամիտ մատնութիւններ, որոգայթներ. — ահա թէ ինչով էին վարձատրում խրիմեանին նրա հակառակորդները, գլխաւորապէս կղերը:

Գեռ երկու տարի չէր լրացել՝ որ Վարագում հաստատվել էր, այն է 1858 թւի վերջերին, խրիմեան ստիպվեց գնալ Պօլիս, որ նախ արդարանայ իր դէմ եղած մատնութիւններից, և մի փոքր էլ դրամական օգնութիւն բերի իր մեծածախ գործի համար:

Վանից Պօլիս գնալը հեշտ բան չէր: Գնացողը գուցէ և չը վերադառնար: Տխուր սրտով խրիմեան մնաս բարով ասեց Վարագին և Վանին: Վարագում պատարագ մատուցեց. ապա, հայկական սովորութեամբ, Այգեստանի ս. Աստուածածին եկեղեցուն էլ պատարագ մատուցեց ի յիշատակ իրանց տան ննջեցեալների: Այցելեց Վանի նահանգապետ փաշային, և խնդրեց, որ մինչև իր գալը մի փոքր աւելի հող տանի Վարագի ապահովութեան վրա: Երբ իմացան խրիմեանի մեկնելը, գիւղացիները, ո-

րոնք երդվում էին Խրիմեանի անունով, շրջակայ գիւղերից հաւաքվեցին, որ ստանան նրա հրաժարական ողջոյնը:

Խրիմեան աջողութեամբ հասաւ Պօլիս: Խր դէմ լարած խնորհները ոչնչացրեց, և մի փոքր էլ դպրոցի համար դրամական օժանդակութիւն հաւաքելով, և մի նոր մամուլ առնելով՝ շտապով վերադարձաւ Վարագ:

— Սպասեցէք, ձմեռն անցնի. ճանապարհները երկիւղալի են, ասում էին Պօլսի նրա բարեկամները: Գուցէ կարաւան կը պատահի. կարաւանի հետ կերթաք:

— Չեմ կարող, որդիքս ինձ սպասում են.— ասում էր Խրիմեան և ճանապարհ ընկնում:

Սակայն խաւարամիտ կղերի և աղաների թշնամութիւնը ծածուկ կերպով առաջ էր գնում: Նրանք աշխատում էին, որ Վարագը եկամուտներից զրկվի, որ դպրոցն էլ փակվի, տպարանն էլ: Խրիմեան մարդկային ոյժից վեր ջանքեր էր անում, որ համ իր թշնամիների լարած որոգայթների մէջ չընկնի, համ էլ առաջ մղի այն գործը, որին ինքը նուիրված էր:

Առաւօտից մինչև երեկոյ քրտինք էր թափում, խորհում, միջոցներ էր որոնում:

Մի-մի անգամ, երեկոյեան պահուն, երբ աշակերտները և միաբանները իրանց սենեակները քաշված՝ դբադված էին լինում, Խրիմեան յոգնած, սրտնեղած՝ գնում նստում էր Վանքից դուրս, մի քարի վրա, որտեղից բացվում է գեղեցիկ տեսարան դէպի Վանի ծովը:

Յոգնած, վատտակած՝ թիկունքը ժայռին տալով՝ նա նայում էր դէպի Վան, դէպի շրջակայ գիւղերը, և հազարաւոր մտքեր գալիս պաշարում էին նրան:

«Աը գայ արդեօք մի օր,— մտածում էր նա այդ առանձնութեան մէջ,— որ այլ ևս այսքան անարդար կերպով չը տանջվենք, չը չարչարվենք: Աը գայ արդեօք այն օրը, երբ մեր գիւղացին հանգիստ կերպով կը վայելէ իր հալալ աշխատանքը, և այս երկրում կը տիրի արդարութիւն և խաղաղութիւն: Աը գայ

արդեօք մի օր, երբ մեր այս ձորերում, ուր միայն աւազակներին հրացանի տրպռոց է լսվում, լսվի երկաթուղու շողեկառքի սուլոցը, և մենք էլ ունենանք հեռագիր, պօստ. դպրոցներ: Աը տեսնի արդեօք Վասպուրականի այս մեծ քաղաքը իր պատերի մէջ մի համալսարան, որտեղ այս աշխարհի երիտասարդները, որոնք այժմ օտար երկիրներում, պանդխտութեան մէջ իրանց կեանքն են մաշում, ուսում առնէին, գիտութիւն ձեռք բերէին և բաղբաւոր ապրէին: Եւ կը գայ արդեօք այն օրը...

Վարդապետի դէմքը ծածկվեց խորին տխրութեամբ: Նրա մէջ կարծէք կուռում էին երկու զգացմունք: Նա չը գիտէր հաւատայ, թէ ոչ:

Յանկարծ նա ժպտաց, նրա դէմքը փայլեց՝ ինչպէս վաղ որդեան արշալոյս:

— Աը գայ, բացականչեց նա հրճուանքով. հարկաւոր է միայն աշխատել և գործել:

Եւ միւս օրը սկսում էր աշխատել և գործել՝ աւելի մեծ եւ ուանդով, աւելի մեծ հաւատով:

VI

Վարագի դպրոցը, տպարանը և Խրիմեանի միւս ձեռնարկութիւնները անազին ծախս էին պահանջում, որոնց ծածկելու համար նա ստիպված էր լինում զիմելու այս և այն տեղի հասարակութեան օգնութեան: Շատ անգամ նա հազարաւոր վերստ ճանապարհ էր անցնում, որպէս զի միջոց ձեռք բերի և գործը շարունակի:

Արդարացի են Խրիմեանի հետեւալ խօսքերը իր մասին. «Տաժանելի պանդխտութենէն դարձած կը կարծէի, որ փոքր ինչ հանդիստ զանեմ հայրենեաց գրկարանին մէջ, բայց մի ձայն ինձ կըսէ. «քս հանգստութիւն քանի մը ամիս է. դարձեալ պատրաստէ տրեխներդ դէպի պանդխտութեան ճանապարհ»:

Թող չը կարծեն, թէ խօսքերս զանգատի, կամ տրտուճի եղա-

նակ է. քառ. Արծիւը հայրենեաց մշակն է, հայրենեաց սէր իր հրամանատարն է, թող ուր կուզէ վարէ ու մղէ»:

Այս անգամ մղեց նա դէպի Կովկաս:

Մինչև այդ ժամանակ Խրիմեան զբամական անջակցութիւն ստանում էր զլիսաւորապէս Կ. Պօլսի հայերից: Այս անգամ նա վճռեց զխմել ռուսահայերին: Կովկաս դալով՝ բացի զբամական հանդանակութիւնն անելուց, Խրիմեան ռնէր և մի ուրիշ նպատակ,—այն է ծանօթանալ ռուսահայերի կեցութեան և մտաւոր կեանքի հետ:

Նա վարագից ճանապարհ ընկաւ դէպի Կովկաս 1860 թւի նոյեմբերի 10-ին: Ոտք դնելով Ռուսահայաստանում, Խրիմեան պարտք համարեց ամենից առաջ դնալ Էջմիածին, համբուրել իջման տեղը և ներկայանալ կաթողիկոսին:

Կաթողիկոսը այդ ժամանակ Մատթէոսն էր:

Էջմիածնում Խրիմեան մնաց եօթն օր: Ներկայանալով կաթողիկոսին, նա նկարագրեց Հայաստանի վիճակը, բացատրեց որ առանձին ուշք պիտի դարձնել բնիկ երկրի ժողովրդի վրա, պատմեց իր ձեռնարկութիւնների մասին, խնդրելով որ իրան մի կօնդակ տրվի, որպէս զի ինքն այդ կօնդակով պտտի Կովկասի զանազան կողմերը և հանդանակութիւն անի:

Աղբւում Մատթէոս կաթողիկոսը մի որոշ դիրք չէր բռնում դէպի Խրիմեանի առաջարկութիւնները: Կաթողիկոսի այդ տատանման նպատակով էին վանքի միաբաններըց շատերը, որոնք առհասարակ վատ աչքով սկսեցին նայել Հայաստանից եկած վարդապետի վրա, որ իր գաղափարներով և սովորութիւններով միանգամայն տարրերվում էր իրանցից: Բաւական դժուարութիւններից յետոյ, զլիսաւորապէս մի քանի աղղեցիկ աշխարհականների խնդրքով, Խրիմեանին տրվեց կաթողիկոսական կօնդակ, որը ստանալով, նա անմիջապէս ուղևորեց Թիֆլիս, ուր այդ ժամանակ առաջնորդ էր Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալեան, և իջաւ առաջնորդարանում:

Խրիմեանի գալը մի մեծ նորութիւն էր քաղաքի համար:

Վարձ միջոցում չնորհալի վարդապետը ընդճանուր ուշադրութեան առարկայ դարձաւ, և անջնջելի յիշատակ թողեց Թիֆլիսի վրայախօս և քարացած հայ ժողովրդեան մէջ:

Նա տիրեց ժողովրդի մտքին և սրտին—իր քարոզներով: Խրիմեանի նման քարոզիչ Թիֆլիսը չէր տեսել և նրանից յետոյ էլ չը տեսաւ: Առաջին անգամն էին տեսնում եկեղեցու բեմի վրա մի մարդ, որ խօսում է ժողովրդին սիրելի հարցերի մասին, և այն էլ այնպէս է խօսում, որ քարասիրտ մարդն էլ զգացվում, յուզվում, ողբորվում էր: Մինչև այժմ էլ Թիֆլիսի մէջ շատերը յիշում են այն բարձրահասակ, արծաթիթ վարդապետին, որ եկեղեցու բեմից ողջոյններ էր տալիս ժողովրդին՝ Հայաստանի ա՜նունից, քարոզում էր մարդասիրութիւն և առաջադիմութիւն, և ամենամանինայ կերպով յարձակվում նրանց վրա, որոնք իրանց թոյլ են տալիս խաբել, մատնել, հարստահարել...

Հայաստանցի վարդապետը կարճ միջոցում ժողովրդի պաշտելին դարձաւ: Ամենքն էլ ուզում էին նրա հետ ծանօթանալ, խօսել, նրանից մի յիշատակ ստանալ: Նրա գնալուց յետոյ էլ ժողովուրդը նրան չը մոռացաւ, և մինչև այժմ էլ Թիֆլիսեցի ծերերը նրա մասին հարիւրաւոր գովասանական զրոյցներ են պատմում:

Ահա թէ ինչպէս է նկարագրում Խրիմեանին՝ այն ժամանակից հայ զրոյններից մինը՝ Գարեգին Մուրադեան (այժմ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեան) «Կոռնիկ» ամսագրում.

«... Այս վրայ երկրորդ կիրակին է, որ տեղիս եկեղեցական տաճարների սեղաններն զբոլում են մի հայրենասէր ողով վառուած նորակ վարդապետի նորօրինակ քարոզութեամբ: Այս վրայ երկրորդ կիրակին է, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը ուրախ ու զուարթ լցելում է եկեղեցին՝ լսել մի վառվռուն և ազատամիտ վարդապետի հայրենասիրական քարոզութեանց, իրան հայրենի երկրի նուիրական սարերի, դետերի և քաղաքների ա՜նուններն, իրան եկեղեցաչէն հայրերի և հայրենաչէն թաղաւորների և նախարարների առաքինի մեծագործութեանց յիշատակ-

ներն, իրան ազգի անցած և զնացած փառաւորութեան և ներկայի անփառունակ վիճակի նկարագրութիւններն: Այս վրայ երկրորդ կիրակին է, որ Թիֆլիսի հայ ժողովուրդը շարժուած և ոգևորված հայրենեաց յիշատակով՝ խօսելու, դատելու, հարցասիրելու և բաղդատելու առարկայ է շինել իր անցեալ և ներկայ կեանքն և վարկերն ու այժմեան վիճակը... Ո՛վ է այդ վարդապետն, որ այս ժամանակուսն քաջ ճանաչում է իրան մեծ կոչումն, վարվում է իրան կոչումին համաձայն և փառասիրութեան, անձնապաշտութեան, ծուրութեան և մեղկութեան կուռքերն ոտքի տակ փչրելով՝ և միայն ազգային փառացը և պարծանացը փախաքելով՝ համարձակ լսելի է անում իր ձայնն... Դա «Հրաւիրակ Արարատեան» և «Հրաւիրակ Աւետեաց երկրին» գորովաշարժ հեղինակութիւնների հողեծանօթ հեղինակն է, Մկրտիչ վարդապետ Սրբիմեան, որ այժմ Թիֆլիսում հանդիպելով, քարոզութիւն է անում. ազգի կարօտութեանը և բաղձանքին յարմար վարդապետ, որ մի ձեռքին ունի ազգային կեանքի պատմութիւնը, իսկ միւսում Ս. Գիրքը, մի ձեռքին ունի անցած զնացած կեանքի մնացորդներ և փոշիներ, կորուստ և տխուր յիշատակներ, իսկ միւսումն յոյս և կենդանութիւն»...

Սրբիմեան այնքան չը մնաց Թիֆլիսում, որքան ուզում էր: Հանդամանքները փոխվեցին: Հանդամակութիւնը, որ սկսվեց մեծ աջողութեամբ, կիսատ թողնելով՝ Սրբիմեան մեկնեց Թիֆլիսից և անցնելով Գանձակ ու Շուշի, ուր նրան նոյն սիրով ընդունեց ժողովուրդը, նա շուտափոյթ վերադարձաւ Էջմիածին:

Կաթողիկոսն էր նրան կանչել: Էջմիածնում նրանից յետ առան կօնդակը: Վասպուրականի Արծիւը հեռացաւ Էջմիածնից...

Անցնելով Երևան, Նախիջևան և Աղուլիս, և սիրալիր ընդունելութիւն զանելով, նա մտաւ Պարսկահայաստան:

Մի առ ժամանակ Պարսկահայաստանում մնալով, 1861 թւին Սրբիմեան վերադարձաւ Վարազ, ուր իր ձեռք բերած միջոցներով և եռանդով նոր զարկ տուեց զպրոցին, տպարանին և «Արծուի Վասպուրականին»:

Կովկաս եղած ժամանակ Սրբիմեան՝ 1861 թւի «Կռունկ» ամսագրում գրեց մի հետաքրքրական և ոգևորված յօդուած «Ջայն Վասպուրական Արծուոյն» վերնագրով: Նոյն յօդուածը տպագրվեց և Կ. Պօլսի «Մեղու» լրագրում*, որը մեծ համակրութեամբ էր վերաբերվում զէպի Սրբիմեանի մտքերը և գործունէութիւնը:

Վարազ վերադառնալով Սրբիմեան՝ 1861 թւի «Արծուի Վասպուրականի» մէջ նկարագրեց թէ ինչ տպաւորութիւն թողեցին իր վրա Էջմիածինը և ուսուհայերը: Իսկ նրա աշակերտներից մինը, Գարեգին Արուանձտեան՝ (Կովկաս գնալով Սրբիմեան իր հետ տարել էր իր աշակերտներից մի երկուսին) տպագրեց նոյն ամսագրում Կովկասեան մի քանի տեղերի նկարագրութիւնները և մի քանի տպաւորութիւններ:

VII

1862 թւին Սրբիմեանի առաջ բացվեց գործունէութեան մի նոր և լայն ասպարէզ,—այն է Տարօնը:

Տարօնի ամբողջ վիճակի ազգային և եկեղեցական գործերը տակն ու վրա էին եղել: Ս. Կարապետի նշանաւոր վանքը դարձել էր անգործ վանականների բոյն, որոնք ուտում, փչացնում էին վանքի ահագին եկամուտները, առանց մի օգուտ տալու:

Հարկաւոր էր մի մարդ, որ կարգի բերէր այդ բոլորը:

Պատրիարքարանը և Ազգային վարչութեան խառն ժողովը կանգ առան Սրբիմեանի վրա, որի վերաջին ողոյժը խոստովանում էին նրա թշնամիներն անգամ, մանաւանդ որ ինքը Տարօնի հայ ազգաբնակութիւնը փափագ էր յայտնել իր մէջ տեսնելու այն համբաւոր վարդապետին, որի արևով երզվում էր Վասպուրականը:

* Կ. Պօլսում հրատարակվում էր «Մեղու» լրագիր, իմբագրութեամբ Արվաճեանի:

Խորիմեան նոր պաշտօն չէր սպասուած: Կ. Պօլսի կարգադրութիւնը անսպասելի էր ամբողջ Վարազի համար: Մի գեղեցիկ օր Վարազ հասաւ արքունի հրովարտակը, և ապա եկաւ Կ. Պօլսից ուղարկված յատուկ հրաւիրակը, որ մի մշեցի էր, ու բերեց Պատրիարքարանի կողմից պաշտօնական թուղթը, որով ծանուցանուած էին, թէ Մկրտիչ վարդապետը նշանակված է Տարօնի առաջնորդ և ս. Կարապետի վանքի վանահայր, վերապահելով նրան և Վարազի վանահայրութիւնը:

Այդ լուրը կայծակի պէս տարածվեց ամբողջ Վասպուրահանուած: Խորիմեանի աշակերտները և բարեկամները չը գիտէին տխրեն, թէ ուրախանան: Մի կողմից տխրեցին, որ պէտք է զրկվեն իրանց սիրած մարդուց, իսկ միւս կողմից ուրախ էին, որ նա ստանում է մի մեծ պաշտօն և միջոց պիտի ունենայ ծառայելու ահագին վիճակի ժողովրդին:

Խորիմեանի համար ծանր էր բաժանվել Վարազից: Վարազը նրա գեղեցիկ նախաձեռնութիւնների օրօրսցն էր: Բայց նա չէր կարող չը բաժանվել, որովհետև օգնութեան էր կարօտ այն երկիրը, ուր պիտի գնար:

Նախ ըսն ճանապարհ ընկնելը՝ Խորիմեան զանազան կարգադրութիւններ արեց, որպէս զի իր բացակայութեան ժամանակ էլ Վարազի գործերը իրանց կարգով առաջ գնան:

Վարազի միաբաններից Մեսրոպ վարդապետին կարգեց վանքի արտաքին և ներքին կառավարութեան փոխանորդ. Ժառանգաւորաց դպրոցի վարչութեան ղեկը յանձնեց Եղնիկ վարդապետին. իսկ տալարանը յանձնեց առաջադէմ աշակերտների ընկերակցական հոգատարութեան, գլխաւոր տեսչութիւնը իրան թողնելով:

Կազմեց մի ուսումնական խորհուրդ՝ զարգացած միաբաններից: Այդ խորհուրդը պէտք է ղեկավարէր վանական և դպրոցական բոլոր գործերը, և միայն բարդ ու դժուար գործեր պատահած ժամանակ պիտի դիմէր վերատեսչին, այն է Խորիմեանին: Ուսումնական խորհուրդը պարտաւոր էր մանրամասն հաշիւ պա-

հել ելքի ու ծախքի, իր արած կարգադրութիւնների և առհասարակ այն բոլոր բաների մասին, որոնք տեղի պիտի ունենային Վարազուած:

1862 թւի օգոստոսի 19-ն էր: Մի սրտաձմիկ օր Վարազի համար: Այդ օրը Խորիմեան հրաժարական ողջոյն պիտի տար և ճանապարհ ընկնէր:

Աշակերտները և միաբանները հաւաքված դպրոցում՝ սպասում էին: Վանից հարիւրաւոր մարդիկ էին եկել գնաս բարև և աւ ստելու:

Ամենքի ներկայութեամբ մի առ մի յայտարարելով թէ ինչ կարգադրութիւններ է արել և ում ինչ պաշտօն է յանձնել, Խորիմեան զիմեց ներկայ եղողներին՝ և գլխաւորապէս իր աշակերտներին մի քանի սրտաձմիկ խօսքերով.

«Ձի ուրախանայ Արծուին,—ի միջի այլոց ասաց նա,—և պիտանի չէք աղգին, եթէ լոկ ուսմամբ լինի ձեր յառաջադիմութիւնը: Իմ պարծանք ձեր առաքինութիւնն է, ձեր բարի վարք: Ձեր եղբայրսիրութեան քաղցր պտուղներ ես տեսնելով և աղղ վայելելով ուրախ պիտի առնէք և վառաւորէք ոչ միայն զմարդիկ և հայրենիք, այլև զԱստուած և երկինք: Գուք կապրէք, կուսանէք աղղի և հայրենեաց համար: Հայրենիք ձեզ կը սպասէ. դուք Աստուծով զօրացած և երջանկացած Հայրենիքի բարի յոյսեր պիտի լինէք... Ահա ես կերթամ իմ նոր նուիրական կոչմունքիս: Կացէք յիս և ես ի ձեզ: Ձեզանից չեմ հրաժարեր, ձեզանից չեմ հեռանար. այլ զձեզ զօրացուցանելու կը գնամ: Իմ վստահութիւն և հաւատարմութիւն պահեցէք և պսակեցէք ձեր սիրով, ձեր բարի համբաւով և ձեր ժրջան և գովելի յառաջադիմութեամբ: Պիտի աշխատեմ ես փոյթ ընդ փոյթ ձեզ այցելութիւն առնել. մի տրտմըք: Կացէք Աստուծով, կացէք սիրով, կացէք ինձմով»:

Հետեւալ օրը, երկուշաբթի վաղ առաւօտեան՝ Խորիմեան ճանապարհ ընկաւ: Միաբանները և աշակերտները երգեր երգելով՝ քաւական տեղ նրան ճանապարհ զրեցին: Բաժանման րօպէին

Խորիմեան չը կարողացաւ թաղցնել իր յուզմունքը: Աշակերտները վերադարձան վանքը արտասուքն աչքերին:



Խորիմեան վճռել էր ս. Կարապետի վանքում տպարան հիմնել, ուստի իր հետ վերցրեց Վարազի երկու մամուլից մինը և այն բոլոր պարագաները, որոնք պէտք էին տպարանի համար, և նոյն իսկ երկու գրաշար, որոնք այդ արհեստը սովորել էին Վարազում:

Նրա հետ միասին գնացին երկու-երեք ուսուցիչ և ժառանգաւորաց դպրոցի մի քանի աշակերտներ՝ Տարօնում ուսուցչութիւն անելու համար:

Ահա դրանցից էր կազմված ամբողջ կարաւանը:

Վասպուրականից դէպի Մուշ և Տարօն կարաւաններ շատ էին գնում գալիս. բայց այդ տեսակ կարաւան ոչ գնացել էր և ոչ եկել: Ճանապարհորդները վաճառականներ չէին և ոչ էլ իրանց բեռները՝ ապրանք: Ձիաներին բեռնած էին մամուլ, տառեր, թուղթ, մեղան, գրքեր. իսկ ձիաւորները՝ դէնքի փոխարէն ղինաւորված էին այն գաղափարներով և ծրագիրներով, որոնք մշակվել էին Վարազում՝ Խորիմեանի հնոցում...

Այս կարաւանը տանում էր Տարօն լոյս, ցրվելու համար այն խաւարը և թշուառութիւնը, որ դարերից ի վեր պատել էր Մուշը, ինչպէս մշուշ...

Վերջապէս հասան Տարօն:

Տարօն... «աշխարհ Մամիկոնեան, աշխարհ քաջաց և զըպրութեան» — դրում էր ինքը Խորիմեան: Որքան ախորժելի էր հընչում այդ անունը նրա ականջին:

Այդ երկրի ամեն մի անկիւնը, աւերակը յիշեցնում էին այն մեծամեծ գործերը և պատմական այն երևելի անձինքներին, որոնց յիշատակը ինկելի է իւրաքանչիւր հայի համար:

Այդտեղ, Տարօնում էր, որ Գրիգոր Լուսաւորիչը, Տրդատի ժամանակ, կատաղի կռիւ մղեց կռապաշտութեան դէմ: Հե-

թանոս հայերը՝ դէնքը ձեռքին՝ պատերազմ յայտնեցին քրիստոնէութեան Քարբէ լեռան ստորոտներում: Սակայն քրիստոնէութիւնը յաղթեց, և կռատների աւերակների վրա Գրիգոր Լուսաւորիչը հիմնեց ս. Կարապետի վանքը:

Այդտեղ, Տարօնում էր, որ ապաստան դտաւ ձենացի իշխանազն Մամգունը, փախչելով իր թագաւորի վրէժխնդրութիւնից, որից և սկսվեց Մամիկոնեան նախարարութիւնը, որ տուեց ազգին այնպիսի մեծ մարդիկ, ինչպէս Վարդան և Վահան Մամիկոնեանները:

Տարօնը տուեց մեզ և ուրիշ մեծ մարդիկ: Տարօնի Հացիկ գիւղիցն է Մեսրոպը, որ դտաւ հայոց տառերը և Սահակ Պարթևի հետ միասին մտաւոր յեղափոխութիւն առաջ բերեց Հայաստանում: Տարօնից է և Մովսէս Խորենացին, հինգերորդ դարու այդ հանճարեղ մտածողը, մեր տաղանդաւոր պատմագիրը:

Իսկ այժմ... այժմ նախնեաց քաջագործութիւնների վայրերում ապրում էր մի ժողովուրդ, տգէտ, յուսահատ, հարստահարված, աղքատ և թշուառ, անընդունակ մի մեծ մարդ ծնելու, մի մեծ գործ կատարելու...

Եւ Խորիմեան գնում էր գործելու այդ ժողովրդի մէջ:

Ժողովուրդը, որ լսել էր Խորիմեանի համբաւը, սիրով ընդունեց նրան: Միայն վանականները և առհասարակ հոգևորական դասը, այլ և մի խումբ աշխարհական ազգեցիկ անձինք, որոնք անարգել կերպով կողոպտում էին վանքերը, շատ թշնամաբար ընդունեցին նոր առաջնորդին:

Խորիմեան հաստատվեց ս. Կարապետի վանքում: Այդ վանքը, որ յայտնի է ամբողջ Հայաստանում «Մշու սուլթան ս. Կարապետ» անունով, վաղուց ի վեր մեծ ուխտատեղի է հայերի համար: Հայաստանի ամեն կողմերից՝ իւրաքանչիւր տարի դալիս են այդ «մուրաղատու» վանքը հազարաւոր ուխտաւորներ, որոնք իրանց ջերմեռանդութեան նուէրները առատ առատ տալիս են վանքին և միաբաններին: Նա ունի մեծ կալուածքներ և անհազին եկամուտներ:

Խրիմեան ուրախ էր, որ այդ ահագին եկամուտներով կարող կը լինի իր ծրագիրները իրագործել, և այլ ևս՝ վարազի նման՝ դրամի նեղութիւն չէր կրիլ: Նա ուզում էր հիմնել ս. Կարապետում կենտրոնական ժառանգաւորաց դպրոց, ամբողջ վիճակի համար լաւ ուսուցիչներ և հողերակաճներ պատրաստելու նպատակով: Բայց դրանից, այդտեղ պիտի հաստատուէր տպարան, ուր պէտք է տպագրուէին գրքեր և նոյն իսկ մի պարբերական հրատարակութիւն: Վանքի մէջ գոյութիւն ունեցող ողորմելի դպրոցը նա կարգի բերեց, կամ աւելի լաւ է ասել քանդեց և նորը հիմնեց, և ուսումնական մասը յանձնեց իր հետ բերած ուսուցիչներին: Վիճակի զանազան կողմերից քիչ-քիչ հաւաքեց ընդունակ պատանիներ, որպէս զի նրանք իրանց ուսումը աւարտելուց յետոյ՝ իրանց նուիրէին վարժապետական կամ հոգևորական կոչման:

Կարոցական գործը կարգի բերելուց յետոյ՝ Խրիմեան իր ամբողջ ուշք ու միտքը դարձրեց տպարանին: Կարճ միջոցում ամբողջ Տարօնը ականատես եղաւ, թէ ինչպէս ս. Կարապետի վանքից, հրաչքի նման, դուրս են գալիս գրքեր, որոնց մասին ժողովուրդն այն համողմունքն ունէր, թէ նրանց տպելու տեղը կամ Պոլիսն է միայն, կամ ծովերի այն կողմի աշխարհը....

Գեռ տարին չը լրացած՝ Խրիմեան գնաց Վարազ:

Անակարագրելի է այն ուրախութիւնը, որ տիրեց ամբողջ Վարազին, երբ պաշտելի վարդապետը մտաւ վանքը: Դա մի տօնախմբութիւն էր վանքի համար: Խրիմեան եկել էր Վարազ, տեսնելու թէ ինչպէս են գնում գործերը, և իր աշակերտներից և գործակիցներից մի քանիսին վարդապետ * ձեռնադրել տալու:

* Ձեռնադրվողների մէջն էին վանեցի Զակար Աղուանեան, որ իբրև օգնական Խրիմեանի հետ գնացել էր Տարօն, և սօջախեցի Տիգրան Գալիակչեան, որ աշակերտել էր Վարազի դպրոցում և «Արծուի Վասպուրականի» մէջ գրում էր: Առաջինը ձեռնադրվելով ստացաւ Գրիգորիս վարդապետ անունը: Դա է այժմ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան, որ մի ժամանակ,

1863 թւի մայիսին, Կ. Պոլսում, Ալէաթճեանի (այժմ Գրիգորիս եպիսկոպոս Ալէաթճեան) խմբագրութեամբ հրատարակվող «Թռչնիկ Պեղատեսան» թերթը հրատարակեց մի անսպասելի լուր — այն է թէ՛ «Հայաստանի հրեշտակ Խրիմեանի աշխատութեամբ Սչոյ վանքի մէջ պիտի հրատարակվի մի կիսամետայ թերթ՝ «Արծուիկ Տարօն» անունով»: Այդ լուրը ճշմարտութիւն էր: 1863 թւի մայիսին լոյս տեսաւ «Արծուիկ Տարօն» առաջին համարը: Դա առաջին հայերէն լրագիրն էր Տարօնում, ինչպէս «Վասպուրականի Արծիւը»՝ Վասպուրականում: Նոր թերթի խմբագրութիւնը Խրիմեան յանձնեց իր աշակերտ Գարեգին Սրուանձտեսնին (այժմ եպիսկոպոս), որին նա իր հետ բերեց վերջին անգամ Վարազից:

Սկսկեց եռանդուն գործունէութիւն: Տոկուն ուսուցիչը իր աշակերտների և համախոհների հետ՝ զիշեր ցերեկ հոգում էին իրանց ծրագիրները իրագործելու մասին.— «Արծուիկ» մէջ զբրում, քարոզում էին. աշխատում էին հիմնել նորանոր դպրոցներ, պաշտպանում էին ժողովրդի իրաւունքները:

Խրիմեանի աշակերտները, իբրև ուսուցիչներ կամ հոգևորականներ, տարածվելով զանազան կողմեր՝ տարածում էին իրանց ուսուցչի գաղափարները և մտքերը....

Այդ գաղափարները և մտքերը՝ թափանցում էին ժողովրդի մէջ, ինչպէս ջրի կաթիլները հողի մէջ....

Ահա այդ ժամանակն էր, որ Խրիմեանի անձնաւորութեամբ ողնորված աշակերտները նրան սկսեցին «Հայրիկ» անուանել, որ կարճ միջոցում տարածվեց Տարօնում, և ապա ընդհանրացաւ ամբողջ ազգի մէջ:

Այժմ ամեն մի հայ Խրիմեանին «Հայրիկ» է անուանում: Մինչև 1864 թւի վերջերը Հայրիկի գործերն աջող գնացին:

Երբ կարսը թիւրքաց իշխանութեան տակ էր, այնտեղի առաջնորդ էր, յետոյ վարեց Գանձակի յաջորդի պաշտօնը, իսկ ներկայումս էջմիածնի սինոդի անդամ է:

Մտաւոր թմրութիւնից արթնացող ժողովուրդը՝ ինքնաճանաչութեան նշաններ էր ցոյց տալիս, և դա ոգևորում էր Խրիմեանին:

Սակայն այդ թւականի վերջերում մի փոթորիկ բարձրացաւ Խրիմեանի դէմ, որը քանի զնաց սարսափելի և սոճելի դարձաւ:

Այդ փոթորիկը տեւց մինչև 1869 թիւը, այն է մինչև Տարժնից հեռանալու տարին: Այդ հինգամեայ շրջանը կուրի շրջան էր: Կուր խաւարի դէմ, կուր խաւարի որդկերանց դէմ:

Թշնամութիւնը սկսվեց հէնց ս. Կարապետի վանքից: Վանքի մէջ բուն դրած միաբանները, տգէտ, անուս վանականները, ոչինչ չանելով և անհոգութեան մէջ պարարտացնելով իրանց մարմինը, անխնայ վատնում էին վանքի եկամուտները, ուտում խմում, քէֆեր էին անում և վանքերից գողանում իրանց ազգականներին էին տալիս:

Ահա թէ ինչպէս է նկարագրում Խրիմեան այդ ժամանակի հոգևորականների կեանքը.

«Ուտեմք ըզ միս և ըզ մատաղ, դխորովուն գառըն կարմրած, Ուտեմք ըզճաշ ըզ խարիսայ իւղն ի վերայ լիճ լիճ լըցեալ. Ուտեմք ըզկաթըն մաքեաց և ըզմածունըն սերակապ, Ուտեմք զանճալըն կարագ և ձագուց մեղր ըզհետ նորա. Ուտեմք և յափրամամք նընջեմք ի խուց, խորտամք անհող, Ոչ գիրք Աստուածաշունչ, ոչ այլ մատեանք մեր սուրբ նախնեաց

Ոչ ուսանեմք, ուսուցանեմք դրանն Աասուածոյ առ ժողովուրդս.

Թողեալ զԱւետարան, պաշտենք սեղան և զուխտաւորս, Թողեալ զուխտ կոչման մերոյ լընուք ըզպէտըս մարմնաւորս...

Ոչ առաքեալ ոչ մարտիրոս վանն աշխարհին հայոց եղեալ...

Ոչ հովիւ հօտին սիրող, ոչ առաջնորդ ժողովուրդեան. *

* «Հրաւիրակ Արարատեան» Կ. Պօլիս. 1876.

Եւ այդ բոլորը մնում էր անպատիժ, առանց պատասխանատուութեան:

Եւ անա յայտնվում է մի մարդ, որ ասում է. «Գուք իրաւունք չունիք վատնելու ազգի նուէրները. դուք իրաւունք չունիք՝ առանց մի օգուտ բերելու, փչացնել վանքի եկամուտները: Այս վանքը աղղինն է. նրա եկամուտները պէտք է ազգի պէտքերին ծառայեն»:

Այդ ասողը Խրիմեանն էր, որ անխնայ կերպով սկսեց ասնձահարել վանականների անհաշիւ շտայլութիւնները և զեղխութիւնները, հաշի տակ դրեց վերջին դրուշը: Վիճակի վանքերը կարգի բերեց: Կարգադրեց, որ եկամուտները խնայեն, զըսրոցներ պահելու համար: Նշանակվեցին հսկողներ: Այլ ևս հնար չը կար գողանալու և թալանելու...

Այդպէս էր վարվել Խրիմեան վասպուրականում, այդպէս վարվեց և Տարժում:

Հասկանալի է թէ ինչն էր ուրեմն նրա դէմ սկսված թշնամութեան պատճառը:

Վանական հոգևորականութիւնը չը դիմացաւ այդ զգալի հարուածին և գլուխ բարձրացրեց: Գրանց հետ միացան և այն ազդեցիկ էֆէնդիկները, որոնք ասլում էին՝ խեղճ ժողովրդին հարստահարելով և վանքերը թալանելով:

Խրիմեանի այդ տեսակ թշնամիների զլխաւոր կենտրոններն էին՝ Կ. Պօլիսը, Վանը, Կարինը, Մուշը: Այն դասակարգը, որին Կ. Պօլսում անուանում էին «Խաւարեալք», և որն ունէր իր ներկայացուցիչները յիշեալ քաղաքում, դէմ էր այն ոգուն, որ տարածում էր Խրիմեան, և միանգամայն վնասակար էր համարում, որ նրա շնորհով ժողովուրդը սկսել է աչք բանալ, զըլուխ բարձրացնել:

Ուստի ուզում էին միանգամից ջախջախել այն զլուխը, որ սովորեցնում էր ուրիշներին գլուխ բարձրացնել:

Մի երկու ազդեցիկ անձինք Կ. Պօլսում, մի եպիսկոպոս և մի քանի էլ աշխարհականներ վասպուրականում, մի քանի

սեանդի վարդապետներ ջարճում և մի քահանայ էլ կարինում,—անա այն ղեկավարները, որոնք ուղղութիւն էին տալիս խորհրդանի և նրա հետնողների դէմ սկսած պատերազմին:

Սկզբներում, երբ խորհրդան ղեռ վարագումն էր, նրա թըշնամիները աշխատում էին արդեւք դնել նրա գործունէութեան, գրգռելով նրա դէմ խաւար ամբոխը:

Ար պատմէք մի վաստ:

Վարագում խորհրդան հիմնել էր մի թանգարան, որտեղ նա հաւաքում էր Հայաստանի դանազան կողմերից՝ հին ձեռագիրներ, դրամներ, և այլ հուշարձաններ: Մի անգամ՝ մի հովիւ գտել էր մեծաղկայ կիսարձան: խորհրդան մեծ դժուարութեամբ կարողացաւ ձեռք բերել այդ կիսարձանը, որը, ինչպէս ենթադրում էին, հեթանոս Հայաստանի կուռքերից մինի կիսարձանը պիտի լինէր: Այդ կիսարձանը խորհրդան դրեց թանգարանում, որտեղ ի միջի այլոց կային հին աւետարաններ:

Եւ անա խորհրդանի թշնամիները սկսեցին համոզել ամբոխին, թէ խորհրդան իր աշակերտների հետ միասին՝ կուռք է պաշտում, որը պահում է քրիստոնէական աւետարանի կողքին: Բանն այնտեղ հասաւ, որ մի ղեղեցիկ օր՝ ամբոխը պատրաստվում էր գնալ Վարագ՝ և քարուքանդ անել կուռքաշաների մեհեանը՝ թանգարանը: խորհրդան հագիւ հաղ կարողացաւ համոզել ժողովրդին թէ այդ բոլորը սուտ է և շինծու:

Մտնուանդ ամբոխին զրգռելու համար, խորհրդանի թշնամիները այս տեսակ շատ միջոցների էին դիմում: Սակայն անաջող: Անձնուէր վարդապետի գործերը շատ շուտով կապեցին նրա հետ ժողովրդին, որը և դարձաւ նրա բարեկամը:

Տեսնելով, որ այդ միջոցը անաջող եղաւ, թշնամիները սկսեցին ուրիշ տեսակ միջոցների դիմել.— փորձում էին վախեցնել կամ սպանել տալ խորհրդանին՝ մի օր և է վարձկան թուրքի կամ քուրդի ձեռքով, որ ոչ ոք չը կարողանայ կարծել էլ՝ թէ այդտեղ կարող է խառն լինել մի հայի կամ մի հայ կրօնաւորի մատը:

Մի օր խորհրդան վարագից ոտքով դնում էր Վան: Նախապարհին նրան հանդիպում է մի քուրդ: Քուրդը յանկարծ կանգ է առնում, դէմքը դռնատվում է, ոտքերը սկսում են դողալ:

— Բարեկամ, ինչ է պատահել, ինչու չփոթվեցիր, հարցնում է խորհրդան:

— Ես ուղում էի քեզ սպանել, պատասի անում է քուրդը:

— Ապա ինչու չը սպանեցիր:

— Աստուած չը թողեց, ասում է քուրդը՝ ընկնելով խորհրդանի սանրը և խնդրելով որ ների:

— Գնա գործիդ, միայն ոչ ոքի չը պատմես, ասաց նրան խորհրդան: Եւ այդ մասին ինքը մի բառ անգամ չարտասանեց ոչ մի տեղ:

Տարօնում եղած ժամանակն էլ այդպիսի փորձեր շատ եղան Հայրիկի դէմ:

1865 թ-ի սկզբներին, երբ խորհրդան արդէն Տարօնումն էր, նրա թշնամիները, որպէս զի կարեն ոչ թէ միայն խորհրդանի, այլ և նրա բոլոր աշակերտների թեւերը, սկսեցին ղիմել մի նոր միջոցի,— այն է՝ մատն ու թեւ ան: Հնարում էին ամեն տեսակ գրպարտութիւններ և սոսկալի լուրեր, և այդ բոլորը հաղորդում նահանգապետ փաշային կամ ուղղակի Կ. Պօլիս:

Գլխաւոր մասնութիւն անողները չորս վարդապետներ էին, որոնք մնում էին ս. Կարապետի վանքում:

Թէ ինչ տեսակ միջոցների էին դիմում, այդ երևում է հետեւել վաստից, որ հաղորդում է Կ. Պօլսի լրագիրներից մի-նը *.

«Այս չորս վարդապետք ի ներկայութեան Յովհ. Կալիսկոսի 1,000 դրուշի պարտամուրհակ մը տուած են մշեցի Համբարձում պարտատէրին, որ ի նպատտ իրենց և ի վնաս խորհրդանի աղերսագիր տայ: Աշեցի կօշկարար Յակոբին 1,000 դրուշի պարտամուրհակ տուած են՝ խորհրդանի դէմ բողոքելու համար, բայց իրողութիւնն յայտնվելով՝ խառն ժողովին ներկայացաւ: Պարտամուրհակը Ներսէս Կալիսկոսոսին քովն է»:

* «Թռչնիկ Պեղատեան», 1864 թ. Կ. Պօլիս:

Ահա մի ուրիշ փաստ, որ հաղորդել է նոյն լրագիրը 1865 թւին. «Խրիմեանի հակառակորդ չորս վարդապետք՝ չորրորդ անգամ նրան մատնել են անհիմն ամբաստանութեամբ լեցուն հանրագրութիւն մը մատուցանելով կուսակալին: Այդ հանրագրութիւն՝ Զեյքեաներին ասկէց հեռացնելու համար է ըսելով՝ միամիտ ժողովրդին ստորագրել տալով՝ կուզեն եղբր Բ. Գրան զրկել:»

Մատնութիւնները քանի գնում ծանր կերպարանք էին առնում: Կասկածի տակ էին դրված ոչ թէ միայն Խրիմեանը, այլ և նրա բոլոր գործերը և գործակիցները:

Հարկաւոր էր հերքել զրպարտութիւնները, որպէս զի գործը չը վնասվի: Ուստի Խրիմեան ստիպվեց թողնել Տարօնը և Կ. Պօլիս գնալ: 1865 թւին՝ Կ. Պօլիս գալով մի առժամանակ մնաց այնտեղ: Նոյն թւականին վերադարձաւ Տարօն, բայց երկար չը կարողացաւ մնալ: 1866 թւի մարտին կրկին ստիպվեց գնալ Կ. Պօլիս՝ ահազին նեղութիւններով:

Մատնութիւնների պատճառով Տարօնը տակն ու վրա էր եղել:

Յուզված դրութեան վերջ տալու համար, թիւրքաց կառավարութիւնը կարգադրեց, որ մի յանձնաժողով կազմվի այդ բոլորը քննելու և մանրամասն տեղեկութիւններ կազմելու համար: Յանձնաժողովը քննեց բոլոր մատնութիւնները և ամբաստանութիւնները, բայց չը գտաւ մի փաստ, որի հիման վրա կարելի լինէր մեղադրել Խրիմեանին հակակառավարչական նպատակների մէջ:

Խրիմեան արդարացաւ: Ժողովրդին խաղաղացնելու համար՝ կառավարութիւնը թոյլ տուեց, որ Հայրիկ վերադառնայ և շարունակի իր պաշտօնը:

Սակայն այդ խաղաղութիւնը երկար չը տևեց:

Սկսվեցան նոր մատնութիւններ, նոր ամբաստանութիւններ: Թշնամիները կաշառում էին, ում կարող էին, որ սուտ վկայութիւն տան: Մարդիկ էին վարձում, որ գիշեր ժամանակ՝ կամ ճանապարհ գնալիս՝ ծածուկ սպանեն Հայրիկին:

— Իմ հակառակորդացս ոսկին պիտի հատնի, բայց իմ համբերութիւնս չը պիտի սպառի. կը համբերեմ, մինչև արդարութիւնը հասնէ և պաշտպանէ զանմեղութիւնը, ասում էր Հայրիկ:

Շատ անգամ էր պատահում, որ գիշերը, Հայրիկի սենեակի պատուհանների մօտ հրացաններ էին արձակում: Գրանք վարձկան քուրդեր էին, որ ուզում էին սպանել նրան: Բայց նա չէր յուսահատվում: Ժողովրդի սէրը, որ աճելով աճում էր, ողևորում էր նրան:

Ժողովուրդը չէր ուզում բաժանվել նրանից: Տարին մի երկու անգամ Մուշի և Պուլանըի բնակիչները հանրագրել էին ուղարկում պատրիարքարան, խնդրելով որ Խրիմեան մնայ Տարօնում, և նրա հակառակորդները հեռացնվեն իրանց միջից: Տարաբախտաբար պատրիարքարանի և ազգային վարչութեան շատ կարգադրութիւնները մնում էին անիրագործելի: Պատրիարքարանը կարգադրում էր, որ խռովարար վարդապետները հեռանան Մուշի վանքից, իսկ նրանք, յոյս դնելով Պօլսի իրանց հովանաւորողների վրա՝ աւելի էին յանդգնանում և աւելի մեծ խռովութիւններ յարուցանում:

Ահա փաստը:

Այդ սարսափելի խռովութիւնների միջոցին, մի օր Խրիմեան վերադառնում էր ս. Կարապետի վանքը: Տեղի ունեցաւ մի անսպասելի դէպք: Նրա թշնամիները փակել տուեցին վանքի դռները և թոյլ չը տուեցին, որ նա մտնի ներս:

Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվեց շրջակայքում:— Գաշտի հայերը հաւաքվեցին, շրջապատեցին Հայրիկին և առաջնորդեցին նրան դէպի վանքը: Սակայն բանից երևաց, որ հակառակորդ վարդապետները պատրաստութիւն էին տեսել և մի խումբ զինված քրդեր էին կանգնեցրել:

Երկու կողմի մէջ սկսվեց կատաղի կռիւ: Հայ վարդապետները՝ զինաւորված քրդերի միջոցով կռիւ էին մղում Հայրիկի և ժողովուրդի դէմ: Տեսնելով որ բանը արխնհեղութեան է հաս-

նում, Խրիմեան աղաչանքով և աղերսանքով հանգստացրեց կըռ-
ուղներին, և մի առ ժամանակ վտանգից ազատ մնալու համար՝
հեռացաւ Տարօնից և դնայ Կարին՝ ապաստան գտնելու:

Վանականները սկզբում շատ ուրախացան, որ փախցրին
Խրիմեանին, բայց տեսնելով, որ ժողովուրդը սկսում է յուզվել,
իրանց արդարացնելու համար ամեն կողմ տարածեցին զրպար-
տութիւններ, որ իբրև թէ նա կողոպտել է վանքի դանձը, գողա-
ցել է խաչեր, աւետարաններ....

Կարինից Խրիմեան գնաց Կ. Պօլիս:

Իսկ Տարօնում հալածական եղած Հայրիկի աշակերտները և
գործակիցները ցիր ու ցան եղան: Նրանց էլ հալածում էին, ինչ-
պէս նրանց առաջնորդին: Դպրոցը տակն ու վրա եղաւ: «Ար-
ծիւր» խափանվեց կառավարութեան ձեռքով, տպարանը փակ-
վեց: Սկսածը թերի մնաց....

Շատ չանցած, Կարինի առաջնորդ Յարութիւն եպիսկոպոս
Վեհապետեան պատրիարքարանի կողմից գնաց ս. Կարապետի
վանքը՝ իբրև քննիչ: Քննելով բոլոր իրողութիւնները, տեղեկաց-
րեց պատրիարքին, որ վանականները անպայման յանցաւոր են:
Կրանցից վեցը դատապարտվեցին և քարոզվեցին Նրուսաղէմի
վանքը:

Մի առ ժամանակ Պօլիս մնալով՝ Խրիմեան վճռեց վերա-
դառնալ Տարօն: Ժողովուրդը նրան ընդունեց մեծ սիրով:

Հայրիկ նորից սկսեց իր ընդհատված գործունէութիւնը:
Բայց ամենից առաջ նա ներեց իր թշնամիներին, խնդրելով որ
վերադարձնեն Նրուսաղէմ արքայոված վարդապետներին...

1868 թւին Խրիմեան գնաց Էջմիածին: Նրան համոզեցին,
որ եպիսկոպոս ձեռնադրվի: Էջմիածնում այդ թւականին մե-
ռօնօրհնութիւն կար, և այդ պատճառով ամեն կողմից մեծ
բազմութիւն էր հաւաքված: Ամենքի հետաքրքրութեան առար-
կան Հայրիկն էր: Խրիմեան վարդապետը Գէորգ կաթողիկոսի
ձեռքով ձեռնադրվեց եպիսկոպոս «Տանն Տարօնոյ» և վերադար-
ձաւ Մուշ:

Նա պատրաստեց գործունէութեան մի աւելի լայն ծրա-
քիր: Բայց այլ ևս ժամանակ չը կար այդ ծրագիրը իրագործե-
լու, որովհետև պէտք է թողնէր Տարօնը:

1869 թւին մի անսպասելի լուր հասաւ Մուշ: Կ. Պօլիս
աղգային վարչութիւնից հեռագիր ստացվեց, որով ծանուցան-
վում էր թէ Խրիմեան ընտրված է Կ. Պօլիս հայոց պատրիարք:
Կնքը Մուշի փաշան անձամբ եկաւ վանքը՝ հաղորդելու այդ
ընտրութիւնը և շնորհաւորելու:

Հոկտեմբերի 3-ին Խրիմեան մեկնեց Տարօնից:

Նրա թշնամիները, որ աչքով աչք չունէին նրան նայելու,
այժմ ամեն բան կը տային, որ արժանանային նրա մի ժպիտին,
որովհետև նա այժմ մի հասարակ վանահայր էր, այլ պատ-
րիարք...

Իսկ Տարօնի ժողովուրդը մի կողմից շատ տխուր, որ բա-
ժանվում է սիրելի Հայրիկից, միւս կողմից անչափ ուրախ էր,
որ պատրիարքական դահլի վրա պէտք է նստի նա, որը իր աչքի
լոյսի նման սիրում է թողնու վրդին:

Խրիմեանի Տարօնից ճանապարհ ընկնելը մի փառաւոր
հանդէս էր: Թիւրքաց կառավարութիւնը ուղարկել էր յատուկ
պաշտօնեաներ և մի վաշտ զինուորներ: Տարօնի բոլոր կողմերից
հայ կամաւորները՝ ձիաւորված եկել էին Հայրիկին ճանապարհ
զցելու: Խրիմեան վանքից դուրս եկաւ՝ օրհնելով իր թշնամիներ-
ըին և յորդոր կարողալով ժողովրդին:

Նրկար տեղ ժողովուրդը գնում էր Հայրիկի յետեից և բա-
ժանման բօսվէին հաղարաւոր ձայներ գոչում էին.

— Հայրիկ, Հայրիկ, չը մոռանաս Տարօնը, չը մոռանաս
աղքատ մէկեցուն...

VIII

Նորընտիր պատրիարքի ուղևորութիւնը—մի ժողովրդական
հանդէս էր: Բոլոր գիւղերում և քաղաքներում, որտեղով նա

անցնում էր, նրան ընդունում և ճանապարհ էին դնում մեծ շուքով: Նոյն իսկ փոքրիկ գիւղերում կանաչք և երեխաչք, մեծ և փոքր ընդ առաջ էին դուրս գալիս, տեսնելու «հայրիկին»,— իրանց պաշտպան հրեշտակին:

Երբ հասաւ Տրապիզոն, հայերի և կառավարութեան ներկայացուցիչներին հետ միասին ընդ առաջ եկաւ յունաց առաջնորդը: Երկու ազգերի հոգևոր ներկայացուցիչները սիրով դիմաւորեցին միմեանց: Հիւպատոսները, ի նշան յարգանքի, պարզեցին իրանց դրօշակները: Հայոց եկեղեցին մանելուց յետոյ, Խրիմեան մտաւ յունաց եկեղեցին, և մի կարճ ճառում քարոզեց համերաշխութիւն յոյների և հայերի մէջ:

Խրիմեանին Կ. Պօլիս տանելու համար՝ կառավարութիւնը յատուկ նաւ էր ուղարկել: Երբ նաւը հասաւ Պօլիս՝ պարզեց իր դրօշակը, որ նշան էր, թէ մայրաքաղաքը մեծ մարդ է գալիս:

Խրիմեանին ընդունելու համար Կ. Պօլսի ամբողջ հայ ժողովուրդը ոսբի վրա էր: Կառավարութեան ներկայացուցիչները, հայոց հոգևորականութիւնը, երեսփոխանները և հազարաւոր ժողովուրդը սպասում էին ծովափին:

Ժողովրդի ուրախութեան չափ չը կար: Ահագին խմբերով երգում էին յատկապէս այդ օրվայ համար յօրինված երգեր: Երբ Հայրիկ երևաց, թնդաց հազարաւոր մարդկանց «կեցցէ՛ն», որ արձագանք տուեց Ստամբուլի հեռու փողոցներում:

— Ինչո՞վ պիտի փոխարինեմ ժողովրդի այս սէրը,— մտածում էր յուզված պատրիարքը:

Սակայն նոյն րօպէին նա զգում էր, որ ինչքան անխարդախ և անսպառ է ժողովրդի սէրը, այնքան էլ փշոտ է պատրիարքական դահը, որի վրա կոչված է բազմելու: Գուցէ հէնց այդ մտքով էր՝ որ, երբ հանդէսը հասաւ մայր-եկեղեցին՝ Խրիմեանն ողջունելով հասարակութեանը՝ ասաց ի միջի այլոց հետևալը. «Պատրիարքութիւն յանձն առնելով, կը զգամ, որ ծանր լուծի կենթարկվեմ: Թէև այսօր ժողովուրդը բոլորամաս կոչելով ինձ այստեղ կառաջնորդէ, այլ վաղը, երբ պաշտօնիս պահանջ-

ման համեմատ սկսեմ զեղծումները բարեկարգել, պիտի սկսեն պոռալ. «ի խաչ հան զդա, ի խաչ հան զդա...»:

1869 թւի նոյեմբեր ամիսն էր, որ Խրիմեան նստեց պատրիարքական գահի վրա:

Դա մի խառնակ ժամանակ էր.—պատրիարքական գահը խախտւտ, պատրիարքարանը պարտքերով ծանրաբեռնված, սահմանադրութիւնը ջլատված, ժողովուրդը թշնամական բանակների բաժանված:

Ամենից ցաւալի սահմանադրութեան վիճակն էր: Դեռ մի երկու տարի չէր անցել սահմանադրութիւնը հաստատվելուց յետոյ, որ սկսվեցին անվերջանալի խառնաշփոթութիւններ: Վարչական ժողովները համարեա թէ դոյութիւն չունէին. թաղական խորհուրդների մէջ անբաժանելի թշնամութիւններ էին սկսված, նոյն իսկ ընդհանուր Ազգային ժողովը՝ կուիւնների ասպարէզ էր դարձել: Այդ հանգամանքից օգուտ քաղեցին սահմանադրութեան թշնամիները. դրդեցին կառավարութեանը, և նա էլ դադարեցրեց սահմանադրութիւնը, ու գործերի ղեկավարութիւնը յանձնեց իր կողմնակիցներից կազմած մի ժողովի, որի նախագահը պիտի լինէր պատրիարքը: Դա տեղի ունեցաւ 1866 թւին, երբ պատրիարքն էր Պօղոսը:

Ժողովուրդը պատրիարքից շատ դժգոհ էր, որ նա չը կարողացաւ պաշտպանել սահմանադրութիւնը: Ընդհանուր զայրոյթը այնտեղ հասաւ, որ պահանջեցին պատրիարքի հրաժարականը: Իսկ պատրիարքը չէր ուզում հրաժարվել: Մի քանի եկեղեցիներում դադարեցին պատրիարքի անունը յիշատակել, և նոյն իսկ տեղի ունեցան կուիւններ: Ոչ մի սպառնալիք, ոչինչ բանտարկութիւն չը կարողացան զսպել ժողովրդի զայրոյթը, և Պօղոսը, տեսնելով որ հնար չը կայ դիմադրել, 1869 թ. հրաժարվեց:

Կառավարութիւնը՝ ժողովրդին խաղաղացնելու համար՝ ստիպվեց վերահաստատել սահմանադրութիւնը, որի գործութեամբ գումարվեց Ազգային Ժողովը, և պատրիարք ընտրվեց Մկրտիչ եպիսկոպոս Խրիմեան, 1869 թւի սեպտեմբերի 3-ին:

Խրիմեանի ընտրութիւնը ժողովրդի և սահմանադրականները յաղթութիւնն էր և հակասահմանադրականների պարտութիւնը: Հակասահմանադրականները ամենայն միջոցներով աշխատում էին, որ Խրիմեան չընտրուի: Տեսնելով որ ընտրվեց, աշխատեցին որ չը հաստատուի: Սկսեցին մատնութիւններ անել և համոզել կառավարչական շրջաններին, թէ Խրիմեանին չը պէտք է հաստատել, որովհետև նա կառավարութեան համար վտանգաւոր մարդ է: Սակայն կառավարութիւնը աւելի հեռատես զըտնվեց և հաստատեց, լաւ իմանալով, որ Խրիմեանի նման մեծ ժողովրդականութիւն ունեցող մարդուն չը հաստատելը՝ վտանգաւոր հետեանքներ կարող է ունենալ:

Պատրիարքը նստելով Խրիմեան գրեց և հրատարակեց մի շրջաբերական հետեւեալ վերնագրով. «Նախնի շրջաբերական թուղթ առ ամենայն եկեղեցիս հայոց, որ ընդ իշխանութեամբ Օսմանեան պետութեան», որով նա դիմում է բոլոր դասակարգերին, և մատնանիշ անելով նրանց պարտաւորութիւնների և ազդի պէտքերի վրա, հրաւիրում է բոլորին գործել և նպաստել ժողովրդի առաջադիմութեան:

Գառնալով հայ ժողովրդին ասում է.

«Փութա, այլ ևս մի հեղգար. եթէ կուզես քո դարաւոր աղետներէն ազատել, օրինակ առ քեզ և հետևող եղիր աշխարհիս ամեն առաջադէմ ազգաց, որ դար մը առաջ քեզ պէս էին. իսկ այսօր հին աշխարհի մեռելութենէն կենդանացած յառաջ կերթան: Շուրջդ նայէ, ազգերն ամեն առողջացած անդամալոյծ վիճակէն՝ դէպի նոր կեանք կը վազեն. դու միայն մնացել ես Պրօպատիկէ առաջանին քով անշարժ նստած՝ կողկողազին ձայնիւ կը պաղատես. «Տէր ոչ դըք ունիմ որ արկանէ դիս յաւազան»: Այն, չը կայ աշխարհիս վրան ոչ դը քեզ օգնական. ընդունայն յուսով մի սպասիր. դու ինքդ ես քո օգնական. ջանք արա, չարժիր...»:

Ապա իր պաշտօնակիցներին դիմելով ասում է.

«...Ձգուչացուցէք ժողովուրդը դեղիս և շուայ կեանքէ. քարողեցէք քաղաքացւոց որ արհեստ սովորին, ընկերութիւններ կազմեն, շահալաճառութեան հետեւեն. քարողեցէք դիւզացւոց որ հայրենի հող սիրեն, ամո՛լ՝ եղներ սիրեն, մաճ սիրեն, քրտինք շահաբեր հողի վրա թափեն, չարաչար պանդխտութեան չը դիմեն: Քարողեցէք որ եկեղեցին սիրեն, դպրոց սիրեն, լոյս սիրեն, դաստիարակութիւն սիրեն, ազգ սիրեն, հայրենիք սիրեն. յոյս տուէք, զօրացուցէք լքեալ ձեռքերն, կթուցեալ ծունկերն. աղետներ վախճան ունեն...»

Փառասիրութիւնը կամ բարձր պաշտօն վարելու ձգտումը չէր, որ Խրիմեանին տարաւ դէպի պատրիարքական դահլ: Եթէ նա համաձայնեց աւելի բարձր պաշտօն վարել, այդ միայն այն նպատակով, որ աւելի բարձր և աւելի մեծ գործեր կատարի: Նա լաւ դիտէր, որ իրանից մեծ գործեր են սպասում:

Ժողովուրդը սպասում էր՝ որ նա պաշտպանի իր իրաւունքները:

Պատրիարքարանը սպասում էր, որ նա իրան պարտքերից ազատի:

Գաւառները սպասում էին, որ նա թեթևացնի իրանց ծանր վիճակը:

Սահմանադրականները սպասում էին, որ նա ապահովացնի սահմանադրութիւնը:

«Հայոց պատրիարքն ալ, պատրիարքարանն ալ ժողովրդի համար են», — ասում էր Խրիմեան: Նրա օրով ժողովրդական տարրը վերջնականապէս մուտք գործեց հասարակական բոլոր գործերի մէջ: Առաջ միայն ամիրաները և հարուստ ու դիրք ունեցող անձինք մուտք ունէին պատրիարքարան, որը և իսկապէս զրանց ձեռքի տակն էր գտնվում. հասարակ ժողովուրդը, որը հազար մի ցաւ ու գանգատ ունէր պատրիարքարանում, դժուարութեամբ էր կարողանում մուտք գործել: Հայրիկ բաց արեց պատրիարքարանի դռները ամեն մի հայի առաջ:

Կ. Պօլսի մեծամեծ էֆէնդիներին դուր չէր գալիս այդ վարմունքը: Նրանք այն կարծիքի էին, որ պատրիարքը պիտի լինի անմատչելի, ոչ սքի չը պիտի երևայ, և «տասն դռները» յետև փակված պիտի մնայ:

Յանկարծ ազդեցիկ էֆէնդիներից մինը գալիս էր այցելու թիւն պատրիարքին:

—Մենակ է, հարցնում էր սպասաւորին:

—Ոչ, արհեստաւորներ եկած են գանգատով:

էֆէնդիի դէմքը խոփուում էր:

—Այցելութեան եկած եմ. դնա՛ յայտնէ:

—Ներսուլութիւն կը խնդրէ, որ չէ կարող ընդունել, խընդրատուններ շատ են,—վերադառնալով ասում էր սպասաւորը:

էֆէնդին դարձնում էր կառքը և աջ ու ձախ գանգատովում.

—Ախպար, աս ինչ պատրիարք է. այցելութիւն չի ընդունիր, խնդրատուներ կընդունէ. ասանկ պատրիարքութիւն չըլլար:

Եւ այն օրից էֆէնդին դառնում էր խիստանի թշնամի: Այդպիսի էֆէնդիներից մինի մասին հետևեալն են պատմում:

Մի օր խիստան, նոր պատրիարք նստած ժամանակը, այցելութիւն էր գնացել մեծ-վիզիր՝ նշանաւոր Ալի փաշային: Պատրիարքի այցելութիւնից յետոյ, Ալի փաշայի մօտ է գնում էֆէնդին:

—Ձեր պատրիարքը այսօր եկա՞ւ տեսնուլեցանք,—ասում է մեծ-վիզիրը:

—Աը ցաւիմ, որ նոր պատրիարքնիս դէր վիշ մէկն է, բոլորովին անտեղեակ քաղաքավարութեան:

—Ընդհակառակը, պատասխանում է Ալի փաշան, մինչև հիմա տեսած պատրիարքներիս մէջ նա ամենից քաղաքավարին է, և նրա խօսածներից նկատեցի, որ շատ փորձված և խելացի մարդ է: Ձեր խօսքերից երևում է, որ այդ եպիսկոպոսը ամեն մարդու հետ նրա համեմատ գիտէ վարվել. անքաղաքավարի մարդկանց հետ շատ էլ քաղաքավարական փափկութիւն չի

բանեցնում, իսկ քաղաքավարի մարդկանց հետ տեսնված ժամանակը՝ զիտէ քաղաքավարական բոլոր փափկութեամբ վարվել:

Հայտողի էֆէնդին հասկացաւ, թէ ինչ է ուզում ասել մեծ-վիզիրը, և լռեց....

Պատրիարքարանից հեռացրվեցին այն «խորհրդակցաները», որոնք օգուտ քաղելով պատրիարքների թուլութիւնից, իրանց ձեռքն էին առնում ներքին բոլոր գործերի ղեկավարութիւնը, չէին թողնում, որ առանց իրանց գիտութեան մի որ և է գործ կատարվի, և շատ անգամ պատրիարքի փոխարէն թղթեր էին ստորագրում, քահանաներ ձեռնադրելու իրաւունք էին տալիս, այս և այն հոգևորականի վրա ծախում էին որ և է արդիւնաւոր թեմ,—մի խօսքով մարդիկ, որոնք ամեն բան կաշառքի և և փող վաստակելու աղբիւր էին դարձրել:

Պատրիարքարանում կանոնաւոր դիւանատուն չը կար: Խորմեան կազմեց դիւանատուն՝ յատուկ պաշտօնեաներով և գրագիրներով: Ընդունելութեան համար առանձին սենեակ նշանակեց: Մինչև անգամ պատրիարքարանի ներսը կերպարանափոխեց: Հին սովորութեան համեմատ, պատրիարքները նստում էին արևելեան ձեւի բազմոցի վրա. իրանց կողքին ունենալով մի չէ. ք մէք ճէ (գլխոց), որտեղ պահում էին իրանց կնիքը և թըղթերը, և որը մի և նոյն ժամանակ փոխարինում էր գրասեղանը: Սենեակներում գրվեցան վայելուչ կահ կարասիք և սեղաններ:

Պատրիարքը նստած իր առանձնասենեակում, գրասեղանի առաջ՝ երկար ժամերով զբաղվում էր գործերով, կարգադրութիւններ էր անում, ծրագիրներ էր կազմում, ամենքի ցաւերի դէմ միջոցներ որոնում:

Պատրիարքարանի պարտքը՝ խիստանի հողատուրութեան առարկան դարձաւ: Նախորդ պատրիարքներից 50,000 բուրլի պարտք էր մնացել: Եկամուտներ չը կային, բայց ձախսերը ահագին էին:

Հացագործը գալիս՝ փող էր ուզում. որմնաղիւրը փող էր

ուզում. մտալաճառը փող էր պահանջում. պարտատէրը իր պարտքն էր պահանջում.—բայց փող չը կար:

Պատմում են, որ Հիւանդանոցին հայ մատակարարող մի հացալաճառ, Ջաքար անունով, որը անաղին գումարի պահանջ ունէր, շատ անգամ, երբ Ազգային ժողովը բացվում էր, և երեսփոխանները խօսք էին խնդրում ճառախօսելու, ներս էր մտնում և գոռում:

—Խօսքը իմն է. երբ պէտք է իմ փողս վճարվի. մինչև երբ պէտք է այսօր վաղը գցէք:

Պատրիարքարանը այդ անպատուութիւնից ազատելը՝ անյետաձգելի խնդիր էր: Յոյս դնելով իր աղբեցութեան և ժողովրդի վրա՝ Խրիմեան հանգանակութիւն սկսեց:

—Յակոբ էֆէնդի, այսօր ձեզ մօտ հիւր պիտի դամ:—Գարբիէլ էֆէնդի՝ վաղն ալ ձեզ մօտ կըլլամ.—ասում էր Հայրիկ, և անձամբ գնալով համոզում էր մի գումար ստորագրովել, որ այդ պարտքերը վճարվեն: Ահագին նեղութիւններ կրելով, մեծամեծ դժուարութիւնների հանդիպելով՝ Խրիմեան վերջ ի վերջոյ կարողացաւ թէ օրինակելի խնայողութեամբ և թէ հասարակական հանգանակութեամբ վերցնել պատրիարքարանի վրայից այդ պարտքի մեծ մասը:

Այդ ջնորհակալութեան արժանի գործն էլ մի ղէնք էր թշնամիների ձեռքում:

—Ի՞նչ է այդ պատրիարքը,—ասում էին նրանք,—որ հասարակ վարդապետի նման հետեակ, կերթայ կը մտնէ ամեն տեղ և կը մուրաց հրամայական ձեռով. միթէ ազգին պատիւ է այս միթէ աւելի ծանր նախատելք կարելի է ընել ազգին:

Իսկ պատրիարքը առանց ուշադրութիւն դարձնելու այդ կարծիքների վրա, գիշեր ցերեկ աշխատում էր՝ որ ոչ թէ միայն պատրիարքարանի անտեսական մասը, այլ և առհասարակ Հայաստանի բոլոր առաջնորդարանների, վանքերի և դպրոցների անտեսական մասը կանօնաւորվի, և եկամուտները մասնաւոր անձանց յափշտակութեան չենթարկվեն:

Գաւառնէրի վիճակը՝ Խրիմեանի մտածմունքների առաջին առարկան էր: Նա լաւ էր ճանաչում Հայաստանը, և գիտէր որ հարստանարված, խեղճ, տգէտ ժողովուրդը՝ ամենից շատ էր յոյս դրել Հայրիկի վրա: Եւ Հայրիկը անքուն գիշերներ էր նուիրում իր սիրած ժողովրդին, որ մի ելք գտնի, մի ճանապարհ ցոյց տայ:

Հայաստանի դանազան կողմերից պատրիարքարան համոզ տխուր լուրերը, քրդերի հարստանարութեան, վաչխառուների անիրաւութեան, պաշտօնեաների կաշառակերութեան և ժողովրդի նեղութեան մասին,—այրում, խորովում էին ժողովրդասէր պատրիարքին: Եւ անա պատրիարքը կազմել տուեց մի առանձին յանձնաժողով, որի պարտաւորութիւնն էր ուսումնասիրել Հայաստանի վիճակը և մի մանրամասն տեղեկագիր պատրաստել: Յանձնաժողովի ոգին և ուղղութիւն տուող ինքը Խրիմեանն էր:

Այդ առաջին անգամն էր, որ Պօլսի հայոց պատրիարքը՝ յարուցանում էր ժողովրդի հարստանարութեան խնդիրը:—Եւ յարուցանողը Խրիմեանն էր:

Յանձնաժողովը պատրաստեց տեղեկագիրը, որ ներկայացրելից Ազգային ժողովի քննութեան: Պատրիարքի աղղեցութեան տակ՝ ժողովը աաշտօնապէս քննեց տեղեկագիրը, որը պատրիարքի ձեռքով ներկայացրվեց Բ. Գրանը:

Այդ օրից բարեկարգութեան խնդիրը պաշտօնապէս ծնունդ առաւ:

Տեղեկագիրի մէջ՝ մանրամասն նկարագրելով դաւաճներում տիրապետող ճնշումները, հարստանարութիւնները և հայ ժողովրդի ծանր վիճակը՝ մի և նոյն ժամանակ պարզված էին այն միջոցները, որոնցով կարելի էր բարեկարգել ժողովրդի դրութիւնը:

Ժողովրդի պաշտպանութեան խնդիրը՝ Խրիմեան համարում էր հայոց հոգեւոր ներկայացուցիչների իրաւունքը, և այդ պատճառով ամեն տեղ և միշտ, բողոք էր բարձրացնում և պահանջ-

ներ անում: Գևո եւ 1869 թւին, Տարօնում եղած ժամանակ, մի մանրամասն տեղեկագիր ներկայացրեց Կարինի կուսակալ-փառացին, նկարագրելով Մուշի գաւառի անտանելի վիճակը: Տեղեկագիրը կազմված էր այնպիսի փաստերով, որ նահանգապետ-փառացին, Բ. Գրանս կամքով, անձամբ քննութեան գնաց Մուշ, և հետեանքը այն եղաւ, որ մօտ 70 անձինք, որոնք կեղեքում, տանջում էին ժողովրդին, արքայութեան Բումիլիայի կողմեր: Գրանսց մեծ մասը քրդեր էին:

Պատրիարքի ջերմ պաշտպանութեան շուրջ, ինչ խօսք, արագութեամբ տարածվում էր գաւառներում, որոնք տեսնելով թէ իրանք մուսացված չեն, սիրտ էին առնում, և մտածում ինքնապաշտպանութեան մասին:

Սահմանադրութեան վերաքննութեան խնդիր յարուցեց խրիմեան:

Պատրիարքութեան առաջին օրից սկսած, նա ճիշ թափեց որ ապահովացնի Սահմանադրութեան գոյութիւնը, որ վերջին տարիները վտանգի մէջ էր: Կանօնաւորեց Ազգային ժողովի նիստերը, իր նախագահութեամբ չորս տարվայ ընթացքում 63 նիստ գումարեց, և կազմակերպեց Գաւառական ժողովները:

Սակայն այդ բոլորի հետ միասին Հայրիկ եկաւ այն եղրակացութեան, որ Սահմանադրութիւնը ապահոված կը լինի միայն այն ժամանակ, երբ նա սերտ կապված կը լինի ժողովրդի հետ և լիութիւն կը տայ նրա պահանջներին:

Նւ այդ նպատակով էր անա, որ նա առաջարկում էր վերաքննել Սահմանադրութիւնը, և այնպէս անել որ գաւառները ունենան իրանց տեղական ինքնավարութիւնը, քանի որ Կ. Պօլսում Ազգային ժողովը, որ գումարվում էր հազիւ ամիսը մի անգամ, և այն էլ 2—3 ժամով, անկարող է կարգադրել 3 միլիօն ժողովրդի գործերը, և այդ պատճառով փոխանակ օգուտ տալու գաւառներին, աւելի էլ արգելք է լինում նրանց գործերի կանօնաւոր ընթացքին:

Խրիմեան պաշտպանում էր ապակենտրոնացման սխառեմը,

հակառակ այն կենտրոնացման, որով խնդրված էր Սահմանադրութիւնը:

Այդ արդէն մի զէնք էր նրա թշնամիների համար:

— Խրիմեանը հակասահմանադրական է.— սկսեցին պօռալ նրանք, նա սահմանադրութիւնը կը խախտէ:

Սակայն անվեհեր պատրիարքը այդ տեսակ թշնամութիւնների առաջ չը կանգնեց: Նա պատրաստեց մի ծրագիր, 13 յօդուածներից բաղկացած, և առաջարկեց Քաղաքական ժողովին:

Առաջ ենք բերում այդ յօդուածներից մի քանիսը.

1) Ազգային վարչութիւնը իրապէս կենտրոնական և հանրային դրութեան վերածել և Կ. Պօլսի համար առանձին տեղական վարչութիւն մը կազմել:

2) Սահմանադրութեան ընտրողական օգտակար սկզբունքը չարաչար չը գործարկելու համար՝ ապահով և կարևոր եղանակ որոշել:

3) Ազգային պաշտօնէութեան համարատուութիւնն և համարատուութիւնը պարտաւորիչ եղանակի մը մէջ դնել:

4) Եկեղեցականաց ներկայ անկերպարան վիճակը և ընթացքը կերպաւորել և կանօնաւորել:

5) Առաջնորդական պաշտօնավարութեան և համարատուութեան օրինաւոր և անխուսափելի եղանակ սահմանել:

6) Ազգին մէջ ուսումն և գիտութիւն ծաւալելու համար նոր և ազդու միջոցներ ձեռք առնել:

7) Ներքին և արտաքին հարստահարութիւնները բաւեալու համար տէրութիւնէն աւելի գօրաւոր միջոցներ խնդրել, գաղթականութիւնը արգելել, ազգային անհատական իրաւունքներն պաշտպանել, որով ազգի ամբողջութիւնն ապահովել:

Այդ յօդուածներից երեւում է թէ դրանց հեղինակը որքան լաւ էր ըմբռնում թիւրքահայոց Սահմանադրութեան ողին, առաջարկելով վերաքննել և ներկայի սկստքերին յարմարեցնել Սահմանադրութիւնը:

Գևո 1860 թւին, երբ հաստատուեց Ազգային սահմանա-

դրութիւնը, ոչ որ այնքան չուրախացաւ և չը հրճվեց, որքան Սկրտիչ խրիմեան: Վարագի վանքի մէջ նստած, Վասպուրակա- նի Արծիւը խօսք չէր գտնում արտայայտելու իր բերկրութիւնը: Սահմանադրութեան հաստատութիւնը նա համարում էր մի դա- րազուլէս, փրկութիւն թիւրքահայերի համար:

Անա թէ ինչ էր գրում նա 1860 թւին. «Սահմանա- դրութիւնը իբրև ամուր պարիսպ մը ազգը և հայրենիքը կը շըր- ջապատէ ու ամեն կերպ կը պաշտպանէ դարանամուտ գողերէ: Ինքնասէր շահախնդրութիւն, խորամանկ կաշառակերութիւն, բռնացող զրկողութիւն, կարծեաց յամառութիւն, անձընտիր ինք- նահաւանութիւն, անարժան ընտրութիւն, կողմնապահ աշառու- թիւն, անխորհուրդ վճիռ և այսօրինակ՝ ընկերութիւն վնասող անիրաւ վարմունքը Սահմանադրութեան օրինաց դժէն անցնելու կը պատկառին»:

Խրիմեանի սահմանադրական ուղղութիւնը շատ լաւ գիտէ- ին նրա թշնամիներն էլ,—բայց և այնպէս կեղծում էին, որովհե- տև հարկաւոր էր նրան ղիմադրել, տապալել...

Իսկ ովքեր էին այդ թշնամիները՝—իրանց սև վեղարի նը- ման սև սիրտ ունեցող եկեղեցականներ, հաշեառութիւնից փախ- չող առաջնորդներ, և առհասարակ մի խումբ աշխարհական և հողերական անձինք, որոնք այլ ևս չէին կարողանում կամայա- կանութիւն բանեցնել, փողեր ուտել, ղեղձումներ դործել... Դրանց ղեկավարը այն խումբն էր, որ կոչվեց Ղալաթի ոյ օճախ*, որը ամեն տեսակ աններելի միջոցներ գործ դրեց՝ խրի- մեանին տապալելու համար:—Ջրպարտութիւններ, մասնութիւն, կաշառք.—ամեն բան ներելի էր: Ի դուր չէր ասել մի եպիսկո- պոս թէ՛ «Խրիմեանի անկումը 22,000 բուբլի նստեց մեզի»:

Ժողովրդի մէջ տարածում էին ամեն տեսակ լուրեր: Խրիմեան քարոզում էր առաջադիմութիւն. հակառակորդ-

* «Ղալաթի ոյ օճախի» պարագլուխները՝—Մատթէոս Ե- պիսկոպոս Իզմիրեան, Ստեփան ֓ափազեան և այլն:

ները լուր էին տարածում թէ՛ «նա կառավարութեան դէմ է գրգռում»:

Խրիմեան իր ուժիկը բաժանում էր աղքատներին և կա- րօսներին: ասում էին թէ՛ «նա պատրիարքարանի փողերն է վառ- նում»:

Դպրոցներ պահելու, հիւանդանոցը ապահովելու համար հանգանակութիւն էր անում. ասում էին թէ՛ «պատրիարքական պատիւը ոտնակոխ կընէ»:

Խրիմեան պաշտպանում էր գաւառացիներին. ասում էին թէ՛ «պատրիարքը անխոհեմ է»:

Առաջարկում էր ապահովել հողերականների վիճակը. ա- սում էին թէ՛ «Խրիմեան դէմ է հայոց եկեղեցու ողուն»:

Պատրիարքը պաշտպանում էր ազգի իրաւունքները կա- ռավարութեան առաջ. ասում էին թէ՛ «նա վտանգի կենթարկէ ազգը»:

Նա պահանջում էր, որ գաւառներին ինքնավարութիւն տրել. ասում էին թէ՛ «հակասահմանադրական է Խրիմեան»:

Սակայն որ մէկը պատմենք:

Ստամբուլի մթնոլորտում մնլած սև-սիրտ մարդիկ ընդու- նակ չէին հասկանալու այն մարդուն, որը մարմնացած անձ- նուերութիւն էր և պահանջում էին, որ պատրիարքը՝ թաւշեայ փարաջան հազած, իբրև մի անմերձեալի կուռք նստի իր գահի վրա, և միայն թղթեր ստորագրի...

Սակայն Խրիմեան ընդունակ չէր այդ տեսակ պատրի- արք լինելու...

Ուստի ղանազան երկպառակութիւնների առաջն առնելու համար՝ նա վճռեց հրաժարվել պատրիարքական գահից: Մի քա- նի անգամ հրաժարական ներկայացրեց, բայց Ազգային ժողովը մերժեց:

1873 թւի օգոստոսի 3-ին իր վերջին հրաժարականը տուեց Ազգային ժողովին, մի և նոյն ժամանակ էլ մի հրաժարագիր ու- ղարկեց Բ. Դրան:

Բ. Գուռը ընդունեց այդ հրաժարականը, իսկ Աղբային ժողովը՝ ոչ: Սակայն խորմեան՝ անդառնալի կերպով վճռած լինելով հրաժարվել, օգտատուի Յ-ին Աղբային ժողովի բաղմամարդ նխատու՝ կարդաց իր հուշակառու «խօսք հրաժարման» և հեռացաւ պատրիարքարանից:

Առաջ ենք բերում այդ նշանաւոր հրաժարականից մի քանի կտորներ.

«Կըսեն թէ պատրիարքը Սահմանադրութեան դէմ կը խօսի և նրա տրամադրած օրէնքները կատարելու փոյթ չունի:

«Այսօր և յաւիտեան կը բողոքեմ. զի խորմեան յառաջ քան զլաթսուներորդ թւականն՝ 1820 թ. ապրիլ չորս՝ անդատին ի մօրէ Սահմանադրութենէ առաջ սահմանադրական ծնած է և ցորեկ արեւուն լուսով յաշխարհ եկել է. խիստ զժուարիւն է զանի իբրև հակասահմանադրական ամբաստանել»:

Հայրիկ իր խօսքը վերջացրեց ասելով.

«... Կը մնայ ինձ օրհնել համայն ազգը, և հրաժեշտ մատուցանելով երեսփոխանութեանդ՝ վահանայ Գողթնացւոյն պէս պաղատել.

«Արձակեցէք որ տեսանեմ զորչափութիւն աւերածոց երկրին իմոյ Հայրենեաց»:

«Թոյլ տուէք այս աթոռէն ելնեմ և հօն նստեմ. թերևս այսու խաղաղութեան օրինակ մի ընծայեմ իմ յաջորդիս: Թոյլ տուէք, եթէ իբրև պատրիարք՝ չի կարացայ՝ իբրև խորմեան վարդապետ գործել, թերևս իբրև խորմեան՝ կարենամ իբրև պատրիարք գործել:

«Երթաւ բարեաւ, Արծիւ, ասացէք. գնա, գտիր վարագ քո սիրած խօսքն ու գրիչ և սակաւիկ մի թանապուր: Հոն մենացիր, զի նաւ խռովեալ փութայ ի նաւահանգիստ»:

Այդ խօսքերով խորմեան հրաժարուց գահից:

Եթէ այդ հրաժարականի մէջ մի սխտիչ կէտ կայ,—այն է, որ Հայրիկից յետոյ պատրիարքական գահը բարձրացաւ՝ Ներսէս վարժապետեան:

Արժանաւոր յաջորդ՝ արժանաւոր նախորդի:

IX

Խորմեանի պատրիարքութիւնից հեռանալու լուրը՝ անաղինցաւ պատճառեց դաւաճներին:

Իսկ թշնամիները աւելի սանձարձակ դառնալով, որովհետև նա այժմ պատրիարք չէր, այլ մի պարզ եպիսկոպոս, շարունակեցին իրանց զրպարութիւնները և բամբասանքները:—«Խորմեան քանդեց պատրիարքարանը, դատարկեց աղբային սնդուկը, կոկորդը անցուց Աւագաղբիւրի փողերը»—ասում և գրում էին նրանք:

Իսկ Հայրիկ անվրդով կերպով տանում էր այդ բոլորը:

Ահա թէ ինչպէս է նկարագրում նրա այն ժամանակվայ կեանքը ակամատեաներից մինը.

«... Հրաժարելով, զլուսը քաշած կը նստէր ընդարձակ ամացի տան մը մէջ Իճատիէ: Քանի մը անգործ մնացած վանեցիք եկել էին իր ծառայութիւնն ընելու, և ընդարձակ սրահի մը մէջ զրած էին իրանց անկողիները: Երբ ես ներս մտայ՝ նստեալ սեղանի զլուսի կօրհնէր իրանց ճաշը այդ հրաժարեալ պատրիարքը, որ «ոչ միայն Աւագաղբիւրի 45,000 դրուշը, այլ նաև պատրիարքարանի սնդուկը պարպեր գնացեր էր»: Բնական էր հետաքրքիր աչք մը ձգել այդ գետինը տարածեալ սփռոցի վրա՝ որ սեղանն էր, ուր խաշած պաղ միս, կտոր մը վանայ պանիր, ձմերուկ մը... կուժ մը ջուր և մէկ երկու դաւաթ էին ամեն հանդերձանք և ճոխութիւն: Ճաշէն վերջ ելանք և պարտիզին մէկ շուքի մը տակ երբ առանձին նստանք՝ հարցուցի Հայրիկին թէ ինչ էր Աւագաղբիւրի այդ դիպուածը, որ լրագիրք ունէր անցեր էին:—«Աւագաղբիւր Մշոյ դաշտին մէկ գիւղն է,—ասաց Հայրիկ.—բարերարք ունէր նրա օգնութեան համար 45,000 դրուշ դրամ ժողոված և պահեստի դրած էին պատրիարքարան: Երբ պատրիարքարանի շուքը հրդեհ պատահեցաւ և հարկբաւոր աղքատ մնացին առանց հացի, առանց բնակարանի, պիտուրական վարչութիւնէն վրաններ ուղեցի այդ խեղճերը առժամանակ

պատուպարելու համար. բայց ինչ կրնայի ընել, երբ կանայք և երեխայք անօթի էին՝ առանց ծածկոցի, առանց անկողնի: Պատրիարքարանի արկղը, ինչպէս միշտ, մէկ ստակ չը կար, և ես չէի կրնալ ղանալ, երբ ես պատրիարք՝ որդիք կային, որ հայ կը խնդրէին: Աւագաղբիւրի դրամը կար:—Ահա թէ ինչպէս կիրայ այդ դրամը»: Եւ այս խօսքերը կը դրուէր առանց կիրքի, առանց զայրոյթի. իր կերպարանքի վրա դառնութեան հետք անգամ չը կար» *:

Միայն 1874 թւին, Ներսէս պատրիարքը դաճը նստելով՝ դրպարտիչներին ղսպելու համար, պաշտօնական կերպով յայտարարեց «Մասիս» լրագրում, թէ խրիմեան Հայրիկ ոչ մի կօպէկ պարտ չէ պատրիարքարանին:

Ընդհակառակը, պատրիարքարանի հաշիւներից երևում էր, որ Հայրիկ բաւական ստանալիք ունի ազգային մեղուկից.—բայց, ինչպէս միշտ, նա պարտքեր պահանջող չէր, բաւականա՜նում էր իր համետ ուժկով, որ իրրև նախկին պատրիարք ստանում էր կառավարութեան դանձարանից, և իր այդ ուժիկն էլ համարեա ամբողջութեամբ բաժանում էր կարօտեալներին: Այդ մարդը որքան խիստ խնայող և սնտես էր հասարակական փողերի վերաբերմամբ, այնքան էլ անհաշիւ էր իր անձնական փողերի վերաբերմամբ: Վերջին կօպէկը տալիս էր՝ դիմողներին: Մինչև անգամ պարտք էր վերցնում և տալիս խեղճերին: Կ. Պօլսում ամենքը գիտեն Հայրիկի սովորական կատակը, որ նա յաճախ կրկնում էր. «Աշխարհի մէջ երեք մարդ կայ, որոնց գրպանը միշտ ծակ պիտի մնայ. Սուլթան-Աղիզ, Գրիգոր Աղա և խրիմեան Հայրիկ»: (Այդ երկրորդը՝ մի առատաձեռն մարդ էր Կ. Պօլսում):

Պատրիարքական դահից իջնելով՝ նա ուզում էր վերադառնալ Տարօն: Բայց կենտրոնական վարչութիւնը՝ խլելով նրանից Սուշի վանահայրութիւնը ստիպեց Կ. Պօլիս մնալ: Այդ անարդարութիւնը սաստիկ վիրաւորեց Վասպուրականի Արծունի...

* Ծերենց, «Կաթողիկոսութիւն և խրիմեան», 1884 թ.:

Ստիպւած լինելով Կ. Պօլիս մնալ, նա բնակութիւն հաստատեց Կ. Պօլիս Ասիական թաղի յետ ընկած՝ հայոց մի եկեղեցու, այն է Գուղիունճուզի գաւթում, մի փոքրիկ խցում, հետու քաղաքի ազմուկներից:

—Հայրիկ, ինչո՞ւ չէք ուզում քաղաքի եւրօպական մասում ապրել, հարցնում էին բարեկամները:

—Այստեղ՝ ինձ իմ հայրենիքից ծով չէ բաժանում.—պատասխանում էր խրիմեան:

Այդ ժամանակ խրիմեան իրան նուիրեց գլխաւորապէս Գրական աշխատութիւնների: Ահա թէ ինչ էր ասում նա՝ 1875 թւին՝ տրապիզօնցի իր մի բարեկամին գրած նամակում.

«... Այս անգամի մեր տեսութիւնը շատ համառօտ եղաւ: Գուր ձեր ցաւերը բաւական պատմեցիք. բայց ես չը կրցայ իմ մշտերս ու վիճակս պատմել, թէ ինչպէս հայոց պատրիարքութեանը, թող բարոյական ցաւերը, բաւական և շատ նիւթական ցաւերին տակ ևս ճնշուեցայ, այսինքն գրեթէ 450 վրայէն աւելի պարտք մնաց վրաս. հայոց պատրիարքարանէն դուրս ելայ և ռեբրիմ թշնամիք այնպէս կարծեցին և բամբասեցին թէ ես ղկենտրոնական մեղուկն կողոպտել եմ:—Ուտի այդ իմ պարտքը վճարելու համար, բաւական ժամանակէ ի վեր սկսած եմ քանի մը աշխատութիւններ հեղինակել: Ես տրտունջ չեմ բառնար. երբ Պօղոս առաքեալ վրան կը կարէր և միանգամայն կ'աւետարանէր, ես ալ պարտական եմ աշխատել եկեղեցւոյ մանուկների համար: Ես այս միջոցով միայն մտաղիբ եմ պարտքերս վճարել, և եթէ յաջողէ Տէր՝ դարնան սկզբին ի հայրենիք դառնալ և հանգչիլ Վարազայ հովանեաց ներքև, ղի շատ խոնջած և վատակած եմ»:

1876 թւից խրիմեան սկսեց լոյս ընծայել իր աշխատութիւնները:

Գեռ պատրիարք չեղած՝ Հայրիկ գրել էր մի փոքրիկ գլուխ «Մարգարիտ Արքայութեան երկնից» վերնագրով: Դա Աւետարանի՝ գլխաւորապէս Մատթէոս Աւետարանչի մի քանի

գլուխները մեկնութիւնն է, ժողովրդի համար, որի մէջ հեղինակը ցոլացնում է Աւետարանի վարդապետութեան ողին:

1876 թւին երկրորդ տպագրութեամբ հրատարակեց «Հրաւիրակ Արարատեանը» *, աւելացնելով իր այդ բանաստեղծական գեղեցիկ գրուածքին մի նոր գլուխ՝ «Տարօնի» մասին:

Նոյն թւին լոյս տեսաւ մի գեղեցիկ աշխատութիւն, որի մէջ արտափայլում են Խրիմեանի քրիստոնէական բուռն դժայցումները: Դա «Սաչի ճառ» գիրքն է, որ Հայրիկը նուիրում է հոգեորականութեան՝ իբրև մի լուսատու ջահ: Դրա մէջ հեղինակը, իրան յատուկ ազդու լեզուով և ոգևորութեամբ քարոզում է այն անմահ վարդապետութիւնները և գաղափարները, որ քարոզեց Քրիստոս, աշխատելով տապալել այն բոլորը, ինչ որ հակառակ է քրիստոնէական սկզբունքներին, արդարութեան և ճշմարտութեան: Գիրքը վերջացնում է քարոզելով՝ թէ ճշմարտութիւնը անյաղթելի է, և ասում է. «Ով արդար և ազատ ճշմարտութիւն, գիտես, խելակորոյս մարդիկ մեռուցանելն՝ յաղթութիւն կը համարին. բռնանալ տիրապետել՝ բաղդի տուրք կը համարին. մարդոյն ազատ պարանոցը ստրկութեան լծով կորացուցանել՝ իրաւունք կը համարին. դադքասն ու զանաւագ կռիւհարել՝ զօրութիւն կը համարին. բազմաց վերայ բարձրանալ պերճանալ՝ թագաւորութիւն կը համարին. միով բանիւ միշտ գունդործելով ճշմարտութիւնը նուաճել՝ փառք և յաղթութիւն կը համարեն: Այլ դու, ով ճշմարտութիւն, գիտեմք ու կը խոստովանիմք, անընկճելի և անյաղթելի ևս»:

1877 թւին Խրիմեան հրատարակեց «Գրախտի ընտանիք» վերնագրով նշանաւոր գիրքը:

Տաղանդաւոր հեղինակը շատ մօտ էր ուսումնասիրել հայոց

* «Հրաւիրակ Արարատեանի», ինչպէս և «Հրաւիրակ Աւետեայ երկրին» գրուածները մասին առիթ ունեցանք խօսելու մեր գրքի երկրորդ գլխում: «Հրաւիրակ Աւետեայ երկրին» գրքի երկրորդ տպագրութիւնը այս 1892 թւին լոյս կը տեսնի Նրուստէ մի հայոց վանքի տպարանից:

ընտանեկան կեանքը. նա լաւ գիտէ նրա լաւ և վատ կողմերը, և այդ գրքի մէջ մի կողմից քննադատելով այդ կեանքի թիւր և սխալ կողմերը, միւս կողմից աշխատում է պատկերացնել՝ թէ որն է օրինակելի, բախտաւոր ընտանիքը, դրա խտի ընտանիքը:

Այդ աշխատութեան մէջ հեղինակը շօշափում է հետեւեալ հարցերը՝ ամուսնութիւն, ամուսինների կոչումը, իրաւունքները, մարդու և կնոջ փոխադարձ պարտաւորութիւնները, երեխաների դաստիարակութիւնը, տան անդամների յարաբերութիւնները և այլ այնպիսի հարցեր, որոնք սերտ կապված են ընտանեկան կեանքի հետ:

Գրքի իւրաքանչիւր տողից ջնշում է ազատ ողի: Արժանաւոր հեղինակը բուռն կերպով պաշտպանում է՝ ամուսնութեան մէջ ազատ ընտրութեան սկզբունքը, կնոջ հաւասարութիւնը իր մարդու հետ, կանանց կրթութեան խնդիրը, և որ և է բըռնութիւն կամ ճնշումն ընտանեկան յարկի տակ՝ համարում է ընտանիքի դժբախտութեան ամենաառաջին պատճառը:

«Գրախտի ընտանիքը» սիրված գիրք է: Ամեն մի զրադէտ մարդ թիւրքաց Հայաստանում՝ պարտք է համարում առնել և կարդալ «Գրախտի ընտանիքը»: Մինչև այժմ էլ սովորութիւն է, որ Վանում աղջիկ մարդու տալիս՝ «Գրախտի ընտանիք» մի օրինակ՝ օժիտի հետ միասին՝ փեսայի տունն են ուղարկում:

«Գրախտի ընտանիքից» յետոյ լոյս տեսաւ Հայրիկի մի ուրիշ նշանաւոր գրուածքը, այն է «Սիրաք և Սամուէլ»: Դա բարի հօր կրթական դասերն են, որ տալիս է հայրը իր որդուն, որը ոտք է դնում կեանքի մէջ:

Սիրաքը ինքը Խրիմեանն է, իսկ Սամուէլը—հայ ժողովուրդը: Եւ ինչ որ ասում է Սիրաքը Սամուէլին, դա այն է, ինչ որ Խրիմեան ուզում է սանել՝ հայ ժողովրդին:

«Սիրաք և Սամուէլի» մէջ շօշափված են փելիսօփայական և սօցիալական կարևոր խնդիրներ, ինչպէս օրինակ՝ իշխանութիւն և հպատակ ժողովուրդ, աշխատանք և իրաւունք, ժողո-

վուրդ և աղուականներ, անհաւասարութիւն մարդկային ընկերութեան մէջ, անհատական և ընկերական խնդրազորձունէութիւն և այլն:

Այդ գիրքը խրիմեանի աշխարհահայեցողութիւնն է, գրված այնպիսի լեզուով և այնպիսի կենդանի կերպով, որ կարդացւում է մեծ յախշտակութեամբ և ախորժակով, ուստի հասկանալի է, թէ ինչու այդ գիրքն էլ, որ ներշնչված է առաջադիմական մտքերով, շատ տարածված է թիւրքահայերի մէջ:

1876 թւի հոկտեմբերի 30-ին տեղի ունեցաւ վանի սուկալի հրդեհը: Արեք թիւրք զինուորներ զիտմամբ կրակ գցեցին մի հայի խանութ, որից ամբողջ վաճառատունը բռնկվեց: Հրդեհը լափեց հողարաւոր մարդկանց ունեցած-չունեցածը, մնացածն էլ թուրքերը յախշտակեցին: Այդ անսպասելի թշուառութեան լուրը հասաւ Կ. Պօլիս. վշտահար խրիմեանը գրեց «Վանդոյժը», — մի կաթիլ ջուր, որ նա սրակում է իր այրված հայրենիքի վրա:

Մի քանի ժամանակից յետոյ՝ Կ. Պօլիս հասաւ Բաղրամաղի և Ալաշկերտի կոտորածներին գոյժը.— խրիմեան գրեց «Հայգոյժ»:

«Վանդոյժը» և «Հայգոյժը» խրիմեանի բուռն զբացմունքների զեղմունքն է, որոնց խրաքանչիւր տողից կաթում է արտասուք և արիւն....

«Վանդոյժի» մէջ տրբալով թշուառ ժողովրդի թշուառ կեանքը, նա վերջումը յոյս է տալիս ասելով.

«Գարունը մօտ է, հայոց աշխարհ, և պիտի գայ ծիծիւնակ քեզ աւետիտ տայ, թէ թիւրքաց աշխարհին երկունք կանցնի և իւր վերածնութեան օրն հասած է. և դու տես յայնժամ, թէ ինչպէս այդ մոխրակոյտ ազարակն անդրէն բողբոջելով կը կանաչի, և քո վերջին բարգաւաճ կը լինի, քան զառաջին»:

Այդ փոքրիկ տետրակները իրանց ազդու բովանդակութեամբ այնքան մեծ տպաւորութիւն արեցին, որ թիւրքաց կառավարութիւնը հարկ համարեց արգելել «Վանդոյժի» վաճառելը: Ուստի երկրորդ տպագրութիւնը 1877 թւին լոյս տեսաւ Թիֆլիսում:

Բացի իր այդ դրուածքներից խրիմեան ունի մի քանի տարիչ տետրակներ, օրինակ, մի տետրակ Պապականութեան դէմ», «Ժամանակ և խորհուրդք ինչ» և այլն: Բացի սրանցից, նա ունի ուրիշ անտիպ գրուածքներ ևս և մինչև այժմ էլ պատրաստ է գրաւոր վաստակներով:

խրիմեան՝ ժամանակակից ամենատաղանդաւոր հայ գրողներիցն է: Նա ունի բանաստեղծական մեծ քանքար, և զրա հետ միասին նուրբ փիլիսոփայական դիտողութիւն:

Նա բանաստեղծ-մտածող է: Որպէս մտածող-փիլիսոփայ, խրիմեան մեզ ներկայանում է իբրև մի ամբողջութիւն, իբրև մի բոլորովին ձևակերպված մտածող, ներշնչված առաջադիմական մտքերով:

Թէ իբրև բանաստեղծ և թէ իբրև մտածող՝ խրիմեան վերին աստիճանի ի դէպի ստ է: Նա խղէալիստ էր, երբ դեռ 25 տարեկան երիտասարդ էր, խղէալիստ մնաց և ծերութեան հասակում, երբ սպիտակ մազերը ծածկեցին նրա զուռեր:

Թէ իր գրուածքների խրաքանչիւր տողում, թէ իր գործունէութեան ամեն մի քայլափոխում, մի խօսքով իր ամբողջ էութեամբ նա ներկայացնում է՝ անընկճելի, անսպառելի հաւատ դէպի խօսքի, զաղտիարի, մտքի յաղթանակը, սէր՝ դէպի մարդիկ, և յոյս՝ դէպի ապագան:

Նա չը գիտէ յուսահատվել և թերահաւատել. նա քնդունակ չէ ատել.— ահա դրա մէջն է այդ հսկայի անսպառելի ոյժը, որին չը կարողացան խորտակել ոչ բանաւր, ոչ սքսորը, ոչ հալածանքը....

Նա ներկայացնում է մարմնացած՝ հաւատ, յոյս, սէր....

X

1878 թւին, ուս-թիւրքական պատերազմից յետոյ, կայացաւ Բերլինի կոնգրէսը: Գերմանիայի մայրաքաղաքի փառաւոր

դահլիճներում պէտք է վճռվէին այն հարցերը, որոնք օրվա ք
խնդիր էին դարձել պատերազմի դաշտում թափած կարմիր ա-
րեան չնորձով...

Այն ժամանակ Կ. Պօլսի հայոց պատրիարքական աթոռի
վրա բազմած էր անմահ Ներսէս Վարժապետեան,— թիւրքահա-
ջերի իրաւունքների այդ տաղանդաւոր պաշտպանը, որ վճռեց
կօնդրէսին ներկայացնել թիւրքաց Հայաստանի թշուառ վիճակը
և արդարութիւն պահանջել:

Ո՞վ կարող էր աւելի լաւ կատարել այդ մեծ գործը, քան
Խրիմեան Հայրիկ,— թիւրքաց հայերի վշտերի և իղձերի այդ
մարմնացած ներկայացուցիչը:

1878 թւի մարտի 8-ին նա Եւրօպա ուղևորվեց:

Առաջին անգամն էր, որ Խրիմեան ոտք էր դնում քաղա-
քակիրթ աշխարհում: Մնաս բարեաւ ասելով խաւարի երկրին՝
նա գնում էր դէպի լոյսը, իր սրտի մէջ կրելով մի սրբազան
խորհուրդ:

Հայոց Հայրիկը պտտեց ամբողջ Եւրօպան: Նա այցելեց
բոլոր նշանաւոր մայրաքաղաքները՝ Հռօմ, Վիեննա, Պարիզ,
Լոնդօն, Բերլին. տեսնուեցաւ եւրօպական դիպլոմատիայի ղե-
կավարների հետ, պատմեց իր ժողովրդի վշտերը, փափագ-
ները, և յանուն արդարութեան ու յանուն եւրօպական քաղաքա-
կութեան՝ պահանջեց մի ելք, մի միջոց...

Հայրիկ՝ որտեղ մտնում և լինում էր, թէ պաշտներում և
թէ մինխտրների առանձնատեսներում, գեղեցիկ տպաւորու-
թիւն էր թողնում թէ իր պատկառելի դէմքով և թէ իր խելացի
խօսակցութեամբ: Նկարագրելով թիւրքաց Հայաստանի վիճակը,
և խնդրելով եւրօպական պետութիւններից թիւրքաց հայե-
րի համար՝ մարդավայել կեանք, կեանքի և պատւի ապահո-
վութիւն և ազատ զարգացում,— Խրիմեան աշխատում էր համո-
զել, որ Փոքր-Ասիայում հայերը միակ ազգն են, որ կարող են
միջնորդ հանդիսանալ Եւրօպայի քաղաքակրթութիւնը և լուսա-
ւոր գաղափարները Ասիայի խորքերում տարածելու համար:

Առաջ ենք բերում այն խօսակցութեան մի մասը, որ Խրիմ-
եան ունեցաւ Հռօմում՝ իտալացոյց արտաքին գործերի մինխտր
Կամս Աօրափի հետ:

«... Հայերը իրաւունք ունին սպասելու, որ իրանց պա-
հանջները կատարվեն, որովհետեւ այժմեան Ասիայի մէջ ա-
մենէն աւելի քաղաքակիրթ ժողովուրդն են: Չանց առնե-
լով պատմել այն առաջադիմութիւններ, զորս նոքա կատարած
են դիտութիւնների և արուեստների մէջ, Ձերդ Վսեմութեան
մէկ գաղափար տալու համար թէ ինչ մտաւոր մշակումի հասած
են նոքա իրանց յատուկ ճիգերով և անխնջ յարատեւումով, պի-
տի ասենք, թէ հայերն այսօր կրնան կարգաւ իւրեանց ազգային
լեզուով հին աշխարհի գրեթէ բոլոր յոյն և լատին հեղինակներն,
որպէս նաև անմահ գործերն այն հանճարների, որոնք պանծալի
հանդիսացուցած են Խոսիան, Ալէմանիան, Ֆրանսիան և Անգլիան:
Ո՞ր ասիական ժողովուրդը կրնայ հայ ազգին հետ զուգակշիռ
գալ այս նկատմամբ... Թայլ տուէք նկատել և հետեւալը. Խոս-
լիա կարող է ըմբռնել թէ ոչքան պիտի ծաղկի հայ ազգը, երբ
ստանայ այն ընտիր և արդար վարչութիւն, զոր կը պահանջէ
այսօր. զի իտալական փառապանծ դրօշին տակ կը պատսպար-
վի այժմ Վենետիկի Միսիթարեան ձեմարանը, ոյր համբաւ ծա-
նօթ է դիտուն աշխարհին, և զոր Եւրօպա կը գնահատէ արժանա-
պէս: Այդ վանքի նման հարիւրաւոր վանքեր կան Օսմանեան
Հայաստանի մէջ, ուր համախմբված են հայ կրօնաւորներ, ցեղա-
կից ս. Ղազարի կրօնաւորներին. այլ անժխտելի է, որ մեր վան-
քերէ ոչ մին կրցած է հաւասարիլ Վենետիկի հայ մենաստանին:
Պատճառն այն յոռի վարչութիւնն է, որ կ'աւերէ Հայաստանն...
Հայաստանի մենաստաններն կեղեքում և յարձակում կը կրեն
անդու: Ձեր Վսեմութիւն քաջ գիտէ թէ մտաւոր մշակումն երկ-
րորդական խնդիր է մի երկրի մէջ, ուր չը կայ ապահովութիւն:
Տուէք մեզ վարչական ինքնուրոյնութիւն և Հայաստան կը ծածկ-
վի ս. Ղազարի ձեմարանին պէս ձեմարաններով, որք եւրօպա-
կան քաղաքակրթութիւն կը ծաւալեն ասիական աշխարհին մէջ...»

Եւ Եւրօպայի զիմելով Հայաստան կրուէ. Օգնեցէք ինձ որպէս զի վերականգնիմ, դորձադրեցէք զիս՝ որպէս զի ասիական աշխարհին մէջ ծաւալէք քրիստոնեայ Եւրօպայի քաղաքակրթութիւնն *»:

Եւրօպական մայրաքաղաքները պատեւուց յետոյ՝ հայոց պատուիրակ ** Խրիմեան յունիսի 2-ին հասաւ Բերլին, ուր եկաւ նոյնպէս և արքեպիսկոպոս Խորէն Նար-Բէյ, որին Ներսէս Վարժապետեան իբրև պատուիրակ ուղարկել էր Պետերբուրգ:

Հայոց պատուիրակութիւնը մի յիշատակագիր ներկայացրեց կօնգրէսին, որով թիւրքաց Հայաստանի համար ա եղական ինքնավարութիւն էր խնդրում: Պետութիւնների ներկայացուցիչները արդարացի դանկելով հայոց պահանջները՝ ընդհանուր հաւանութեամբ խմբագրեցին դաշնադրութեան 61-րդ յօդուածը, որ հետեւեալն է. «Բ. Գուռը յանձն է առնում անյապաղ իրականացնել այն բարեփոխները ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պիտոյքները հայոց բնակած նահանգներին մէջ, և երաշխաւորել նրանց ասպնովութիւնը չեղքէզների և քրդերի դէմ: Բ. Գուռն այս նպատակի համար ձեռք առած միջոցները պարբերաբար պիտի ծանօթայնէ պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց դորձադրութեան վրա ***»:

* «Հայաստան և Խտալիա» գրեց Մինաս Չերազ կ. Պօլիս-1879 թիւ:

Մինաս Չերազ գնացել էր Եւրօպա՝ Խրիմեանի հետ՝ իբրև թարգման և քարտուղար:

** Խրիմեանի պաշտօնական այցետոմսի վրա գրված էր հետեւեալը. L'archeveque Mkrtich Khrimian ex-patriarche et deputé de l'Arménie de Turquie (Արքեպիսկոպոս Մկրտիչ Խրիմեան, նախկին պատրիարք և պատուիրակ Օսմանեան Հայաստանի):

*** Ինչպէս յայտնի է, Բերլինի կօնգրէսի 61-րդ յօդուածից առաջ՝ հայերի համար Սան-Ստեֆանոյի դաշնադրութեան մէջ մտցրած էր 16-րդ յօդուածը:

Երբ՝ վերջին ուսուցիչական պատերազմի ժամանակ, ուսաց բանակը՝ Մեծ Իշխան Նիկօլայի առաջնորդութեամբ կանգ

կօնգրէսը վերջացաւ:

Մի օր, Բերլինի հիւրանոցներից մինում նստած, շրջապատված մի քանի հայերով, Հայրիկ պատմում էր Եւրօպայում ստացած դանազան տպաւորութիւնները: Այդ օրը թագաժառանգ Ֆրիդրիխ (այժմեան Վիլհէլմ կայսրի հայրը) ճաշի էր հրաւիրել կօնգրէսի բոլոր անդամներին, ի միջի այլոց և Խրիմեանին:

—Մեր խնդիրքը չեն կատարեր, բայց մեզի ճաշի կը հրաւիրեն,—դառնութեամբ նկատեց Հայրիկ:

Եւ երբ շրջապատողները նկատեցին, որ յարմար չէ ճաշից հրաժարուիլ և պէտք է անպատճառ դնալ, Հայրիկ դառն ժպտով աւելացրեց.

—Ուրեմն այսօր Խրիմեան ալ գիլօմաթ պիտի ըլլայ:

Եւրօպա եկողը չի կրնար զիջումատութիւն չընել, որովհետև այսօր զիջումատիան՝ ամեն բանի վրա կը թաղաւորէ: Ար տեսնենք արդեօք այն երանելի օրը, երբ Եւրօպան՝ ոգևորված մարդասիրական լայն գաղափարներով, քրիստոնէական անարատ ըզգացմունքներով, ձեռք կը կարկառէ խեղճին, հալածվածին, ընկածին՝ առանց զիջումատիական հայեացքների, առանց քաղաքագիտական յետին մտքերի, այլ դուռ մարդասիրական զգացմունքներից զրոգւած: Միայն այն ժամանակ քաղաքակրթութիւնը կը տանի իր վերջնական յաղթանակը, երբ կը հասնի այդ օրը:

Եւ մինչդեռ շրջապատողները գլուխները շարժում էին, ա-

առաւ կ. Պօլսի մերձակայ Այս-Ստեֆանոս զիւղի մօտ, այդտեղ ուսաց և թիւրքաց հաւատարմատարների ձեռքով հաստատուեց Սան-Ստեֆանոյի դաշնադրութեան 16-րդ յօդուածը, որ հետեւեալն է. «Որովհետև ուսաց զօրքերը Հայաստանի մէջ գրաւած երկրներից յետ քաշուելուց յետոյ՝ յիշեալ տեղերում կարող են կռիւներ և խառնակութիւններ տեղի ունենալ, որոնք երկու պետութիւնների լաւ յարաբերութիւնները կարող են խանդարել, Բ. Գուռը յանձն է առնում անյապաղ իրականացնել այն բարեփոխները և բարենորոգումները, որ տեղական պիտոյքները պահանջում են հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ասպնովութիւնը քրդերի և չեղքէզների դէմ»:

սելով որ այդ օրը երբէք չի հասնի, Խրիմեան իրան յատուկ ոգևորութեամբ պատասխանում է.

—Ոչ, ես կը հաւատամ, որ կը հասնի....

Յուլիսի 30-ին Խրիմեան Հայրիկ վերադարձաւ Կ. Պօլիս, մօտ հինգ ամիս Եւրօպայում մնալուց յետոյ:

Կ. Պօլսում ամենքն էլ յիշում են այն նշանաւոր քարոզը, որ նա խօսեց Մայր-եկեղեցում, 61-րդ յօդուածը «խարխալի» օրինակով բացատրելով:

XI

Եւրօպայից վերադառնալուց յետոյ, Խրիմեան երկար չը մնաց Կ. Պօլսում: 1879 թւին նա կարողացաւ յաջողեցնել, որ վերադառնայ Վասպուրական: Դա մի աննկարագրելի բախտաւորութիւն էր նրա համար: 10—15 տարի կը լինէր, որ նա չէր տեսել իր սիրած երկիրը, իր Վարազը, իր Վասպուրականը....

Ստամբուլից հեռանալով, Հայրիկ սրբազան զգացմունքներով ոտք կոխեց հայրենիքի հողի վրա:

Անցնելով հայաբնակ տեղերով, Խրիմեան ուրախութեամբ նկատում էր ժողովրդի ինքնաձանաչութեան մէջ մեծ փոփոխութիւն.—ճշմարիտ է, շրջապատող հանդամանքները, տնտեսական կեանքը, վարչական կազմակերպութիւնը առաջվայ տխուր պատկերն էին ներկայացնում, բայց միւս կողմից՝ ժողովրդի մըտաւոր կեանքի մէջ՝ նախկին խաւարի փոխարէն սկսել էր թափանցել լոյս, առաջվայ անշարժութեան տեղ՝ երևում էր շարժում... Յրկրի յետ ընկած անկիւններում տեղ-տեղ երևում էին դպրոցներ, ուսուս մարդիկ, նոր-նոր ձգտումներ, նոր աշխարհահայեցողութիւն:

Տեսնելով այդ բոլորը, Խրիմեան ակամայ յիշեց 50-ական թւականները, երբ ինքը մեն-մենակ, բայց լի եռանդով և հաւատով, սկսեց իր գործունէութիւնը, համոզված լինելով որ գաղափարը, լոյսը և միտքը ի վերջոյ յաղթող կը հանդիսանան:

Եւ նա տեսնում էր այդ յաղթութեան նշանները....

Վարազը նոր կեանք առաւ Խրիմեանի գալովը: Տպարանը սկսեց նորից գործել: Վանի երիտասարդների և դպրոցական կեանքի մէջ նոր շարժում սկսվեց.—աղաներից և սեահողի կղերից հալածված ուսուցիչները և երիտասարդները՝ զօրեղ պաշտպան գտնելով Խրիմեանի անձի մէջ, սկսեցին գործել աւելի մեծ եռանդով և ոյժով:

Վասպուրականն այդ ժամանակ ենթարկվեց մի մեծ թըշուառութեան, և Խրիմեանի գալը այդ կողմից մի մեծ փրկութիւն էր ժողովրդի համար:

Դա Վանի սովն էր:

Սովը՝ պատերազմի հետևանքներից մինն էր: 1879—80 թւականին ամբողջ Վասպուրականը հայ չունէր ուտելու, և ժողովուրդը սովամահ լինելու վտանգի առաջն էր կանգնած: Կառավարութիւնը ոչ կարող էր, և ոչ էլ ուզում էր մտածել ժողովրդին օգնութիւն հասնելու մասին: Վանի մէջ կառավարութիւնը մի քանի ամբար ցորեն ունէր, բայց մի հատիկ անգամ չէր ուզում տալ ժողովրդին: Քաղցած ամբոխը՝ այլ ես չը կարողանալով համբերել, մի օր յարձակվեց ամբարների վրա, կոտորեց դռները և թալանեց բոլոր ցորենը....

Հայերի յոյսը իրանց վրա էր: Սովատանջ ժողովրդի թըշուառութեան դոյժը հասաւ Կ. Պօլիս, Կովկաս, Ռուսաստան: Ժողովրդի լաց ու կոծին՝ Խրիմեան միացրեց իր հրաւերը,—և անա աշխարհի բոլոր ծայրերում գտնված հայերը, օրինակելի առատաձեռնութեամբ, սկսեցին նուիրատուութիւններ անել յօգուտ Վանի սովեալների: Կ. Պօլսում կազմվեց Սովեւոյ Յանձնախումբ, որը պէտք է ստանար բոլոր նուիրատուութիւնները և անմիջապէս հասցնէր Վան: Խրիմեանի անունը արդէն մեծ գրաւական էր, որ փողերը ի զուր չեն վառնվիլ,—և այդ հանգամանքը կրկնապատկեց նուիրատուութեան չափը:

Ամբողջ ազգաբնակչութեան յոյսը և ապաւէնը՝ Խրիմեանն էր: Երբ Հայրիկը, սպիտակ ձի նստած, Վարազից գալիս էր

Վան՝ արտիկու սովեալներին և կարգադրութիւններ անելու ժողովուրդը՝ հայ, թուրք, քուրդ, քրիստոնեայ և մահմեդական, շրջապատում էին նրան և օգնութիւն խնդրում:

Եւ խրիմեան ամենքին օգնութիւն էր հասցնում, առանց նայելու, թէ օգնութիւն խնդրողը, սովատանջը՝ հայ է թէ թուրք, քուրդ է թէ եղիղի:

Շատերը Վանի հայերից և հոգեորականներից ատամներ էին կրճտացնում խրիմեանի դէմ, որ նա հայի հետ միասին օգնում է և թուրքին և քուրդին:

— Գրանց պէտք է սովամահ անել, — ասում էին նրանք:

Սակայն խրիմեանի մարդասիրական լայն ոգին ուրիշ կերպ էր դատում. — նա օգնում էր տառապեալներին, սովատանջներին, կարօտեալներին՝ առանց նայելու, թէ ինչ ազգի կամ ինչ կրօնի են պատկանում նրանք:

Երբ սովը անցաւ, քուրդ շէյխերից շատերը, որոնց մինչեւ այժմ չէ կարողացել ընկճել ոչ մի ֆիզիքական ոյժ, այնքան երախտապարտ էին դուրս իրանց խրիմեանի առաջ, որ երդվում էին նրա անուշտով, նայում էին նրա անձի վրա, իբրև մի սրբութեան վրա, և նոյն իսկ ոմանք եկան և ցանկութիւն յայտնեցին մտնել հայոց եկեղեցու գիրկը:

Խրիմեանի այդ ուղղութիւնը՝ սերտ բարեկամութիւն հաստատեց Վասպուրականի հայերի և քուրդ ազգապետների մէջ: Նոյն իսկ Վանի փաշան անդադար պախարակում էր Վանի թուրք մեծամեծներին, օրինակ բերելով հայերին:

— Ի դուր էք դուք հայերին պարսաւում, — ասում էր նա, — պարսաւելու փոխարէն ամաչեցէք. դուք՝ թուրք մեծատուններդ, ինչ արեցիք ձեր ազգասների համար, մինչդեռ հայերը ոչ թէ միայն իրանց՝ այլ և ձեր սովեալներին հաց էին տալիս:

1879—80 թւի սովից յետոյ՝ խրիմեանի անուշը ընդհանրացաւ նոյն իսկ մահմեդական քուրդերի և թուրքերի մէջ: Երբ նա պտտում էր զիւրերը, ժողովրդին տեսնելու, քաջակերելու կամ մի ուրիշ նպատակով, հայերի հետ միասին մահմեդական-

ներն էլ ընդ առաջ էին դուրս գալիս՝ ողջունելու հայոց մեծ վարդապետին:

Անցաւ սովը:

Այդ ժամանակ էր, որ խրիմեանի մէջ յղացաւ միտք՝ բանալու երկրագործական դպրոց, ժողովրդի անտեսագիտական զարգացմանը նպաստելու համար:

Հայաստանի մէջ առաջին երկրագործական դպրոց հիմնողը՝ խրիմեանն եղաւ: Գպրոցը նա հիմնեց Վարազում: Բերել անուց երկրագործական նոր տեսակի գործիքներ. հրաւրեց մասնագէտ ուսուցիչներ և Վասպուրականի զանազան կողմերից հաւաքեց աշակերտներ: Բացի աշակերտներին ուսուցանելը, դպրոցը գործնական օրինակ պիտի տար և մօտիկ զիւրացիներին, որոնք հրաւիրուած էին ներկայ լինելու երկրագործական դպրոցի աշխատանքներին:

Երեք տարի գոյութիւն ունենալուց յետոյ դպրոցը փակվեց: Խրիմեան մտադիր էր նոյն երկրագործական դպրոցը բանալ Հէքարի գաւառում, Սալախանէ գիւղում, որտեղ կայ առատ հող, ջուր և երկրագործ ժողովրդի մեծ բազմութիւն: Բայց այդ նրան չաջողվեց՝ Հայաստանից հեռանալու պատճառով:

Այդ միջոցներում Վարազը դարձաւ կենտրոն: Ոչ թէ Վասպուրականից, այլ ամեն կողմերից՝ ամեն դասակարգի և շրջանի հայեր գալիս էին տեսնելու խրիմեանին: Ամենքին նա ընդունում էր, ամենքին ապաստան տալիս, միջոցներ ցոյց տալիս և ամենքն էլ նրանից հեռանում էին՝ սիրտ առած, ոգևորված, կրելով իրանց սրտի մէջ այդ մեծ մարդու մեծ յիշատակը:

Վարազի փոքրիկ եկամուտներով և իր սուղ միջոցներով խրիմեան կարողանում էր հարկւրաւոր հիւրեր ընդունել և ճանապարհ գցել: Այդ նրանից էր, որ այդ մարդը վերին աստիճանի սակաւապետ է և համեստ իր մասնաւոր կեանքի մէջ: Առաւօտը արթնանում էր ամենից վաղ: Յերեկվայ աղատ ժամերը նա անց էր կացնում կարդալով և գրելով: Իսկ օրվայ մեծ մասը՝ նա տեսնուում էր իր մօտ եկողների հետ: Նրա ճաշը աւելի քան

համեատ է լինում. ուտիս օրերին ուտում է թանապուր, որ նրա սիրած կերակուրն է, իսկ պաս օրերին՝ պասուան ամենահասարակ կերակուրներ: Նրա այդ պարզ կենցաղավարութեան հետևում են նրա բոլոր շրջապատողները: Ճրագի լուսով պարապել չէ սիրում նա, և սովորութիւն ունի շուտ պառկել:

Նոյն պարզութիւնն է տիրում Հայրիկի բնակարանի և հագուստի մէջ: Սովորաբար նա հագնում է վանի հասարակ շաւերից կարած փարաջա, որը գերադասում է թաւիչից և կերպասից: Նա իր կրծքին չէ կրում ոչ մի շքանշան, կամ ազամանդալարդ փայլուն խաչեր:—Իր յարաբերութիւնների մէջ վերին աստիճանի պարզ է և մտերիմ. այդ պատճառով միշտ նրա մօտ ազատ մուտք են ունենում ամեն տեսակի մարդիկ, սկսած վերջին գիւղացուց:

Հայրիկը՝ իրրև զրուցընկեր՝ աննման է: Նրա կենդանի, վառվռուն լեզուն, սրամտութիւնների անսպառելի պաշարը և գրաւիչ դէմքը՝ այնքան զրուում են, որ խօսակիցը հեռանալ չէ ուզում: Այ թէ միայն վանում, այլ նոյն իսկ Կ. Պօլսի ամենաբարձր շրջաններում՝ հիւր գնացած ժամանակ, Հայրիկ դատում է ամենքի հետաքրքրութեան առարկան, ամենքն էլ նրան են շրջապատում և նրան լսում: Նրան չեն սիրում միայն նրանք, որոնք վախենում են ազատ և բաց խօսողներից, որովհետև Հայրիկի առաջին յատկանիշն է ամեն բան ասել՝ բաց և ազատ:



Վրա հասաւ 1885 թւականը:

Հայրիկ գիշեր-ցիւրեկ իր նախագծերի իրագործման վրա էր աշխատում, և նրա հետ միասին ամբողջ Վասպուրականը չէր էլ սպասում, թէ մօտեցել է բաժանման ժամը: Կ. Պօլսից հրաման եկաւ, որով Խրիմեանին առաջարկվում էր թողնել Վասպուրական և գնալ Կ. Պօլիս:

Տխուր լուրը կայծակի արագութեամբ տարածվեց:

Առանց կակիծի մնաս բարով ասել Վարագի վանքին, ուր աւելի քան քառորդ դար Վասպուրականի Արծիւը բոյն էր դրել,

ժողովրդին՝ որին նա նուիրել էր իր ամբողջ կեանքը, հայրենի գաւառին, որի իւրաքանչիւր անկիւնը նրա սրտի մէջ յարուցանում էր հազարաւոր գեղեցիկ յիշողութիւններ, այն տանը, ուր նա ծնվել, մեծացել էր, և վերջապէս այն բոլորին, ինչ որ կազմում էին նրա իրէպը և ձգտումը.—մնաս բարով ասել այդ բոլորին, և գուցէ ընդ միշտ, անդառնալի կերպով՝ ծանր էր, շատ ծանր նոյն իսկ Հայրիկի համար, որ սովոր էր տանջվել, հալածվել....

Ապրիլ ամիսն էր: Վարագին վերջին հրաժեշտը տալուց յետոյ, Հայրիկ գնաց Վան: Այգեհտանի եկեղեցիների մէջ տուեց իր վերջին ողջոյնը ժողովրդին: Ս. Աստուածածին եկեղեցում դառնալով հազարաւոր ժողովրդին՝ նա ասաց հետևեալը.

«ժողովուրդ հայոց, հեռանում եմ ձեզանից: Թողնում եմ սիրելի հայրենիքս, ինձ կեանք տուող ժողովուրդս, և Վարագը՝ որտեղ 27 տարվայ ընթացքում մի բոյն էի շինել ինձ համար՝ իմ այս մասներով: Բայց մի կարծիր, ժողովուրդ հայոց, թէ Խրիմեան գնաց և մտացաւ ամենքիդ: Այն օրից, երբ 1820 թըւին Խրիմեան մկրտվեց այս սուրբ աւազանում (ցոյց տալով իր մկրտված տեղը), մի տախտակ շինվեց նրա սրտի վրա ու ժողովուրդ բառը գրվեց: Քանի չունչս բերանուամ է, ոչ ոք չէ կարող եղծել այդ բառը այնտեղից: Գուք էլ, ժողովուրդ հայոց, մի եղծէք Հայրիկի անունը ձեր սրտից: Յիշեցէք Հայրիկին ձեր աղօթքների մէջ: Սիրեցէք միմեանց. դաստիարակեցէք ձեր որդոց. աշխատեցէք լոյսի համար, հացի համար: Խօսք եմ տալիս, ուր որ էլ լինիմ, թէ Մասեաց ստորոտ թէ Բիւզանդիոն, մէկ օր էլ չանցկացնել առանց իմ հայրենիքը յիշելու: Իսկ երբ Խրիմեան աւանդէ իր հողին, նրա անբռնաբարելի կտակը պիտի լինի՝ իր ոսկրները Վասպուրական փոխադրել, Վարագի խաչաքարերում, իր հայրենիքի ծոցում ամիտփել»:

Գնալու օրը, Այգեհտանի արեւելեան ծայրից, ուր գտնվում է Հայրիկինց տունը, մինչև քաղաք և քաղաքից էլ մինչև Աւանց, այսինքն մօտ երկու ժամկայ ճանապարհ, ժողովուրդը խռնված սպասում էր: Դպրոցները, չուկաները և բոլոր գործատեղերը

փակված էին: Հէնց որ Հայրիկ երևաց, օղը թնդաց ծախահա-
րութիւններով և կեցցէներով: Յոյցերի հետ միասին շատերը լաց
էին լինում: Ամենքն էլ մօտենում էին վերջին անգամ Հայրիկի
ձեռքը համբուրելու:

Հեծեալների ահազին բազմութեան հետ միասին՝ խորհեա-
նին ուղեկցեցին մինչև Աւանց գիւղը՝ վանի ուռուսաց և պարսից
հիւպատոսները, տեղապահ եպիսկոպոսը, իշխանութեան ներկա-
յացուցիչը, ոստիկանապետը հեծեալ ոստիկաններով, և հայոց
Գաւառական ժողովի անդամները:

Անցնելով Արծկէ, Պուլանըխ և Մուշ, Հայրիկը Կարինի
վրայով դնաց Կ. Պօլիս, ամեն տեղ հանդիպելով ժողովրդական
մեծ ցոյցերի:

Այդ նոյն օրերն էին, երբ Էջմիածնում կատարվում էր
1885 թվի կաթողիկոսական ընտրութիւնը:

Ամբողջ ժողովրդի փափագն էր, որ խորհեալն կաթողիկոս
ընտրվի:

Բայց ժողովրդի փափագը՝ Էջմիածինը չիրագործեց:

XII

Կ. Պօլսում Հայրիկ մնաց ամբողջ վեց տարի, իբրև պան-
դուխտ-աքսորական: Նա նման էր թևերը կտրած արծուի, որ
սպրում է, բայց թռչել չէ կարող: Տարիները անցնում էին տա-
րիների յետևից...

Հասաւ վերջապէս 1890 թվականը: Տեղի ունեցան Գում-
Գափուի և Էրզրումի դէպքերը: Եկաւ և 1891 թվականը: Մարտ
ամիսն էր, մի մուսլի և տխուր օր...

Սուլթանի թիկնապահներից մինը եկաւ խորհեալնի մօտ և
յայտնեց հետևեալը.

— Նորին վահապառութիւնը առաջարկում է ձեզ ուխտ
գնալ Երուսաղէմ: Պատրաստ եղէք. նաւը չուտով ճանապարհ
կընկնի: Ձեր ճանապարհի ծախսը կը հողաց արքունի գանձարանը:

Մի քանի ժամանակից յետոյ Բօսֆօրի ափերից՝ թրքական
մի շոգենաւ ճանապարհ ընկաւ դէպի Երուսաղէմ:

Նաւի մէջ նստած էր խորհեալն Հայրիկ:

Նաւը քիչ-քիչ անհետանում էր. երևում էին միայն տաճ-
կական բարձր մզկիթների գագաթները:

Ծերունի ուխտաւորը վերջին անգամ երեսը դարձրեց դէ-
պի Ստամբուլ: Նրա դէմքը խոթուեց: Առաջին անգամն էր, որ
այդ դէմքի վրա նկատվում էր ատելութիւն, ատելութիւն դէպի
այն քաղաքը, որին դիպչելով խորտակվում են քաղաքակրթու-
թեան ալիքները, ինչպէս ժայռին դիպչող ջրի ալիքները....

Նա չուտով մտապաւ Պօլիսը: Յիշեց Երուսաղէմը:

Յիշեց և իր անցեալը: Բառասուն տարի առաջ՝ նա նոյն
ճանապարհով դնացել էր Երուսաղէմ, լի երիտասարդական վառ-
վռուն զգացմունքներով: Բայց այն ժամանակ նա գնաց իբրև հա-
ւատացած քրիստոնեայ, իբրև ազատ ու խառնուր:

Իսկ այժմ.... Հեռու հայրենիքից, սիրած ժողովրդից, Երու-
սաղէմի վանքի մի փոքրիկ և նեղ խուցի մէջ նստած՝ Հայրիկ
մտածում է:

Նրա մտածողութեան առարկան իր ժողովուրդն է, իր սի-
րած երկիրը:

Ահա թէ ինչպէս է նկարագրում ականատեսներից մինը
Հայրիկի խուցը.

«Երուսաղէմի ս. Յակօբ եկեղեցու փոքրիկ բազի մէջ,
առաջին յարկի վրա՝ մի դռնակ կայ՝ փոքրիկ և նեղ:
Նախասենեակը խոնաւ և մութ մի խցիկ է, երկաթապատ
փոքրիկ լուսամտով. յատակի սառը քարի վրա նստած է մեղա-
մաղձոտ դէմքով՝ Հայրիկի պատահական մի սպասաւորը, որը
կրակարանի առաջ պզգամ՝ սուրճ է եփում: Ածուխի, սուրճի,
և խուցում պատսպարված մի քանի պանդխտների շնչառու-
թեան հոտը միմեանց խառնվելով՝ համարեա թոճաւորել է օդը:

«Այդ անտանելի խուցից մտնում է ուրիշ խուց: Պատու-
հանի մօտ մի կտորած սեռիկ և մի ժանգոտած պղնձէ աման

կայ.— Հայրիկի լուացարանն է: Մնացեալ մասը պանդխտների անկողինների համար է: Այդ խուցից էլ մի դուռ ասնում է դէպի Հայրիկի սրահը:

«Գա բնակարան չէ, այլ զընդան: Մի գետնայարկ խուց է, որ սրահ է կոչվում. ճիշդ գետնափոր գերեզմանի ձև ունի. երկայն և նեղ. երկու մետր լայնութիւն և երեք մետր երկայնութիւն ունի: Այդ խուցի մէջ, երեսկայեցէք, համարձակ չի կարող կանգնել պարթևահասակ խրիմեան, որովհետև զլուսը օճորքին կը դիպչի: Այդտեղ ուտում է, այդտեղ պարապում և այդտեղ էլ ընդունում է այն բազմաթիւ հիւրերին, որոնք ուխտ դառով Քրիստոսի գերեզմանին, վերջն էլ Հայրիկին են ուխտ դալիս:

«Այդ տարօրինակ սենեակը մի պատուհան ունի, որ նայում է պատրիարքարանի մարմարի օնի մուտքի վրա. աջ և ձախ կողմից փոքրիկ խալիչներով և բարձերով բազմոցներ կան. մինի վրա ինքն է նստում, միւսի վրա հիւրերը: Գրած է մի փոքրիկ սեղան, կանաչ կերպասով ծածկած, մօտն էլ մի աթոռ.— պարապելու աեղն է:

«Իսկ ննջարանը կամ անկողինը՝ փոքրիկ ու նեղ բազմոցն է, և դրա վրա է քնում Հայոց Հայրիկը...

Սակայն նեղ խուցը չէ խրիմեանին հալող մաշողը.— այլ հայրենի երկրի կարօտը, փողովրդի ցաւերը:

— Հայրենիքի կարօտը ինձ կը մաշէ, սիրտս պատուվում է, երբ մտածում եմ թէ՛ դուցէ մեռնեմ այս օտար երկրի մէջ՝ առանց հայրենիք տեսնելու.— ասում է յաճախ Հայրիկը, և մի փոքր լուելուց յետոյ՝ աւելացնում.

— Արծիւն ճնճողակի վանդակի մէջ սեղմեր են. աս ալ կանցնի....



« Ազգային գրադարան



NL0172973

40 40914